

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (29)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2019

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրություն՝	Միրզոյան Հրաչիկ (ի.գ.դ., պրոֆ.)
Գլխավոր խմբագիր՝	Ավետիսյան Լևոն (բ.գ.թ., դոց.)
Գլխ. խմբագրի տեղակալներ՝	Գոնչար Նատալիա (բ.գ.թ., դոց.)
Պատասխ. քարտուղար՝	Հովակիմյան Արմեն (բ.գ.թ.)
Պատասխ. խմբագիր՝	Գաբուզյան Արա (ի.գ.դ., պրոֆ.)

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յուրի (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.), Ավագյան Սուրեն (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.), Գևորգյան Կարեն (ի.գ.թ.), Դյուրան Բեռնարդ (Մոնպելյե, ի.գ.դ., պրոֆ.), Խաբրիևա Տալիա (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.), Կուրի Հելմուտ (Ֆրայբուրգ, ի.գ.դ., պրոֆ.), Հայկյանց Արմեն (ի.գ.դ., պրոֆ.), Հարությունյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ.), Ղազինյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մեղրյան Մերգեյ (ի.գ.թ., դոց.)

Редакция:	Мирзоян Грачик (д.флс.н., проф.)
Главный редактор:	Аветисян Левон (к.фил.н., доц.)
Зам. главного редактора:	Гончар Наталия (к.фил.н., доц.)
Ответственный секретарь:	Овакимян Армен (к.фил.н.)
Ответ. редактор:	Габузян Ара (д.юр.н., проф.)

Редакционная коллегия:

Авакьян Сурен (Москва, д.юр.н., проф.), Айкянц Армен (д.юр.н., проф.), Антонян Юрий (Москва, д.юр.н., проф.), Арутюнян Гагик (д.юр.н., проф.), Геворкян Карен (к.юр.н.), Дюран Бернард (Монпелье, д.юр.н., проф.), Казинян Гагик (д.юр.н., проф., академик НАН РА), Кури Хельмут (Фрайбург, д.юр.н., проф.), Мегрян Сергей (к.юр.н., доц.), Хабриева Талия (Москва, д.юр.н., проф.)

Edition:	Mirzoyan Hrachik (Sc. D. in Philosophy, Professor)
Editor-in-chief:	Avetisyan Levon (PhD in Philology, Associate Professor)
Deputy editor-in-chief:	Gonchar Natalya (PhD in Philology, Associate Professor)
Executive Secretary:	Hovakimyan Armen (PhD in Philology)
Managing Editor:	Gabuzyan Ara (Sc. D. in Legal Sciences, Professor)

Editorial Board:

Antonyan Yuri (Moscow, Sc. D. in Legal Sciences, Professor), Avagyan Suren (Moscow, Sc. D. in Legal Sciences, Professor), Duran Bernard (Montpellier, Sc. D. in Legal Sciences, Professor), Gevorgyan Karen (PhD in Legal Sciences), Ghazinyan Gagik (Sc. D. in Legal Sciences, Professor, Academician of NAS RA), Harutyunyan Gagik (Sc. D. in Legal Sciences, Professor), Haykyants Armen (Sc. D. in Legal Sciences, Professor), Khabrieva Talia (Moscow, Sc. D. in Legal Sciences, Professor), Kury Helmut (Freiburg, Sc. D. in Legal Sciences, Professor), Meghryan Sergey (PhD in Legal Sciences, Associate Professor)

© Բանբեր Երևանի համալսարանի *Вестник Ереванского университета *Bulletin of Yerevan University

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԺՈՂՈՎՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՏԼՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՀ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴՐԱՆՑ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է կարևորագույն դրույթ, որի նշանակությունը քաղաքագիտության և իրավագիտության մեջ իրական իմաստով դեռևս չունի և՛ տառացի, և՛ ոգու տեսանկյունից ճշգրիտ գնահատականը: «Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Այս դրույթով ՀՀ Սահմանադրությունը հանցագործություն է ճանաչում գործողությունները, որոնք հանգեցրել են իշխանության յուրացման: Որպեսզի կարողանանք ճիշտ բացահայտել այս դրույթի իրավական իմաստը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում, փորձենք կատարել հետազոտական հետևյալ հերթականությամբ քայլերը. ձևական-իրավական, համակարգային, համեմատական վերլուծության ու մեկնաբանման ենթարկենք այդ դրույթը, վեր հանենք դրա մեկնաբանման վարկածները ՀՀ, ինչպես նաև նման սահմանադրական դրույթ ունեցող երկրների սահմանադրական իրավունքի տեսության մեջ, իրականացնենք այդ դրույթի՝ որպես իրավական վարքագծի իրավաբանական կազմի տարրերի վերլուծություն և բովանդակության բացահայտում և այդպիսով պարզենք այդ դրույթի ճշմարիտ նշանակությունը ՀՀ իրավական կարգավորման կառուցակարգի նորմատիվ ենթահամակարգում:

«Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է» սահմանադրական դրույթի իրավական բուն իմաստը հասկանալու համար նախ հստակեցնենք դրանում օգտագործված որոշ եզրույթների՝ իշխանության և յուրացման իրավական բովանդակությունը: «Հանցագործություն» և «կազմակերպություն» եզրույթները չենք մեկնաբանի, չենք ենթարկի, քանզի դրանք գրեթե հանրաճանաչ են: Այդ պատճառով վերլուծության ընթացքում կհիմնվենք իրավաբանական բառարաններում եղած դրանց բնորոշումների վրա¹, թեև պետք է նկատի ունենալ, որ «կազմակերպություն» հասկա-

¹ Հանցագործությունը մեղավորությամբ կատարված, պատժի սպառնալիքով օրենքով արգելված, հանրորեն վտանգավոր արարք է, որի հիմնական հատկանիշներն են՝ հակաիրավականությունը, հանրության համար վտանգավորությունը, արտաքին արտահայտությունը (արարք է), պարունակում է օրենքով սահմանված հանցակազմի (օբյեկտ, սուբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտիվ կողմ) հատկանիշները (տե՛ս Краткий юридический словарь / Под ред. А. Н. Азрилияна. М.: Институт новой экономики. 2005, էջ 696):

ցությունը չի ներառում խումբը, հետևաբար՝ սահմանադրական դրույթը պետք է ենթարկել տարածական մեկնաբանման:

«Իշխանությունն» արդի հասարակագիտության ամենաբարդ, բազմանշանակ հասկացություններից է²: Մակայն այս դեպքում մենք ունենք դրա կիրառման կոնկրետ տիրույթ՝ սահմանադրական հարաբերությունների իրավական կարգավորում Սահմանադրության միջոցով:

Ընդհանրապես իշխանությունը ունակություն կառավարելու, իրեն ենթարկելու ու հնարավորություն է, և «ցանկացած իշխանություն ենթադրում է օբյեկտ և սուբյեկտ՝ կառավարողներ ու կառավարվողներ»³: Այս պարագայում մենք գործ ունենք Սահմանադրությամբ հիմնադրված, ճանաչված ժողովրդի իշխանության հետ: Ժողովրդի իշխանությունը նրա ունակությունն ու հնարավորությունն է լուծելու հանրային գործերը, իսկ դրա լուծման ձևերն են անմիջական և միջնորդավորված եղանակները: Այսպիսով, Սահմանադրությունը ժողովրդի միասնական իշխանությունը տրոհում է իրականացման երկու տեսակի՝ ժողովրդի անմիջական իշխանություն (ինքնակառավարում) և պետական (հանրային) իշխանություն: Հետևաբար, Սահմանադրության հոդված 2-ի 3-րդ մասում օգտագործված «իշխանություն» եզրույթն ընդհանուր է և վերաբերում է ինչպես ժողովրդին պատկանող իշխանությանը և դրա իրականացման իրավագործություններին, այնպես էլ իշխանությունների բաժանման սկզբունքով գործող հանրային-իրավական մարմինների՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավասությանը, լիազորություններին ու պարտականություններին: Տրամաբանական եզրակացությունը հետևյալն է. Սահմանադրությունը հանրային իշխանության իրականացումը վստահել է ժողովրդին (դրա ձևերն են ընտրությունները և հանրաքվեն), ինչպես նաև՝ հանրային մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ ըստ իրենց սահմանադրական իրավասության: Հետևաբար, իշխանությունը կրողների (սուբյեկտների) սահմանադրական այդ շրջանակից դուրս գտնվող բոլոր անհատները և կազմակերպությունները պարտավոր են հարգել սահմանադրական կարգը, չխախտել, ըստ Սահմանադրության տեքստի՝ «չյուրացնել»: Յուրացումը հանցագործություն է:

Տրամաբանորեն ստացվում է հետևյալ դատողությունը. ինչ-որ բան անելու հնարավորությունը (իրավագործությունը) վերապահված է Ա սուբյեկտին և միայն նրան: Մնացած բոլոր սուբյեկտները պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնց կենսագործման հետևանքը կարող է լինել Ա.-ին պատկանող ի-

² Իշխանության մասին գիտության բազմակողմանի, ծավալուն, հիմնարար, ամբողջական վերլուծությունը տե՛ս **Халипов В. Ф.** Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005:

³ **Мухаев Р. Т.** Теория политики. М.: Юнити–Дана, 2005, с. 192.

րավագորության բովանդակության իրացումը: Այն, ինչ վերապահված չէ քեզ Սահմանադրությամբ, դու իրավունք չունես անելու, հակառակը հանցագործություն է: Բայց այն, ինչ վերապահված է Ա.-ին, ուրիշները կարող են իրենց վերագրել կամ իրականացնել բազմազան ձևերով (արարքներով): Այդ իրականացումը կարող է լինել օրինական և ապօրինի: Ապօրինի են, օրինակ, բռնությամբ (կամ առանց դրա) զավթումը, առանց օրինական հիմքերի զուգահեռաբար իրականացումը և այլն: Սահմանադրությունն այդ արարք-ձևերից շեշտադրում է միայն «յուրացումը»: «Ի՞նչ է այն իրավաբանական իմաստով» հարցադրմանը պատասխանելու համար դիմենք սահմանադրական իրավունքի տեսությանը, որն արդեն դրա վերաբերյալ ունի որոշակի վերլուծություններ: Սակայն մինչ այդ ընդհանուր կողմնորոշման համար դիմենք հանրաճանաչ միջոցի՝ բացատրական բառարաններից մեկի օգնությամբ: «Յուրացնել» բառի իմաստներից մեկն է՝ «դարձնել իրենը, սեփականել, հափշտակել»⁴: Այս հանրաճանաչ բացատրությունից բխում է, որ յուրացումը ուրիշին պատկանող ինչ-որ բանի հափշտակումն է, այսինքն՝ ապօրինի տիրանալը:

1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո ՀՀ-ում հրատարակված իրավաբանական աշխատություններից մեկում «Իշխանության յուրացում» սահմանադրական հասկացության մեկնաբանման վարկածը բառացիորեն հետևյալն է. «Ժողովրդին պատկանող իշխանությունը կարող է յուրացվել տարբեր ձևերով: Առավել տարածված ձևերից մեկը պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իր **լիազորությունների շրջանակից դուրս գալն** է և օրենքով չնախատեսված կամ ապօրինի գործողություններ կատարելը: Առավել վտանգավոր է որևէ կազմակերպության կամ անհատի կողմից ձեռնարկված հակասահմանադրական ճանապարհով **իշխանության զավթումը**, զանգվածային իրավախախտումների կամ դավադրության կազմակերպման միջոցով»⁵: Մեկնաբանման այս վարկածի առանձնահատկություններն են՝ ա) յուրացվում է ժողովրդի իշխանությունը, բ) ժողովրդին պատկանող իշխանության յուրացումն ունի տարբեր ձևեր, գ) ձևերից մեկը պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակից դուրս գալն է, այսպես կոչված՝ սահմանազանցումը, մյուսը հակասահմանադրական ճանապարհով զավթումն է երկու եղանակով՝ զանգվածային իրավախախտումների կամ դավադրության միջոցով: Այդ նույն աշխատության մեջ մեկ այլ հեղինակ նշում է, որ Սահմանադրության հոդված 2-ի դրույթը ներառում է

⁴ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, 3-Ֆ, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1980, էջ 5:

⁵ **Վլադիմիր Նազարյան**, ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի մեկնաբանություններ // **Ա. Վ. Բաղդասարյան**, 117 հարց ու պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին, Եր., 1995, էջ 80:

իշխանության զուգահեռ մարմինների ստեղծման արգելքը⁶:

Այս տեսակետների առանձնահատկությունն այն է, որ «յուրացումը» դիտվում է որպես տարողունակ հասկացություն, ունի իրականացման զանազան ձևեր՝ սահմանազանցում, զավթում (երկու եղանակով՝ դավադրություն, զանգվածային իրավախախտումներ), իշխանության զուգահեռ մարմինների ստեղծում, և վերջապես՝ յուրացվում է ժողովրդի իշխանությունը: Տեսակետը հետաքրքիր է այնքանով, որ դրա հեղինակները 1995 թ. Սահմանադրության նախագծի մշակման հանձնաժողովի անդամներ էին, ինչը շատ կարևոր հանգամանք է, որի մասին կյսուենք ստորև:

Մեկ այլ հեղինակ քննարկվող հոդվածի շուրջ արտահայտել է հետևյալ մտքերը. «Ժողովրդի ոչ մի մաս, կազմակերպություն կամ անհատ իրավունք չունի իշխանությունը բռնատիրել: ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է, որ իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է, իշխանության զուգահեռ մարմինների ստեղծումն արգելվում է»⁷: Այս արտահայտության մեջ չկան տրամաբանական դասակարգում, եզրույթների ընդգրկման տիրույթների ստորակարգություն: Մտքի շարադրման լեզվական ու տրամաբանական կապերից կարելի է եզրակացնել, որ հնարավոր խախտումների տեսակներ են բռնատիրումը, յուրացումը, զուգահեռումը: Այս վարկածը «յուրացման» սուբյեկտների մեջ ավելացնում է ժողովրդի մի մասին, այսինքն՝ մարդկանց խմբին: Դրա ռացիոնալությունն այն է, որ կազմակերպությունը և խումբն իրարից տարբերվող հասարակական սուբյեկտներ են:

Որոշ հեղինակներ շրջանցում են քննարկվող սահմանադրական դրույթի մեկնաբանությունը⁸, իսկ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեկնաբանմանը նվիրված հիմնարար աշխատությունը շատ թռուցիկ անդրադարձ է կատարել այդ հարցին⁹: Այս դիրքորոշ-

⁶ Տե՛ս **Հ. Խաչատրյան**, Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն // **Ա. Վ. Բաղդասարյան**, 117 հարց ու պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին, էջ 21, ինչպես նաև **Հ. Մ. Խաչատրյան**, Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը // ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստ., Եր., ՀՀ ԳԱԱ «գիտություն» հրատ., 1997, էջ 36:

⁷ «Ժողովրդավարություն», Եր., Մխիթար Գոշ, 1998, էջ 54: Սահմանադրության 2-րդ հոդ. 3-րդ մասը նույն տրամաբանությամբ է ներկայացված նաև **Հենրիկ Աբրահամյան**, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները: Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 22:

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», Եր., ԵՊՀ հրատ., 2003, էջ 129, ինչպես նաև՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», գիրք առաջին, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջ 128-134, 150-161, նաև՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը», Եր., Տիգրան Մեծ, 2016, էջ 24:

⁹ «Իշխանության գալու միակ օրինական և հնարավոր ձևն ազատ և արդար ընտրություններն են՝ որպես ժողովրդի կամքի իսկական և միակ դրսևորում, այլ կերպ իշ-

ման մեջ «իշխանության նվաճումը և յուրացումը» բանաձևը «և» շաղկապի օգտագործմամբ ենթադրում է նախ՝ դրա նվաճում, այնուհետև՝ յուրացում:

ՀՀ Սահմանադրության հոդված 2-ի 3-րդ մասի վերաբերյալ վերը բերված մեկնաբանական վարկածների վերլուծությունը հաստատեց, որ խնդիրը բավականին խճճված է, չկա եզրութաբանական հստակություն (խախտումների եղանակները, ձևերը մի դեպքում համադաս են, մի դեպքում՝ ստորադաս): Առաջանում է հարցադրում. ո՞րն է այդ անհստակության պատճառը՝ ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործված «յուրացում» հասկացությունը, մեկնաբանող հեղինակների տրամաբանական և գիտական անհետևողականությունը, թե՛ կա այլ պատճառ: Այս հարցերին պատասխանելու, քննարկվող հարցում տեսական և դրանից հետևող գործնական-իրավական հստակության հասնելու համար փորձենք ամփոփել ժողովրդաիշխանության դեմ ունեցվածությունների սահմանադրական կարգավորման պրակտիկական ազատական սահմանադրական կարգավորման տիպ ունեցող մի շարք երկրներում: Մա շատ կարևոր հանգամանք է հարցի մեկնաբանման ճիշտ վարկած կառուցելու համար:

Այլ երկրների փորձի այս տեսանկյունից ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ Սահմանադրության համանմանությամբ ժողովրդաիշխանության վերաբերյալ առանձնացված դրույթ ունեն հիմնականում XX դ. վերջի Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական, ինչպես նաև հետխորհրդային հանրապետությունների սահմանադրությունները: Այդ պատճառով նախ անդրադառնանք այս խմբի երկրների անկախացումից հետո ընդունված սահմանադրությունների վերլուծությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության հոդված 2-ի ակունքները գալիս են 1995 թ. խմբագրությունից:

ՀՀ Սահմանադրության անփոփոխելի հոդված 2-ի 3-րդ մասին գրեթե նույնական ձևակերպում-դրույթներ ունեն Ադրբեջանը¹⁰, Ղազախստանը¹¹, Թուրքմենստանը¹², Ուկրաինան¹³: Այս խմբի երկրներին

խանության նվաճումը և յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից համարվում են հանցագործություն: Ժողովուրդն իրավունք ունի ցուցաբերել քաղաքացիական անհնազանդություն բռնատիրական, ոչ օրինական իշխանության դեմ» («Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»/ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Եր., Իրավունք, 2010, էջ 62):

¹⁰ Ադրբեջանի Սահմանադրությունն ունի հատուկ հոդված՝ «Իշխանության յուրացման անթույլատրելիությունը (հոդված 6), որով սահմանվում է, որ Ադրբեջանի ժողովրդի ոչ մի մաս, ոչ մի սոցիալական խումբ կամ կազմակերպություն, ոչ մի անձ չեն կարող յուրացնել իշխանության իրականացման լիազորությունները: Իշխանության յուրացումը ժողովրդի դեմ ուղղված ծանր հանցագործություն է» (Конституция Азербайджанской Республики //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г. Н. Андреева. М.: Юристъ, 1999, с. 25):

¹¹ Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությունը 3-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրում է, որ «ոչ ոք չի կարող յուրացնել իշխանությունը Ղազախստանի Հանրապետությունում: Իշխանության յուրացումը հետապնդվում է օրենքով» (Консти-

բնորոշ է ստանդարտ, համառոտ ձևակերպումը, այն է՝ «յուրացման արգելքը», բացառությամբ Ուկրաինայի, որն օգտագործում է «ուզուրպացիա» եզրույթը: Այս երկրների քննարկվող դրույթի ձևակերպման միակ տարբերությունը յուրացման սուբյեկտների ամրագրման մեջ է: Կան երկրներ, որոնք ընտրել են վերացական ձևակերպում՝ «ոչ ոք», իսկ մյուսները դիմել են թվարկման՝ «անհատ կամ կազմակերպություն», «ժողովրդի մաս կամ կազմակերպություն կամ անհատ»: Ադրբեջանն այս շրջանակին ավելացրել է «սոցիալական խումբը»՝ որպես յուրացման սուբյեկտ:

Վերը նշվածներից տարբերվում են Ռուսաստանի, Ուզբեկստանի, Լիտվայի, Վրաստանի, Բելառուսի Սահմանադրությունները: Դրանցում օգտագործվում են շարադրման լրիվ այլ տեխնիկա և եզրութաբանություն: Դրանց Սահմանադրությունների ձևակերպումներն աչքի են ընկնում հստակությամբ (մանրամասնեցման միջոցով), խախտումների կամ ոտնձգությունների դրսևորման ձևերի և եղանակների տարբերակմամբ, ինչի շնորհիվ դրանք ավելի շատ են համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Ընդ որում, այս երկրների Սահմանադրությունների քննարկվելիք դրույթներն իրարից տարբերվող են, յուրահատուկ:

ՌԴ 1993 թ. Սահմանադրության 3-րդ հոդվածի 4-րդ մասն ազդարարում է. ոչ ոք չի կարող յուրացնել (присвоивать) իշխանությունը Ռուսաստանի Դաշնությունում: Իշխանության նվաճումը կամ իշխանական լիազորությունների յուրացումը հետապնդվում է դաշնային օրենքով¹⁴: Այս ձևակերպման մեջ տարբերվում են իշխանության դեմ ոտնձգության երկու եղանակ՝ «յուրացում», «բռնի նվաճում»: Դա էլ իր հերթին կարող է լինել «ամբողջ իշխանության» կամ «իշխանական լիազորությունների» յուրացում: ՌԴ Սահմանադրությունը չի որոշակիացրել արարքի սուբյեկտների շրջանակը: Սուբյեկտ կարող են լինել բոլորը, ինչը ճիշտ ձևակերպում է, որովհետև, օրինակ՝ ՀՀ Սահմանադրությունը բաց է թողել «խումբը» կամ «ժողովրդի մի հատվածը» ձևակերպումները, որոնք ակնհայտորեն կազմակերպություն չեն: ՌԴ Սահմանադրության մեջ ամենահետաքրքիրը «յուրացման» և «նվաճման» համադասային տարբերակումն է:

туция Республики Казахстан // Конституции стран СНГ и Балтии. М.: Юристъ, 1999, ст. 15, с. 102):

¹² Թուրքմենստանի Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Ժողովրդի ոչ մի մաս, կազմակերպություն կամ առանձին անհատ իրավունք չունի յուրացնել իշխանությունը պետության մեջ (տե՛ս u Конституция Туркменистана // Конституции стран СНГ и Балтии, 1999, с. 412):

¹³ Ուկրաինայի Սահմանադրությունը սահմանում է, որ «ոչ ոք չի կարող ուզուրպացնել պետական իշխանությունը» (Конституция Республики Украина // Конституции стран СНГ и Балтии, с. 474):

¹⁴ Տե՛ս u Конституция Российской Федерации // Конституции стран СНГ и Балтии, с. 338:

Իր շարադրման ոճով և տեխնիկայով ՌԴ Սահմանադրությանը նման է Վրաստանի 1995 թ. Սահմանադրության հոդված 5-ի 3-րդ մասում ամրագրված դրույթը. «Ոչ ոք իրավունք չունի ուզուրպացնել կամ ապօրինի նվաճել պետական իշխանությունը»¹⁵: Հետևաբար, այն ունի իմաստային և ձևական-տրամաբանական նույն դրական կողմերը, ինչ ՌԴ Սահմանադրության համապատասխան դրույթը: Միակ անհետևողականությունն այն է, որ հոդվածը վերաբերում է պետական իշխանությանը, իսկ ՌԴ-ինը՝ ընդհանրապես իշխանությանը: Սակայն այս երկրների սահմանադրությունների քննարկվող դրույթների համեմատությունից երևում է, որ ռուսական «присвоение»-ն համարժեք է Վրաստանի Սահմանադրության օգտագործած «ուզուրպացնելուն», ինչի մանրամասները կքննարկենք ստորև:

Բելառուսի Հանրապետության Սահմանադրության հոդված 3-ի 2-րդ մասով սահմանվում է «Ցանկացած գործողություն՝ ուղղված սահմանադրական կարգի փոփոխմանը բռնի մեթոդներով, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության օրենքների խախտման այլ ճանապարհով պետական իշխանության հասնելուն՝ պատժվում է օրենքին համապատասխան»¹⁶: Ակնհայտ է արարքների շրջանակի վերացականտարբերակված շարադրանքը, որն ապահովելու է կիրառման հստակություն և որոշակիություն: Սակայն այս դրույթը հատուկ չենք վերլուծի, որովհետև այն էականորեն տարբերվում է մեր համապատասխան դրույթից:

Ուզբեկստանի Սահմանադրությունը սահմանում է. «Պետական իշխանության լիազորությունների յուրացումը, իշխանության մարմինների գործունեության կասեցումը կամ դադարեցումը Սահմանադրությամբ չնախատեսված կարգով, իշխանության նոր և զուգահեռ մարմինների ստեղծումը համարվում են հակասահմանադրական և հանգեցնում են ըստ օրենքի պատասխանատվության»¹⁷: Ուզբեկստանի իրավական կարգավորումն աչքի է ընկնում իր յուրահատկությամբ. այն նշում է խախտման մի շարք ձևեր-արարքներ՝ **յուրացում, կասեցում, դադարեցում, զուգահեռ իրականացում, նոր մարմինների ստեղծում**: Նման կարգավորումը որոշակի է և նախադրյալ սահմանադրական ճիշտ հիմքերով հանցագործություններ սահմանելու համար, կարգավորման այդ տեսլականը նաև հաստատում է, որ յուրացումը չի կարող ներառել մնացած ձևերը:

Հարցի ամենահետաքրքիր և լավագույն լուծումը տրված է Լիտվայի Սահմանադրությունում¹⁸: Որպեսզի հասկանալի լինեն հետագա

¹⁵ Конституция Грузии // Конституции стран СНГ и Балтии, с. 116.

¹⁶ Конституция Республики Беларусь // Конституции стран СНГ и Балтии, с. 118.

¹⁷ Конституция Республики Узбекистан // Конституции стран СНГ и Балтии, с. 441.

¹⁸ Էստոնիայի Սահմանադրությունը յուրացման կամ նվաճման արգելքներ չի սահմանում, հետևաբար այն հատուկ քննարկման առարկա չենք դարձնի (տե՛ս Конституция Эстонской Республики // Конституции стран СНГ и Балтии, էջ 598-632):

վերլուծությունները, թվարկում ենք դրա 2-րդ, 3-րդ, 8-րդ հոդվածների որոշ մասեր՝ տրամաբանական հերթականությամբ. «*Լիտվական պետությունը ստեղծվում է ժողովրդով: Ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին: Ոչ ոք չի կարող նսեմացնել կամ սահմանափակել ժողովրդի իշխանությունը, յուրացնել ինքնիշխան կամքը, որ պատկանում է ամբողջ ժողովրդին: Պետական իշխանության կամ դրա ինստիտուտների նվաճումը բռնի ճանապարհով համարվում է հակասահմանադրական գործողություն, անօրինական ու անվավեր*»¹⁹: Ինչպես տեսնում ենք, ժողովրդի իշխանության դեմ ոտնձգության ձևեր են նսեմացումը, սահմանափակումը, յուրացումը, բռնի նվաճումը:

Արևմտյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները, լինելով XX դարի կեսերին ընդունված, ինչպես նաև իրենց իրավաբանական տեխնիկայի ազգային կանոններին ու ավանդույթներին համապատասխան շարադրված հիմնական օրենքներ, շատ դեպքերում չեն պարունակում մեզ հետաքրքրող ժողովրդաիշխանության պաշտպանության, մասնավորապես՝ իշխանության նվաճման կամ յուրացման վերաբերյալ դրույթներ: Օրինակ կարող են ծառայել Շվեյցարիայի, Իտալիայի, Գերմանիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի, Բրազիլիայի, Ճապոնիայի սահմանադրությունները: Այս առումով աչքի է ընկնում Ֆրանսիայի Սահմանադրությունը, որի հոդված 3-ի 1-ին մասը սահմանում է, որ ազգային ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին, որն իրականացվում է ներկայացուցիչների միջոցով և հանրաքվեի ճանապարհով: Հոդվածի 2-րդ մասը հայտարարում է. ժողովրդի ոչ մի հատված, ոչ մի առանձին անհատ չեն կարող յուրացնել (ֆրանսերեն «s'en attribuer») դրա իրականացումը²⁰: Բացի այդ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը (1789 թ.) սահմանում է. «Իշխանության աղբյուրը ազգի էության մեջ է: Ոչ մի կազմակերպություն, ոչ մի անհատ չեն կարող ունենալ իշխանություն, որն ակնհայտորեն չի ելնում այդ աղբյուրից»²¹: Ֆրանսիայի Հանարպետության սկզբունքն է՝ «Ժողովրդի կառավարում, ժողովրդով և ժողովրդի համար»:

Ֆրանսերեն «s'en attribuer» բառը հայերենում թարգմանվում է «իրեն վերագրել», «իրեն վերապահել», «յուրացնել»²²: Այս բառը Ֆրանսիայի Սահմանադրության անգլերեն տեքստում թարգմանված է «arrogate»²³, որը հայերեն նշանակում է վերցնել, գրավել, խլել, անհիմն կերպով վերագրել կամ պահանջել²⁴: «S'en attribuer» բառը ուսերեն

¹⁹ Конституция Литовской Республики // Конституции стран СНГ и Балтии, с. 554-556.

²⁰ St' u www.assemblee-nationale.fr/connaissance/constitution.asp#titre_1

²¹ Декларация прав человека и гражданина от 26 августа 1789 г. // **Графский В. Г.** Всеобщая история права и государства. М.: Норма (издательская группа НОРМА-ИНФРА.М) 2001, с. 456-460.

²² St' u <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=106&query=attribuer>

²³ St' u France's Constitution of 1958 with Amendments through 2008; https://www.constituteproject.org/constitution/France_2008.pdf?lang=en

²⁴ St' u <https://hy.glosbe.com/en/hy/arrogate>; <https://hy.m.wiktionary.org/wiki/arrogate>

թարգմանվում է «присвоивать», «дерзко претендовать»: Ֆրանսիայի Սահմանադրության ռուսերեն տեքստում «s'en attribuer»-ն թարգմանված է «присвоивать»:

Կատարված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տեսական բազմազանությունը և խայտաբղետությունը պայմանավորված են տարբեր երկրներում հիմնահարցի կարգավորման նորմատիվ բովանդակության զանազանությամբ, և՛ սահմանադրական եզրույթներին, և՛ տեսական դատողությունների փոխառման կամ թարգմանության ժամանակ թույլ տրված անհետևողականությամբ: Այստեղից բխում է, որ անհրաժեշտ է կատարել խորքային ուսումնասիրություն, վեր հանել հայերեն «յուրացում», ֆրանսերեն «s'en attribuer», ռուսերեն «присвоение», ինչպես նաև լատիներեն «usurpatio» եզրույթների իրավական իմաստը, դրանց հարաբերակցությունը և գտնել ՀՀ Սահմանադրության հոդված 2-ի 3-րդ մասում ամրագրված դրույթը հասկանալու առավել ճշգրիտ վարկածը, որը բխում է մեր երկրի իրավական համակարգի, իրավական եզրույթների էությունից, ինչպես նաև իրավական կարգավորման համապարփակության ու ամոզականության պահանջից:

Այսպիսով կարող ենք փաստել, որ ՀՀ Սահմանադրության հոդված 2-ի 3-րդ մասը փոխառված է Ֆրանսիայի Սահմանադրության հոդված 3-ի 2-րդ մասից, իսկ ֆրանսերեն «s'en attribuer» եզրույթը հայերենով թարգմանված է «յուրացում», հետևաբար անհրաժեշտ է հասկանալ այդ եզրույթի բոլոր հնարավոր իմաստները: «Յուրացում» եզրույթը քաղաքացիական իրավունքի իրավաբանական բառարանները բացատրում են «ինչ-որ բանի տիրանալ, ինչ-որ բանը դարձնել սեփականություն» իմաստով²⁵: Սակայն իրավական բառարանների գերակշիռ մասը վկայակոչում է «յուրացման» քրեաիրավական իմաստը՝ որպես ուրիշի գույքի դեմ ուղղված ոտնձգություն, հանցանք: «Ուրիշի գույքի յուրացումը հափշտակության ձև է, որ օբյեկտիվ կողմից բնութագրվում է մեղավորին վստահված ուրիշի գույքն անիրավաչափ վերցնելով և պահելով»²⁶: Մեկ այլ տարբերակում յուրացումը համարվում է քրեաիրավական ոլորտի հասկացություն, սեփականության դեմ ուղղված հանցագործություն, որը մատնանշում է մեղավորին վստահված, սակայն ուրիշին պատկանող գույքի հափշտակումը: Օբյեկտիվ կողմից յուրացումը որոշակի նպատակներով մեղավորին վստահված ուրիշի գույքն անիրավաչափ պահելն է, չվերադարձնելը: Երբ մեղավորն օտարում և սպառում է այդ գույքը, ապա սա նոր հանցակազմ է, որը կոչվում է «վատնում»²⁷: Յուրացումը և վատնումը որպես հափշ-

²⁵ Ст' у Краткий юридический словарь / Под ред. А. Н. Азрилияна. М.: Институт новой экономики, 2005, էջ 764-765:

²⁶ Նույն տեղում, էջ 765:

²⁷ Երբեմն քրեական իրավունքի տեսության մեջ վատնումը համարվում է յուրացման մասնավոր դեպք (տե՛ս Большая юридическая энциклопедия. Автор и составитель А. Б. Барихин (Серия «Профессиональные справочники и энциклопедии»). М.: Книжный

տակության եղանակներ նույն կերպ են հասկացվում ՀՀ քրեական իրավունքի տեսության մեջ, համաձայն որի՝ յուրացումը օբյեկտիվ կողմից դրսևորվում է նրանում, որ հանցավորը, օգտագործելով իրեն վստահված գույքի նկատմամբ ունեցած լիազորությունները, ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով դարձնում է այն իրենը կամ ուրիշինը²⁸:

«Յուրացում» հասկացության զանազան մեկնաբանություններից (քաղաքացիական, քրեական, ընդհանուր լեզվական) անհրաժեշտ է, որպես մեկնակետ, կանգ առնել քրեականի վրա, փորձել դրանով հասկանալ Սահմանադրության դրույթի բառային նշանակությունը, ինչպես նաև նորմատիվ բովանդակությունը: Մեկնաբանման այս մեթոդի ընտրությունը թելադրում է Սահմանադրությունը՝ իշխանության յուրացումը համարելով հանցագործություն: Սահմանադրական դրույթի մեկնաբանման այս տարբերակի օգտին են խոսում նաև սահմանադրագիտական ուղղվածություն ունեցող հանրագիտարանային բառարանները: Օրինակ՝ «Իշխանության յուրացումն անձի կամ մարմնի կողմից իշխանական լիազորությունների իրականացումն է, որոնք նրան չեն վերագրված, վստահված Սահմանադրությամբ կամ օրենքով»²⁹: Մ. Բագլայը, այս միտքը շարունակելով, եզրակացնում է, որ եթե տեղի է ունենում իշխանական լիազորությունների իրականացման կարգի և պայմանների կոպիտ ոտնձգություն, ամբողջ պետական իշխանության կոպիտ նվաճում բռնությամբ, հրաժարում կառավարման սահմանադրական ձևերից, անձնական իշխանության համակարգի (դիկտատուրայի) հաստատում, իշխանության յուրացումը ձեռք է բերում իշխանության ուզուրպացիայի բնույթ:

Հեղինակի այս մտքերի մեջ համաձայն ենք «յուրացման» և «ուզուրպացիայի» տարբերակմանը վերաբերող դատողությանը, սակայն որ ուզուրպացիան յուրացման տարբերակ է, տրամաբանորեն հակասում է հենց թեկուզ ՌԴ Սահմանադրության «յուրացման» և «բռնագավթման» տարբերակմանը³⁰: Վերևում տեսանք, որ այդպիսի հստակ

мир, 2010, էջ 680:

²⁸ Տե՛ս «Հայաստանի Հնարապետության քրեական իրավունք: Հատուկ մաս», Եր., Երևանի համալս. հրատ., 2004, էջ 370-371:

²⁹ Арутюнян Г. Г., Баглай М. В. Конституционное право: Энциклопедический словарь. М.: Норма, 2006 (Словари для юристов-профессионалов), с. 380 (544).

³⁰ Որ այս հեղինակների մոտեցումն անհետևողական է, ցույց տանք մի օրինակով: Այսպես, նրանք արձանագրում են, որ «իշխանության ուզուրպացիան արգելված է մի շարք երկրների սահմանադրություններում՝ մատնանշելով Հունգարիայի Սահմանադրությունը (§2): Սակայն վերջինս չի օգտագործում «ուզուրպացիա» եզրույթը: Դրա հողված 2-ի 3-րդ մասի համաձայն՝ «Հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների կամ առանձին քաղաքացիների ոչ մի գործունեություն չի կարող ուղղվել հանրային իշխանության բռնի նվաճմանը կամ իրականացմանը՝ որպես այդպիսի իշխանության բացառիկ տիրապետում: Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված շրջանակներում ունի իրավունք և պարտականություն հակազդելու նման ակտերին» (Конституция Венгерской Республики // Конституции зарубежных стран. М.:

տարբերակում կար նաև մի շարք այլ երկրների սահմանադրություններում:

«Usurpator» լատիներեն տերմինը նշանակում է անձ, որն ապօրինի նվաճում է իշխանությունը կամ յուրացնում է ինչ-որ բանի նկատմամբ ուրիշի իրավունքները³¹: Այսպիսով «իշխանության յուրացումը հանցագործություն է» սահմանադրական դատողությունը տրամաբանորեն ենթադրում է. ա) սուբյեկտ, որը կատարել է յուրացումը, և անպայման նրա առնչությունն իշխանության հետ, բ) յուրացման առարկա՝ «յուրացվող իշխանություն», գ) յուրացմանն ուղղված արարք(ներ):

Եթե սուբյեկտը դուրս է իշխանական համակարգից, ապա նրա հակաիշխանական արարքները չեն կարող լինել յուրացում: Բացի այդ, եթե սուբյեկտը, նույնիսկ լինելով իշխանության համակարգում, դիմել է բռնության, ապա այդ արարքների համար քրեական օրենսգիրքը նախատեսել է օբյեկտիվ կողմից իրարից տարբերվող պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված գործողությունները, պետական իշխանությունը բռնությամբ պահելուն ուղղված գործողությունները, ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն ուղղված գործողությունները, ՀՀ տարածքային ամբողջականությունը բռնությամբ խախտելուն ուղղված գործողությունները:

Հետևաբար սուբյեկտը պետք է գտնվի իշխանության համակարգում, դրա ներսում, այսինքն՝ նրան վստահված է իշխանություն՝ «ժողովրդի, պետության մարմնի», նա մասնակից է իշխանական հարաբերություններին, նրան վստահված է իշխանական լիազորությունների իրականացումը: Յուրացման առարկան կարող է լինել, ըստ Սահմանադրության հոդված 2-ի, ժողովրդին պատկանող իշխանությունը, պետական իշխանությունը, այսինքն՝ Սահմանադրությամբ սահմանված իշխանական լիազորություններն իրեն վերագրելը և իրականացնելը: Սակայն այս դեպքի համար քրեական օրենսգիրքը նախատեսել է պաշտոնեական լիազորություններն անցնելը՝ որպես հանցագործություն: Օրենսգրքի 309 հոդվածը նախատեսում է այդ հանցակազմի սովորական և ծանրացուցիչ տարբերակները: Սովորական, երբ պաշտոնատար անձը դիտավորությամբ այնպիսի գործողություններ է կատարում, որոնք ակնհայտորեն դուրս են նրա լիազորությունների շրջանակից: Որակյալ կազմը ներառում է նույն արարքը՝ ա) զուգորդված բռնություն, զենք կամ հատուկ միջոցների գործադրմամբ, բ) որն անզուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Տրամաբանորեն բաց է մնում ժողովրդին պատկանող իշխանության յուրացումն իշխանական համակարգի ներսում գտնվող անձի (կամ անձանց) կողմից: Դրա ձևը պարտադիր չէ, որ ձեռք բերի բռնության եղանակ կամ ժողովրդին պատկանող իշխանության իրականաց-

«Юрлитинформ», 2008, с. 380):

³¹ См. u Краткий юридический словарь, էջ 1000:

ման որևէ անմիջական ձևի բացահայտ յուրացում: Անմիջական որոշ ձևեր կարող են յուրացվել, բայց դա կարող է արվել շատ ակնհայտ գործողություններով, հետևաբար այն կվերաձվի բռնության:

Սահմանադրագետ Մ. Բագլայը գտնում է, որ ժողովրդի ինքնիշխանության սպառնալիքները կարող են լինել նաև գաղտնի³²: Եթե առաջնային մանդատ ունեցող նախագահը և նրան շրջապատող իշխանավորները պարբերական ու համակարգային կերպով, բավականին երկարատև ժամանակաշրջանում օգտագործելով իշխանավարման օրենսդրական, գործադիր և դատական հնարավորությունները, իշխանագրկում են ժողովրդին, այսինքն՝ նրան չեն տրամադրում իր իշխանության իրականացման նվազագույն փաթեթը (շրջանակը), խեղաթյուրում, նսեմացնում (Լիտվա), կրճատում են եղածները, ապա ինչպես բնութագրել այս արարքը: Կարծում ենք՝ կարելի է պնդել, որ դա ժողովրդին բնական հավակնությունների ու իրավունքի ուժով պատկանող, անքակտելի իրավունքների յուրացում է անձի (անձանց) կողմից, որին վստահված է պետական (ներառյալ) ներկայացուցչական իշխանության իրականացումը:

Քաղաքական ու իրավական անպատասխանատվությունը սեփական ժողովրդի առջև դրդում է նրանց, անձնավորված և սեփական շահերից ելնելով, իրականացնել ոչ միայն իրենց վստահված լիազորությունները, այլև ժողովրդին իշխանագրկել, նրան դարձնել անունակ: Ահա թե ինչ նկատի ունի ՀՀ Սահմանադրության անփոփոխելի հոդվածի 3-րդ մասը: Այն մատնանշում է հանցակազմ, որը պետք է նախատեսվեր քրեական օրենսգրքում, ինչը, սակայն, չի արվել ժամանակի ընթացքում: Սակայն «իշխանավորները» կատարել և շարունակում են կատարել ժողովրդի դեմ ուղղված այդ հանցանքը:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 300 հոդվածը (պետական իշխանությունը յուրացնելը) կապված է ՀՀ Սահմանադրության հետ մասնակիորեն: Նախ, հոդվածում խոսքը պետական իշխանությունը բռնությամբ զավթելու, պահելու, տապալելու մասին է: Սակայն՝ ա) յուրացումը, ըստ էության, կարող է կատարվել նաև առանց բռնության, բ) Սահմանադրությունն օգտագործում է ընդհանրապես «իշխանության յուրացում» ձևակերպումը, ուրեմն ժողովրդի իշխանության յուրացումն է հանցագործություն, ինչը արտացոլված չէ քրեական օրենսգրքում, գ) «յուրացումը» տարբերվում է բռնության միջոցով իշխանության ոտնձգություններից, ինչպես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում՝ գույքի յուրացումն ավագակությունից ու կողոպուտից: Այս ամենը նշանակում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300 հոդվածը թերի է, իսկ նրա վերտառությունը ճիշտ ձևակերպված չի³³:

³² Տե՛ս **Баглай М. Б., Габричидзе Б. Н.** Конституционное право Российской Федерации. М.: ИНФРА. М-КОДЕКС, М., 1996, էջ 104:

³³ Այդպիսի հանցակազմ չկար ո՛չ խորհրդային, ո՛չ էլ ՌԴ գործող քրեական օրենսգրքերում:

Ժողովրդաիշխանության իրական իմաստն արտահայտվում է հենց «ժողովրդի կառավարում, ժողովրդով և ժողովրդի համար» սկզբունքում: Եթե համաձայն ՀՀ Սահմանադրության՝ հիմնական իրավունքների էությունն անխախտելի է, ապա անխախտելի են նաև ժողովրդի իրավունքները, մասնավորապես՝ «1) լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող պետության մեջ, 2) ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմինները, 3) պատվիրակել սեփական լիազորությունները իշխանության ներկայացուցչական մարմիններին, 4) ունենալ սահմանադրությամբ ամրագրված կարգավիճակ, 5) մասնակցել օրենսդրական գործունեությանը, պետության կառավարմանը և այլն»³⁴: ՀՀ Սահմանադրության հոդված 80-ը սահմանում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է» իրավական բանաձևը, «որը արգելք է հանրային իշխանության և նրա մարմինների համար: Այդ արգելքից բխում է նրանց հետևյալ պարտականությունը: Հիմնական իրավունքների սահմանադրական դրույթներն իրավական կարգավորման շղթայում (Սահմանադրություն – սահմանադրական օրենք – օրենսգիրք – օրենք – ենթաօրենսդրական իրավական ակտեր – անհատական իրավական ակտեր) որոշակիացնելիս չխեղաթյուրել, չխախտել, բովանդակային առումով շուռ չտալ, չչեզոքացնել դրանց էությունը»³⁵: Եթե հիմնական իրավունքների ու ազատությունների էությունն անխախտելի է, ապա ժողովրդաիշխանության էությունն առավել ևս:

Սահմանադրության հոդված 2-ի 3-րդ մասն իրավական երաշխիք է ժողովրդի իշխանությունն իրականություն դարձնելու համար, այն ուտոպիայի ու երազանքների հարթությունից իրականություն տեղափոխելու համար: Իրավական երաշխիքների գլխավոր զիծը խախտման համար պատասխանատվությունն է, առանց որի իրավունքն ու արդարությունն անուժ են: Այստեղից առաջանում է մեկ այլ խնդիր՝ սահմանադրական նորմի անմիջական գործողությունը և դրա հիման վրա այդ հանցակազմի համար պատասխանատվության կիրառումը, Սահմանադրության որպես քրեական իրավունքի աղբյուրի հարցը: Սակայն այս հարցադրումը կորցրեց իր արդիականությունը, որովհետև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն արդեն չունի անմիջական գործողություն: Նշանակում է՝ ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Սահմանադրության հոդ. 2-ի 3-րդ մասի վերը ներկայացված մեկնաբանության տեսանկյունից ունի վերախմբագրման, իշխանության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների հանցակազմերի և, անշուշտ, նաև յուրացման հարցում ճշգրտման կարիք:

³⁴ **Ա. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն–1: Դասախոսություն /ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 73:

³⁵ **Արթուր Վաղարշյան**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական վերլուծություն), «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2017, № 3 (24), էջ 8:

Բանալի բառեր – իշխանություն, յուրացում, ուզուրպացում, հանցագործություն, բռնություն, էության անխախտելիություն, քրեական օրենք

ԱՐԿՄՐ ՅԱԳԱՐՏՅԱՆ – *Возможные посягательства на власть народа и проблема их закрепления в системе права Республики Армения.* – В статье на основе методов догматического и сравнительно-правового конституционного анализа предлагаются, во-первых, своеобразное юридическое толкование конституционной формулы «присвоение власти» и, во-вторых, правовые пути совершенствования текущего уголовного законодательства РА.

Ключевые слова: *власть, присвоение, узурпация, преступление, насилие, неприкосновенность сущности, уголовный закон*

ARTHUR VAGHARSHYAN - *The Possible Encroachments on the People's Power and the Fundamental Problems of their Regulation in the Law System of the Republic of Armenia.* - In the article the author offers a unique legal comment of the constitutional resolution of “the appropriation of power” on the basis of the theoretical-dogmatic and comparative constitutional legal analysis and offers legal ways of improvement of RA criminal legislation in force.

Key words: *power, appropriation, usurpation, crime, violence, inviolability of essence, criminal law*

Ներկայացվել է՝ 15.01.2019,
գրախոսվել է՝ 01.02.2019,
ընդունվել է տպագրության՝ 25.07.2019

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏԻՑ՝
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ**

ԱԼԵՔՍԱՆԴ ԿՈՉՈՒԲԱԵՎ

Հանրային իշխանության մարմինները իրենց գործունեության ընթացքում ինչքան էլ ձգտեն ապահովել գործողությունների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կատարում են ոչ իրավաչափ գործողություններ, ընդունում են անհիմն որոշումներ, անձանց անհարկի ծանրաբեռնում են պարտականություններով և այլն:

Այս խնդիրը պետության համար լրջագույն մարտահրավեր էր: Հրամայական էր ստեղծել հանրային այնպիսի օղակ, որի գլխավոր առաքելությունը լիներ պետական մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերահսկողությունը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, ամրագրում է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն իրենց երկրի դատարանակազմության և դատական ընթացակարգերի համապատասխանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը¹: Ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները և բողոքարկման մարմնի իրավագործությունը, որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին²:

ՀՀ-ում շուրջ մեկ տասնամյակ վարչական մարմինների նկատմամբ դատական վերահսկողության գործառույթը իրականացնում էին ընդհանուր իրավասության դատարանները, որոնք քաղաքացիական դատավարության շրջանակներում հատուկ հայցային վարույթի կարգով վերանայում էին վարչական տույժի ենթարկելու մասին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց որոշումները, քննում էին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց օ-

¹ Տե՛ս https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805db3f4

² Այս խնդրի վերլուծությանը անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը (տե՛ս ՄԴՈ-780 գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 25.22.2008 թվականի որոշումը):

րենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու, գործողությունները վիճարկելու վերաբերյալ գործերը և այլն:

Պահանջվեց ընդամենը մեկ տասնամյակ, որպեսզի դատական վերահսկողության այս ռեժիմը ցույց տար խնդրո առարկա բնագավառը կարգավորելու անկարողությունը: Օրակարգային էր ինստիտուցիոնալ մարմնի ստեղծումը, որը պետք է զբաղվեր բացառապես վարչական մարմինների վարչական ակտերի և գործողությունների (անգործության) նկատմամբ վերահսկողությամբ: ՀՀ-ում այս առաքելությունը ստանձնեց ՀՀ վարչական դատարանը³ վարչադատավարական օրենսդրության ներդրմամբ:

ՀՀ-ում վարչական դատավարությունը վարչական իրավունքի ինստիտուտ է: Ընդ որում, հիմնախնդրով զբաղվող հայրենական տեսաբանները վարչական դատավարության ինստիտուտ լինելու վերաբերյալ կա՛մ որևէ հիմնավորում⁴ չեն բերում, կա՛մ դրա ինստիտուտ լինելը հիմնավորում են ՀՀ վարչական իրավունքի հետ ունեցած տեսագործական ընդհանրություններով և ՀՀ վարչական իրավունքում նյութական և դատավարական նորմերի միաժամանակյա առկայությամբ⁵:

Վարչադատավարական արդի զարգացումները պայմանավորում են խնդրո առարկա բնագավառի նորովի ուսումնասիրությունը և իմաստավորումը: Վարչական դատավարության նոր օրենսգրքի (2013 թ.) ընդունումից հետո ոլորտը չի ենթարկվել անհրաժեշտ վերլուծության:

Վարչական արդարադատությունը առօրյա կյանքում ապացուցել է իր արդյունավետությունը, սակայն այն անհրաժեշտ է անընդհատ կատարելագործել: Այս խնդիրը հատկապես կարևորվում է այն պատճառով, որ ՀՀ-ում վարչական դատավարությունը մեկուսի հանդես չի գալիս. այն կլանում է ՀՀ վարչական իրավունքը: Վարչական դատավարությունը գործադիր իշխանության մարմինների գործունեության օրինականության ապահովման գործուն մեխանիզմ է, որը պետք է զարգանա այլ հունով, քան վարչական իրավունքը: Դրա համար առկա են մի շարք իրավական նախադրյալներ: Նախ և առաջ պետք է արձանագրել, որ կարգավորման առարկայի և կարգավորման մեթոդի առումով ՀՀ վարչական իրավունքը և դատավարությունը հակադիր բնեռներում են:

Վարչական դատավարությունն ունի կարգավորման ինքնուրույն առարկա և մեթոդ, ինչը բավարար է վերջինս իրավունքի ինքնուրույն ճյուղերի շարքին դասելու համար: Այդ իրավունքի կարգավորման առարկան բավականին խայտաբղետ է և բազմավեկտոր: Վարչական դատավարության իրավունքի կարգավորման առարկան այն հասարակական հարաբերություններն են, որոնք սահմանում են վարչական մարմինների նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործո-

³ ՀՀ վարչական դատարանը իր գործունեությունը սկսել է 2008 թվականի հունվարի 1-ից:

⁴ Տե՛ս **Հ. Թովմասյան և ուրիշներ**, ՀՀ ընդհանուր վարչական իրավունք, Եր., 2012, էջ 424:

⁵ Տե՛ս **Գ. Իսրայելյան**, Վարչական վարույթ և դատավարություն, Եր., 2012, էջ 351:

դությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, այդ անձանց դեմ վարչական մարմինների հայցադիմումների քննության, ինչպես նաև վարչական մարմինների միջև իրավասության հարցերով վեճերի լուծման կարգը:

Վարչական դատավարությունն ունի նաև կարգավորման սեփական մեթոդները: Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն մտեցումը, որ իրավունքը ունի երկու հիմնարար և առաջնային իրավական կարգավորման մեթոդներ՝ իմպերատիվ և դիսպոզիտիվ⁶: Իրավական կարգավորման մեթոդի բովանդակությունը կախված է իրավական կարգավորման եղանակների զուգակցումից: Իրավական կարգավորման եղանակը⁷ ցույց է տալիս, թե ինչ բնույթի կարգադրագիր է արտացոլված իրավական նորմում կամ իրավական համակարգի այլ տարրերում:

Վարչական դատավարության կարգավորման հիմնական մեթոդը դիսպոզիտիվ է, իսկ իրավական կարգավորման եղանակը՝ թույլատրումը: Մրանով հանդերձ՝ վարչադատավարական իրավակարգավորման շրջանակներում բացառված չէ նաև պարտավորեցման, արգելման, խրախուսման եղանակների կիրառումը, սակայն դրանք բոլոր դեպքերում երկրորդական եղանակներ են, քանի որ վարչական դատավարության ամբողջ առանցքը իրավունքները ինքնուրույն տնօրինելն է (տնօրինչականության սկզբունք)⁸, որը թույլատրման բովանդակությունն է: Եվ առհասարակ, իրավական կարգավորման ընթացքում մեթոդները և եղանակները ինքնավար կերպով հանդես չեն գալիս. միշտ էլ առկա է դրանց համադրում: Այդ համադրմամբ էլ հենց պայմանավորվում են իրավական կարգավորման մեթոդի տարբերությունները:

Վարչական իրավունքի կարգավորման առարկան ընդգրկում է գործադիր իշխանության ոլորտի հասարակական հարաբերությունները, որոնք կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով⁹: Վարչական իրավունքի կարգավորման մեթոդը իմպերատիվն է, կարգավորման գլխավոր եղանակը՝ պարտավորեցումը: Վարչական իրավունքը՝ իբրև վարչաիրավական կարգավորման եղանակներ¹⁰, հիմնականում օգտագործում է կարգադրագրերը և արգելքները, սակավ դեպքերում՝ թույլտվությունը:

Դատական վերահսկողությունը վարչական իրավունքի կարգավորման առարկա չէ, իսկ վարչական իրավունքի կարգավորման մեթո-

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 454:

⁷ Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են թույլատրման, արգելման, պարտավորեցման և այլ իրավական կարգավորման եղանակներ:

⁸ Տնօրինչականության սկզբունքի շնորհիվ՝ վարչական դատավարության մասնակիցները ներկայացնում են հայցադիմումներ, հակընդդեմ հայցեր, վերջիններիս պատասխանները, բողոքարկում վարչական ակտեր, դատավարական որոշումներ, հարուցում միջնորդություններ և այլն:

⁹ Տե՛ս **Գ. Դանիելյան**, ՀՀ վարչական իրավունք, ուս. ձեռնարկ, Եր., 2012, էջ 57:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 58:

դը և եղանակները հնարավորություն չեն տալիս կարգավորելու վարչադատավարական հարաբերություններ, քանի որ նման իրավահարաբերությունների դեպքում կարգավորման մեթոդը դիսպոզիտիվ է, իսկ կարգավորման եղանակը՝ թույլատրումը:

Այսինքն՝ կարգավորման առարկայի և մեթոդի համատեքստում վարչական իրավունքը և վարչական դատավարությունը իրավունքի տարբեր մակարդակներում են: Վարչական իրավունքը կարգավորում է պետական կառավարման բնագավառում ծագող, փոփոխվող և դադարող հասարակական հարաբերությունները, իսկ վարչական դատավարությունը՝ նշված հասարակական հարաբերությունների կարգավորմամբ պայմանավորված դատական վերահսկողության հարցերը:

Վարչական դատավարությունը պետք է տարբերել նաև վարչական իրավունքի առանձին ինստիտուտներից, մասնավորապես՝ վարչական վարույթից: Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ վարչական արդարադատության իրավունքը վարչական նյութական իրավունքի համակարգում հանդես է գալիս որպես ինստիտուտ, իսկ վարչական վարույթային իրավունքի համակարգում՝ որպես ենթաճյուղ¹¹:

Վարչական վարույթը և վարչական դատավարությունը բավականին սերտ փոխազդեցության մեջ են: Սակայն կան որոշակի առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս այս երկու բնագավառները դիտարկելու մեկուսի: Դրանք վերաբերում են գործունեության օբյեկտին և սուբյեկտային կազմին ու նպատակին: Վարչական վարույթը վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է, մինչդեռ վարչական դատավարությունը արդեն իսկ ընդունված վարչական ակտի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունն է: Վարչական վարույթը իրականացվում է վարչական մարմինների կողմից, իսկ վարչական դատավարությունը՝ վարչական դատարանի: Վարչական վարույթի նպատակը հանրային իրավահարաբերության բնագավառում որոշակի վեճի լուծումն է, իսկ վարչական դատավարության նպատակը՝ կարգավորված վեճի իրավաչափության ստուգումը: Այս առումով վարչական դատավարությունը վարչական վարույթի շարունակությունը չէ, այլ գործունեության ինքնուրույն ասպարեզ:

Վարչական դատավարության իրավունքի ճյուղի ստեղծմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է մշակել համապատասխան դոկտրինալ հենք, ինչպես նաև ուսումնական դասընթաց: Վարչադատավարական գիտությունը դեռևս սաղմնային վիճակում է: Մեզանում բացակայում է վառ արտահայտված վարչական դատավարության իրավունքի գիտության հայեցակարգը: Իհարկե կան արժեքավոր հետազոտություններ դրա տարբեր կողմերի մասին, որոնք շատ դեպքերում լրաց-

¹¹ Տե՛ս «Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ», Եր., Տիգրան Մեծ, 2011 էջ 16:

նում են ոլորտի տեսական սնանկությունը¹², սակայն անհրաժեշտ է համապարփակ հետազոտություն:

Քանի որ առաջացել է վարչական դատավարությունը իրավունքի ինքնուրույն ճյուղ առանձնացնելու անհրաժեշտություն, առաջանում է գիտական նոր հիմնավորումների հրամայական: Վարչադատավարական գիտությունը պետք է հետազոտի հասարակական հարաբերությունների վարչադատավարական իրավակարգավորման օրինաչափությունները, որպես հետազոտության արդյունք ձևավորի վարչական դատավարության մասին փոխկապակցված և փոխհամաձայնեցված հասկացությունների, հայացքների, հետևությունների, դատողությունների, գաղափարների, հայեցակարգերի և տեսությունների վրա հիմնված տեսակետ: Վարչական դատավարության գիտությունը պետք է հետազոտի վարչական գործերի քննություն և այդ գործերով արդարադատություն իրականացնող դատարանի վրա պետության կողմից դրված խնդիրների լուծման ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերությունները, դատավարական նորմերի կիրառման պրակտիկան, վերլուծի վարչաիրավական վեճերի ծագման պատճառները և ամփոփի դատական պրակտիկան¹³: Վարչադատավարական իրավունքի գիտության խնդիրը պետք է լինի նաև արտասահմանյան երկրների վարչադատավարական պրակտիկայի և միջազգային լավագույն փորձի վերլուծությունը և ներդրումը:

Բավականին խնդրահարույց է վարչական դատավարության դասավանդման մեթոդաբանությունը: Վարչական դատավարության իրավունքը որպես ինքնուրույն ուսումնական դասընթաց չի ընկալվում և ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում չի դասավանդվում: Այն ներառված է կա մ վարչական իրավունքի, կա մ վարչական վարույթի դասընթացի մեջ: Արդյունքում՝ վարչական դատավարությունը չի ուսումնասիրվում անհրաժեշտ և ցանկալի խորությամբ: Կարծում ենք, որ օրեցօր զարգացող և գործնականում իր արդյունավետությունն ապացուցող վարչական դատավարությունը թելադրում է վարչական դատավարության հիմնախնդիրների խորքային վերլուծություն և իմացություն և, ըստ այդմ, նոր դասընթացի ներդրում:

Վարչական իրավունքից վարչական դատավարության առանձնացման հաջորդ փաստարկը ինքնուրույն կողիֆիկացված օրենսդրության առկայությունն է: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը կարգավորում է որակապես ինքնուրույն հասարակական հարաբերություններ, որոնք վարչական իրավունքի կարգավորման առարկայից,

¹² Օրինակ՝ Գ. Դանիելյանի, Գ. Իսրայելյանի խնդրո առարկա ոլորտի աշխատությունները և այլն:

¹³ Այս սահմանումը տվել է Ռ. Պետրոսյանը, սակայն քաղաքացիական դատավարության վերաբերյալ: Կարծում ենք, որ այն լիովին վերաբերելի է նաև վարչական դատավարության իրավունքի գիտության նկատմամբ: Տե՛ս Ռ. Պետրոսյան, ՀՀ քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատարակություն, Եր., 2012, էջ 3:

ինչպես նաև նյութաիրավական հիմքերից դուրս են: ՀՀ-ում բացակայում է վարչական միասնական նյութական օրենսդրությունը, որը ոչ թե թերություն է, այլ օբյեկտիվ երևույթ: Վարչական իրավունքի կարգավորման առարկան չափազանց տարաբնույթ է, և այստեղ անհնար է խոսել միասնական նորմատիվ նյութաիրավական հենքի մասին: Այս համատեքստում՝ ինքնուրույն միտվածությամբ օրենսդրությունը չի կարող մտնել ՀՀ վարչական իրավունքի ամորֆ համակարգի մեջ և համարվել վերջինիս ինստիտուտ:

Այսպիսով, մենք փորձեցինք հիմնավորել վարչական դատավարության ինքնուրույնությունը՝ պայմանավորված կարգավորման առարկայի և մեթոդի, ինչպես նաև կողիֆիկացված օրենսդրության առկայությամբ: Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ վարչական դատավարությունը «ճանաչել» որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ:

Քանի որ առաջացել է ՀՀ վարչական դատավարությունը վարչական իրավունքից առանձնացնելու անհրաժեշտություն, առաջարկում ենք հանրապետության կրթական հաստատություններում նախատեսել «ՀՀ վարչական դատավարություն» ինքնուրույն ուսումնական դասընթաց:

Բանալի բառեր – *իրավունքի ճյուղ, ինստիտուտ, վարչական իրավունք, վարչական դատավարություն, իրավունքի կարգավորման առարկա, մեթոդ*

АЛЕКСАНДР КОЧУБАЕВ – Административное судопроизводство: от института до отрасли права. – В статье обосновывается автономность административного судопроизводства в контексте отраслей права, а также необходимость отделить административное судопроизводство от административного права. Кроме того, последовательно аргументируется тезис о том, что в контексте предмета и метода регулирования административные право и судопроизводство находятся на противоположных полюсах и с этой точки зрения должны быть разделены.

Ключевые слова: *отрасль права, институт, административное право, административное судопроизводство, объект правового регулирования, метод*

ALEKSANDR KOCHUBAEV – Administrative Proceeding: From Institute to Branch of Law. – The article attempts to justify the autonomy of administrative proceedings in the context of branches of law, as well as the need to separate administrative proceedings from administrative law.

The article consistently substantiates the thesis that, in the context of the subject and method of regulation, administrative law and legal proceedings are at opposite poles and should be separated from this point of view.

Key words: *branch of law, institut, administrative law, administrative proceedings, object of legal regulation, method*

Ներկայացվել է՝ 06.26.2019,
գրախոսվել է՝ 06.26.2019,
ընդունվել է տպագրության՝ 25.07.2019

**ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ
ՀՀ 2015 թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ**

ՕՏՏՈ ԼՈՒԽԹԵՐՀԱՆԴԹ, ՆՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ընդհանուր նկատառումներ

Յուրաքանչյուր ֆիզիկական անձ թեև իր ծննդյան պահից ունի իրավունակություն (Քաղաքացիական օրենսգրքի¹ 20-րդ հոդված՝ 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասություն), բայց լրիվ գործունակություն նա ձեռք է բերում չափահաս դառնալով, այսինքն՝ 18 տարին լրանալով (Քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մաս): Մինչև այդ պահը նա «երեխայի» իրավական կարգավիճակ ունի² (Ընտանեկան օրենսգրքի³ 41-րդ հոդվածի 1-ին մաս): Երեխայի տարիքով պայմանավորված՝ սահմանափակ իրավաբանական գործունակության պատճառով ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ «մանկությունը» պետության հատուկ պաշտպանության ներքո է (16-րդ հոդված) և համապատասխանաբար՝ 37-րդ հոդվածով երեխային ընձեռում է հատուկ կարգավիճակ, իսկ ծնողների ու պետության վրա դնում է հատուկ, աստիճանավորված պատասխանատվություն՝ երեխայի բարօրության համար (36-րդ հոդված):

1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը չէր ամրագրում 37-րդ հոդվածի հետ համեմատելի հիմնական իրավունք: Ընտանիքի հիմնական իրավունքը (32-րդ հոդված) միայն հարևանցիորեն էր շոշափում երեխայի իրավունքները: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը թեև ընդարձակել և ուժեղացրել էր ընտանիքին առնչվող հիմնական իրավունքների երաշխիքները (35-րդ հոդված, 36-րդ հոդված), սակայն նույնպես չէր ճանաչել երեխայի հիմնական իրավունքները որպես այդպիսին:

2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը այս առումով կատարում է երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրման միջազգային ժամանակակից միտումներին, ՄԱԿ-ի «Երեխայի իրա-

¹ Ընդունվել է 1998 թ. մայիսի 5-ին, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ՀՕ-239:

² Տե՛ս նաև «Երեխաների իրավունքների մասին օրենք», ընդունվել է 1996 թ. մայիսի 29-ին, ՀՕ-59, ՀՀԱԺՏ 1996/10:

³ Ընդունվել է 2004 թ. նոյեմբերի 9-ին, ՀՕ-123-Ն, ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ. 60:

վունքների մասին» կոնվենցիային⁴ համահունչ կարևոր առաջընթաց քայլ: Հատկանշական է, որ 37-րդ հոդվածի կառուցվածքի ու բովանդակության համար ելակետ է հանդիսացել ԵՄ Հիմնական իրավունքների մասին խարտիայի 24-րդ հոդվածը, որն էլ իր հերթին հիմնականում հիմնվել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի (երեխայի լավագույն շահ), 9-րդ (ծնողների հետ կանոնավոր փոխհարաբերություններ ունենալու իրավունք), 12-րդ և 13-րդ հոդվածների վրա (կարծիքի ազատ արտահայտումը և այն հաշվի առնելը):

Երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրումը նոր միտում է, որը կառուցվում է այն մոտեցման վրա, որ երեխան ոչ միայն պաշտպանության օբյեկտ է, այլև իրավունքների կրող և իրեն վերաբերող հարցերում որոշումներ կայացնելուն մասնակից⁵: Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմքում ընկած է երեխայի՝ տարիքի հետ զարգացող ինքնուրույնությունը խթանելու իրավական գաղափարը և ամրագրված է իրեն վերաբերող հարցերում կարծիք արտահայտելու իրավունքը, իսկ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում տեղ գտած «երեխայի լավագույն շահի» սկզբունքը: Այս սկզբունքը արտացոլված է նաև 37-րդ հոդվածի 3-րդ մասում որպես չափանիշ՝ ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու երեխայի իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելու համար:

37-րդ հոդվածի 4-րդ մասը սուբյեկտիվ իրավապահանջի հատուկ հիմք է նախատեսել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար: Այս հոդվածով նախատեսված իրավունքները նախ և առաջ պաշտպանիչ դեր ունեն: Բայց միևնույն ժամանակ դրանք, նկատի ունենալով այս իրավունքների վերացական բնույթը, բնականաբար որոշակի կարիք ունեն և դրանով պայմանավորված՝ առաջացնում են պետության պոզիտիվ պարտականություններ հատկապես օրենսդրական կարգավորման բնագավառում:

Հիմնական իրավունքի երաշխավորումը միջազգային փաստաթղթերում և այլ երկրների սահմանադրություններում

Եթե Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Մարդու ի-

⁴ Ընդունվել է 20.11.1989 թ.: Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. հուլիսի 22-ին, ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում: Հայաստանը վավերացրել է նաև Կոնվենցիային կից երկու լրացուցիչ արձանագրությունները՝ «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը» (ՀՀ համար ուժի մեջ է մտել 21.03.2005 թ.), և «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը» (ՀՀ համար ուժի մեջ է մտել 30.07.2005 թ.):

⁵ See u Venice Commission Report on the Protection of Children's Rights, Adopted by the Venice Commission at its 98th Plenary Session, CDL-AD(2014) 005-e, կետ 12-13:

րավունքների համընդհանուր հռչակագիրը⁶ ոչինչ չի ասում երեխայի իրավական կարգավիճակի մասին, ապա Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը⁷ ընտանիքի պաշտպանության (23-րդ հոդված) կողքին առանձին հոդված է նվիրում երեխայի կարգավիճակին (24-րդ հոդված)՝ ծննդի և անվան պաշտոնական գրանցման (2-րդ մաս), քաղաքացիություն ունենալու երեխայի իրավունքի (3-րդ մաս) հետ մեկտեղ ամրագրելով անչափահասության պատճառով պահանջվող պետության կողմից պաշտպանության իրավունքը (1-ին մաս): Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը⁸ այն ստորագրած պետությունների վրա դնում է շահագործումից, բարոյականության, կյանքի, առողջության համար վտանգավոր աշխատանքի մեջ ներգրավելուց երեխաների պաշտպանության պարտականություն (10-րդ հոդվածի 3-րդ մաս):

Երեխայի իրավական կարգավիճակին ու նրա իրավունքներին են նվիրված ՄԱԿ-ի մի շարք կոնվենցիաներ: Դրանցից կարևորագույնը «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան է, որին միացել են ՄԱԿ-ի գրեթե բոլոր անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը⁹:

Ի տարբերություն վերոնշյալ միջազգային փաստաթղթերի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ՄԻԵԿ)¹⁰ երեխաների իրավունքներին նվիրված առանձին կարգավորում չի պարունակում: Անչափահասներին վերաբերող առանձին դրույթներ նախատեսված են ՄԻԵԿ-ի մի քանի հոդվածներում (5-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ, 6-րդ հոդվածի 1-ին մաս, 7-րդ արձանագրության 5-րդ հոդված, 1-ին արձանագրության 2-րդ հոդված), իսկ կոնվենցիոն որոշ երաշխիքներ էլ տարածվել են երեխաների վրա միայն ՄԻԵԴ դատական պրակտիկայում (օրինակ՝ 3-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածներ): Այս ամենը թույլ է տալիս պնդել, որ երեխաները նույնպես իրավունքի կրող են ՄԻԵԿ-ի շրջանակներում:

Երեխաների՝ որպես իրավունքի կրողի մոտեցումն արտասահմանյան երկրների սահմանադրություններում դեռևս լայն տարածում չի գտել. փոխարենը երեխայի իրավունքները դիտարկվում են ծնողների իրավունքների և ընտանիքի պաշտպանության համատեքստում¹¹:

⁶ Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն:

⁷ Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով, ՀՀՊՏ 1997.12.25/29, 2200 Ա XXI:

⁸ Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևի համաձայն:

⁹ Կոնվենցիայի դրույթներն իրացվել են «Երեխայի իրավունքների մասին» օրենքում:

¹⁰ Ընդունվել է 04.11.1950, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 26.04.2002, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

¹¹ ԵՆ անդամ շուրջ 20 երկրների սահմանադրություններ անդրադառնում են

Երեխայի՝ որպես հիմնական իրավունքի ինքնություն կրողի սահմանադրական ամրագրման օրինակ են Ֆինլանդիան (6-րդ հոդվածի 3-րդ մաս), Շվեյցարիան (11-րդ հոդված), Հունգարիան (XVI հոդվածի 1-ին մաս), Մոնտենեգրոն (74-րդ հոդված), Սլովենիան (56-րդ հոդված), Լեհաստանը (72-րդ հոդված): Առանձին երկրներում այդ մոտեցումն արտացոլվում է երեխայի անհատականությանը և հնարավորություններին համահունչ զարգանալու իրավունքի համատեքստում¹²:

Երեխայի իրավունքների հետ կապված հարցերում «երեխայի լավագույն շահը» սահմանադրական մակարդակով կարգավորված է միայն մի քանի երկրներում¹³:

Երեխայի լաված լինելու իրավունքի սահմանադրական ամրագրումը դեռևս մեծ տարածում չունի և ուղղակիորեն, որպես այդպիսին, ամրագրված է միայն Իռլանդիայի¹⁴, Լեհաստանի¹⁵ սահմանադրություններում և «Երեխաների իրավունքների մասին» Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքում¹⁶:

Եվրոպական այլ երկրների սահմանադրություններում առավել տարածված է կրթության իրավունքի, տնտեսական շահագործումից պաշտպանության, բռնությունից, չարաշահումից կամ այլ վնասից պաշտպանվելու երաշխավորումը:

Առանձին սահմանադրություններում կարելի է հանդիպել հաշմանդամ երեխաների հատուկ խնամքին վերաբերող դրույթներ¹⁷:

Պարզաբանումներ սահմանադրական դրույթների վերաբերյալ

3.1. Իրավունքի կրողը և հասցեատերը

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված իրավունքի կրողը երեխան է՝ ծնվելու պահից սկսած, մինչև նրա 18 տարեկանը լրանալը: Դեռ չծնված երեխայի իրավունքները պաշտպանված են 24-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքի շրջանակներում:

37-րդ հոդվածով նախատեսված իրավունքը մարդու իրավունք է՝ անկախ երեխայի քաղաքացիության հանգամանքից: Այս հոդվածով

ընտանիքին և դրանում երեխաների հատուկ պաշտպանությանը:

¹² Երեխաների իրավունքների մասին Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 1-ին հոդված, Հունգարիայի Սահմանադրության XVI հոդվածի 1-ին մաս, Պորտուգալիայի Սահմանադրության 69-րդ հոդվածի 1-ին մաս, Շվեյցարիայի Սահմանադրության 11-րդ հոդվածի 1-ին մաս:

¹³ Տե՛ս Իռլանդիայի Սահմանադրության 42ա հոդված, Սերբիայի Սահմանադրության 65-րդ հոդված, Ալբանիայի Սահմանադրության 54-րդ հոդվածի 4-րդ մաս:

¹⁴ Տե՛ս Իռլանդիայի Սահմանադրության 42ա հոդվածի 4-րդ մաս:

¹⁵ Տե՛ս Լեհաստանի սահմանադրության 73-րդ հոդվածի 3-րդ մաս:

¹⁶ 4-րդ հոդված:

¹⁷ Տե՛ս Venice Commission Report on The Protection of Children's Rights, CDL-AD(2014)005-e, տե՛ս նաև Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի կետ 82-117:

նախատեսված իրավունքի կրող չեն երեխայի ծնողները, հոգաբարձուներն ու խնամակալները թեև նրանց համար երեխայի կողմից այդ իրավունքից օգտվելու դեպքում կարող են առաջ գալ բարենպաստ հետևանքներ: Միևնույն ժամանակ, ծնողները, հոգաբարձուներն ու խնամակալները, հանդես գալով որպես երեխայի օրինական ներկայացուցիչներ, կարող են վկայակոչել երեխայի իրավունքները:

Սույն հոդվածի վերնագրից և բովանդակությունից կարող է այն տպավորությունը ստեղծվել, որ երեխային պատկանող հիմնական իրավունքները միայն այս հոդվածում են ամրագրված: Իրականում երեխաները Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված բոլոր հիմնական իրավունքների կրողն են, բացառությամբ այն իրավունքների, որոնց համար նախատեսված են տարիքային սահմանափակումներ (օրինակ՝ ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը՝ 48-րդ հոդված): Բնչ վերաբերում է այդ իրավունքներից օգտվելուն, պապ խնդիրներ կարող են առաջանալ միայն այն իրավունքների պարագայում, որոնց իրացումը կապված է երեխայի հասունության որոշակի մակարդակի հետ:

37-րդ հոդվածով սահմանված հիմնական իրավունքների հասցեատերը բացառապես հանրային իշխանությունն է՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Թեպետ երեխաների դաստիարակության համար առաջնահերթ պատասխանատվությունը կրում են ծնողները, սակայն այս հոդվածով նախատեսված իրավունքները վերջիններիս վրա ներգործում են միայն անուղղակիորեն՝ օրենսդրական կարգավորումների միջոցով:

3.2. Երեխայի կարծիքը հաշվի առնելը

Թեև ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքը սկսվում է երեխայի կարծիքի ազատ արտահայտման իրավունքով, այդուհանդերձ այստեղ հիմնական շեշտադրումը և պաշտպանության առարկան ոչ թե կարծիքի արտահայտման ազատություններն են, այլ այդ կարծիքը հաշվի առնելու պարտականությունը իրավունքի հասցեատերերի կողմից: Այդ ազատությունը պաշտպանվում է Սահմանադրության 42-րդ հոդվածով և ներառում է նաև երեխաների կարծիքի արտահայտումը: 37-րդ հոդվածի 1-ին մասը 42-րդ հոդվածից տարբերվում է հենց նրանով, որ իրավունքի հասցեատիրոջ համար առաջացնում է պարտադիր իրավական հետևանք՝ կարծիքը հաշվի առնելու տեսքով: Այս իսկ պատճառով այդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ երեխայի կողմից կարծիքի ազատ արտահայտումը, որպես այդպիսին, չունի ինքնուրույն իրավաբանական կշիռ, այլ միայն պարզաբանող բնույթի է: Դրա նպատակն է ընդգծել, որ երեխաները՝ որպես ինքնուրույն անձինք, հիմնական իրավունքի կրող են: Նրանց կողմից

կարծիք արտահայտելը ընդամենը նախադրյալ է այդ կարծիքը հաշվի առնելու համար: Սահմանադրական նման կարգավորումը բխում է երեխայի՝ որպես իրավունքների կրողի և իրեն վերաբերող հարցերում որոշումներ կայացնելուն մասնակից դիտարկելու ժամանակակից մոտեցումից: Այստեղ արտացոլված է երեխաների իրավունքների պաշտպանության հարցում միջազգային մակարդակով ընդունված նրանց կարծիքը հաշվի առնելու գաղափարը¹⁸, և ընդգծված է երեխայի ինքնավար անհատականությունը:

Ինչպես Սահմանադրության 42-րդ հոդվածի, այնպես էլ 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն է, որ կարծիքի արտահայտումը լինի *ազատ*, այն է՝ առանց որևէ ճնշման, հարկադրանքի, ազդեցության: Կարծիքի արտահայտման ազատության շեշտադրումը առավել կարեվոր է հենց երեխաների պարագայում՝ պայմանավորված նրանց տարիքային խոցելիությամբ:

37-րդ հոդվածի 1-ին մասը սերտորեն կապված է նաև 2-րդ մասում ամրագրված «երեխայի լավագույն շահի»¹⁹ սկզբունքի հետ, որը բացահայտելու համար կարևոր է, որ երեխան *լսված լինի*: Այս հոդվածի 1-ին մասի պաշտպանության առարկան ունի երկու նախապայման: Առաջին՝ այս ազատությունը տարածվում է միայն երեխային վերաբերող հարցերի վրա, ու երկրորդ՝ երեխայի կարծիքի արտահայտման ազատությունը պաշտպանված է այնքանով, որքանով դա համապատասխանում է երեխայի տարիքին ու հասունության աստիճանին:

«*Երեխային վերաբերող հարցեր*» հասկացությունը պետք է հասկանալ լայն իմաստով՝ ներառելով երեխային վերաբերող ինչպես որոշումները, գործողությունները, այնպես էլ անգործությունը²⁰: Ընդ որում, «*վերաբերող*» բառը նույնպես պետք է լայն հասկանալ՝ դրա մեջ ներառելով ինչպես երեխաներին անմիջապես ուղղված²¹ (օրինակ՝ առողջապահություն, կրթություն), այնպես էլ երեխաներին անուղղակիորեն առնչվող բոլոր այն հարցերը, որոնք նշանակալի են երեխայի շահերի տեսանկյունից: Այդ հարցերը հնարավոր չէ սահմանել ինչ-որ մի պարզ ձևակերպմամբ, քանի որ դրանք բնականաբար փոփոխվում են երեխայի տարիքի և ֆիզիկական ու մտավոր հասունության աստիճանին զուգահեռ: Շեռնաբար, «*երեխային վերաբերող հարցեր*» եզրույթն անորոշ իրավական հասկացություն է, որի բովանդակությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ հանգամանքներում:

¹⁸ Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մաս, ԵՄ Հիմնական իրավունքների խարտիայի 24-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁹ Տե՛ս ստորև՝ կետ 3.3:

²⁰ Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 14 (2013) on the Right of the Child to Have his or her Best Interests Taken as a Primary Consideration (art. 3, para. 1), Adopted by the Committee at its Sixty-second Session (14 January – 1 February 2013), CRC/C/GC/14, կետ 17-18:

²¹ Տե՛ս նույն տեղը, կետ 19-20:

Իրեն վերաբերող հարցերում երեխայի կողմից արտահայտվող կարծիքը, 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետք է «հաշվի առնվի»²²: «Հաշվի առնել» եզրույթը նշանակում է, որ երեխային պարզապես լսելը բավարար չէ, այլ իրավունքի հասցեատերը պարտավոր է երեխայի տեսակետը լրջորեն քննարկել բոլոր այն դեպքերում, երբ երեխան ունակ է ձևակերպելու այն²³: «Հաշվի առնելու» պարտականությունը առաջին հերթին վերաբերում է օրենսդրին, որը պետք է սահմանի, թե որ դեպքերում, ինչ եղանակով և ինչ չափով է երեխայի կարծիքը հաշվի առնվում: Երեխայի ներգրավման չափը և նրա կարծիքի կշիռը ավելի մեծ նշանակություն ունեն երեխայի կենսական շահերը ուղղակիորեն շոշափող հարցերում (օրինակ՝ երեխայի խնամքին առնչվող հարցեր): Այդ դեպքերում օրենսդիրը երեխայի ներգրավման համար պարտավոր է նախատեսել լաման համապատասխան ընթացակարգեր՝ հաշվի առնելով նաև 50-րդ հոդվածի 3-րդ մասի (պատշաճ վարչարարության իրավունք) և 75-րդ հոդվածի (հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր) պահանջները:

37-րդ հոդվածի 1-ին մասը կատարելագործվել է Ընտանեկան օրենսգրքում, որի 44-րդ հոդվածը՝ «Սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը», առանձին հոդված է նախատեսում՝ ամրագրելով երեխայի իրավունքը՝ ունկնդիր լինելու իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը «ընտանիքում, դատական և այլ մարմիններում»: Առանձին դեպքերում երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը պետք է ներգրավի մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի:

Մի շարք դեպքերում Ընտանեկան օրենսգիրքն ուղղակիորեն նախատեսում է տասը տարին լրացած երեխայի կարծիքը պարտադիր հաշվի առնելը խղճի ազատության, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում²⁴ (Ընտանեկան օ-

²² «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը օգտագործում է «պատշաճ ուշադրություն» եզրույթը, ինչը բովանդակային առումով չի տարբերվում «հաշվի առնել» եզրույթից: Օրենքը, ըստ էության, հետևել է Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի “being given due weight” արտահայտության հայերեն թարգմանությանը: ԵՄ Հիմնական իրավունքների խարտիայի 24-րդ հոդվածի 1-ին մասը օգտագործում է “shall be taken into consideration” արտահայտությունը:

²³ Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 12 (2009) on the Right of the Child to be Heard, CRC/C/GC/12, 20 July 2009, կետ 28:

²⁴ Մասնավորապես, երեխայի կարծիքը հաշվի առնելու պահանջ է նախատեսված հետևյալ դեպքերում՝ ազգանունը փոխելուց (46-րդ հոդվածի 3-րդ մաս), կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունքից մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալու (51-րդ հոդվածի 2-րդ մաս),

րենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մաս):

Երեխայի կարծիքը հաշվի առնելը, սակայն, չի նշանակում, որ այն իրավունքի հասցեատիրոջ վրա դնում է այդ կարծիքով առաջնորդվելու իրավաբանական պարտականություն: Այսպես օրինակ՝ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու հետ կապված վեճերով Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ վեճը լուծում է դատարանը՝ *եղևելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը*: Սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-919 որոշման մեջ²⁵ արձանագրել է, որ, այնուամենայնիվ, տվյալ իրավակարգավորման համատեքստում երեխայի կարծիքը դատարանի համար պարտադիր չէ, և «Եթե դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով ... »²⁶:

Առանձին դեպքերում Ընտանեկան օրենսգիրքը նախատեսում է ավելի խիստ ռեժիմ, այն է՝ ոչ թե կարծիքը հաշվի առնելու պարտադրություն, այլ երեխայի համաձայնության պահանջ: Օրինակ՝ տասը տարին լրացած երեխայի պարագայում համաձայնությամբ է կատարվում անունը փոխելը (46-րդ հոդվածի 3-րդ մաս), որդեգրումը (121-րդ հոդվածի 1-ին մաս), որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխումը (123-րդ հոդվածի 6-րդ մաս), որդեգրողներին որպես որդեգրված երեխայի ծնողներ գրառելը (125-րդ հոդվածի 2-րդ մաս), երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ դատարանի կողմից որոշումներ ընդունելը (44-րդ հոդվածի 3-րդ մաս):

3.3. Երեխայի շահերի առաջնահերթությունը

37-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է երեխայի պաշտպանության համար առանցքային նշանակություն ունեցող՝ «երեխայի շահի» հիմնարար սկզբունքը (3-րդ հոդվածի 1-ին մաս)²⁷:

Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերում (53-րդ հոդվածի 2-րդ մաս), ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու (53-րդ հոդվածի 2-րդ մաս) երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով երեխան նրան հանձնելու հետ կապված դատարանի կողմից որոշում կայացնելիս (54-րդ հոդվածի 3-րդ մաս), երեխայի հետ շփվելու արգելքների հետ կապված (56-րդ հոդվածի 3-րդ մաս, 57-րդ հոդվածի 1-ին մաս), երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնման կամ սահմանափակումների վերացման վերաբերյալ հարց քննելիս (62-րդ հոդվածի 4-րդ մաս, 66-րդ հոդվածի 2-րդ մաս):

²⁵ ՀՀՊՏ 2010.10.13/50(784), հոդ. 1132:

²⁶ Նույն տեղում, կետ 6:

²⁷ «Երեխայի շահը» համարժեք է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «երեխայի լավագույն շահ» (“the best interest of the child”) հասկացությանը, որը Կոնվենցիայի մեկնաբանման և երեխաների իրավունքների ինստիտուտի 4 ընդհանուր սկզբունքներից մեկն է (տե՛ս UN Committee on the

37-րդ հոդվածի 2-րդ մասը անկյունաքարային սկզբունք է, որը ելակետային է երեխայի բոլոր իրավունքների համար: Այն պահանջում է, որ երեխային վերաբերող բոլոր հարցերում **«առաջնահերթ ուշադրություն»** տրվի երեխայի շահերին: *«Առաջնահերթ ուշադրության արժանացնել»* արտահայտությունը նշանակում է, որ երեխային վերաբերող հարցերի մասին որոշում կայացնելու համար կոնկրետ գործում դեր խաղացող և, որպես կանոն, իրարից տարբերվող շահերն իրար հետ համեմատելիս (կշռադատելիս) առաջին հերթին պետք է գնահատվի երեխայի շահը: Նման մոտեցումը արդարացված է այն առանձնահատուկ վիճակով, որում գտնվում է երեխան, մասնավորապես՝ նրա կախվածությունը, խոցելիությունը, հասունության աստիճանը և այլն: Օրինակ երեխայի շահերը պարտադիր չէ, որ համապատասխանեն ծնողների շահերին և կարող են գերակա լինել դրանց նկատմամբ: Առաջնահերթ ուշադրության արժանացնելու պարտականությունը երեխայի շահերին տալիս է հատուկ կշիռ, բայց դա չի բացառում, որ առանձին դեպքերում գերակայություն կարող է տրվել այլ շահերի: Եթե հիմնական իրավունքներով պաշտպանված շահերը համարժեք են, ապա երեխայի շահերին պետք է առաջնահերթություն տրվի, սակայն դա չի նշանակում, որ կոլիզիոն իրավիճակներում երեխայի շահերին պետք է միշտ, ինքնաբերաբար գերակայություն տրվի: Առանձին դեպքերում կարող է պահանջվել, որ երեխայի շահը ստորադասվի պաշտպանության արժանի առավել բարձր արժեքներին:

«Երեխայի շահը» դիմամիկ, բարդ, ընդգրկուն հասկացություն է, որը հնարավոր չէ վերացականորեն և օբյեկտիվ կերպով սահմանել: Այն պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ իրավիճակի, անձնական համատեքստի և երեխայի կարիքների հաշվառմամբ²⁸: ՄԱԿ-ի՝ «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի նախաբանի 6-րդ և 7-րդ պարբերություններից երևում է, որ երեխայի շահը (բարօրությունը) կարելի է հանգեցնել երեխայի անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացմանը՝ երկարաժամկետ կտրվածքով: Նման մեկնաբանության օգտին է խոսում նաև Սահմանադրության 86-րդ հոդվածի 6-րդ մասը, որը երեխայի անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացումը դիտարկում է պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկը:

ՄԱԿ-ի՝ երեխաների իրավունքների հանձնաժողովը վեր է հանել

Rights of the Children, General Comment № 5 (2003) on the General Measures of Implementation of the Convention on the Rights of the Child, կետ 12; General Comment № 12 (2009) on the Right of the Child to be Heard, կետ 2): Համաձայն կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

²⁸ Տե՛ս նույն տեղը, կետ 32:

«Երեխայի լավագույն շահերը» գնահատելու որոշակի տարրեր²⁹, ինչպիսիք են, մասնավորապես, երեխայի կարծիքը, երեխայի ինքնությունը (այդ թվում՝ տարիքը, սեռը, անձնական պատմությունը), ընտանեկան միջավայրի և հարաբերությունների պահպանումը, երեխայի խնամքը, պաշտպանությունը և անվտանգությունը, խոցելիության իրավիճակները, երեխայի առողջության, կրթության իրավունքները:

Սահմանադրական կարգավորումներին հետևելով՝ «Երեխայի լավագույն շահը» օրենսդրական իրացում է ստացել Ընտանեկան օրենսգրքում՝ 2017 թ. դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխություններով³⁰: Հենց 1-ին հոդվածը այն հռչակում է որպես ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունք՝ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողությունում, իսկ որպես «Երեխայի լավագույն շահերի» գնահատման տարրեր մատնանշվում են գրեթե նույնական դրույթներ (7-րդ մաս)³¹, ինչ ՄԱԿ-ի Հանձնաժողովի վերը նշված մոտեցումներում: Միևնույն ժամանակ, «Երեխայի լավագույն շահը» ամրագրված է նաև որպես առաջնահերթ սկզբունք՝ երեխաներին վերաբերող հարցերում իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման դեպքում, «եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել» (Ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 8-րդ մաս): «Երեխայի լավագույն շահերին» կամ «Երեխայի շահերին» անդրադարձ է կատարվում Ընտանեկան օրենսգրքի բազմաթիվ այլ հոդվածներում: Այսպես, օրինակ, Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս տալիս է «Երեխայի շահեր» հասկացության բնորոշ հատկանիշների ոչ սպառնիչ շրջանակ երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու

²⁹ Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 14 (2013), կետ 52-79:

³⁰ «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և յրագումներ կատարելու մասին» օրենք, ՀՕ-10-Ն, ՀՀՊՏ 2018.01.17/4(1362), հոդ. 28: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ «Երեխայի իրավունքների մասին» օրենքը չի պարունակում «Երեխայի լավագույն շահեր» կամ «Երեխայի շահեր» եզրույթները և Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին ու Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համարժեք դրույթ: Օրենքի առանձին դրույթներում օգտագործվում են միայն երեխայի «օրինական շահ» կամ «կենսական շահ» եզրույթները:

³¹ «Երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր)»:

հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Նշված նորմի Սահմանադրական դատարանը իր վերոհիշյալ ՄԴՈ-919 որոշման մեջ³² նույնպես որդեգրել է այն մոտեցումը, որ «երեխաների շահեր» հասկացությունը «ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից»: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան (կետ 6):

3.4. Ծնողների հետ շփվելու երեխայի իրավունքը

Ծնողների հետ շփվելու երեխայի իրավունքի վերաբերյալ Սահմանադրության 37-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը նախատեսում է օրենքով կարգավորելու վերապահում, ինչն առնվազն մոտեցման տեսանկյունից իրականացվել է Ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածով: Այն հստակորեն, նախ, հաստատում է երկու ծնողների, ինչպես նաև պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, «ինչպես նաև այլ ազգականների» հետ շփվելու իրավունքը: Հոդվածը նաև սահմանում է, որ ծնողների ամուսնալուծությունը կամ նրանց առանձին ապրելը չի սահմանափակում երեխայի իրավունքները, և որ հատկապես ծնողներից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունքը պահպանվում է նաև այն դեպքում, երբ երեխան ապրում է ծնողներից առանձին, այդ թվում՝ տարբեր պետություններում (Ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասություն): Ծնողների հետ շփվելու իրավունքը երեխան պահպանում է նաև այն դեպքերում, երբ ձերբակալման, կալանավորման, բուժվելու կամ արտակարգ այլ իրադրության պատճառով երեխան գտնվում է որևէ փակ հաստատությունում, ինչպես նաև, հակառակը, նման հաստատություններում գտնվող ծնողները պահպանում են երեխայի հետ շփվելու իրավունքը (Ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մաս):

«Երեխայի իրավունքների մասին» օրենքը նույնպես պարունակում է մի շարք դրույթներ այն երեխաների իրավունքների պաշտպանության մասին, որոնք գտնվում են ընտանեկան «արտակարգ իրավիճակներում», մասնավորապես՝ երբ երեխաները ծնողներից անջատ են ապրում (գլուխ 3, 24-32-րդ հոդվածներ):

³² Տե՛ս ՀՀՊՏ 2010.10.13/50(784), հոդ. 1132:

Սահմանադրության 37-րդ հոդվածի 3-րդ մասում երեխայի շահերը կարևորվել և ընդգծվել են նաև այն դեպքում, երբ խոսքը շփվելու իրավունքի սահմանափակումների մասին է: Օրենքը կարող է նախատեսել շփվելու իրավունքի սահմանափակում դատարանի որոշմամբ, եթե դա արդարացվում է երեխաների շահերով³³: Երեխան իրավունքունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու խնամակալության և հոգաբարձության մարմին (Ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասություն):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ինչպես ցույց է տալիս փորձը, առօրյա կյանքում ծնողների անջատ ապրելու դեպքում հնարավոր է զգալի չափով խոչընդոտել այն ծնողի հետ երեխայի շփվելու իրավունքի իրականացումը, որի հետ երեխան չի ապրում, 37-րդ հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից անհրաժեշտ է ունենալ ծնողների հետ շփվելու իրավունքի շատ ավելի մանրամասն կարգավորում, քան դա արված է Ընտանեկան օրենսգրքում և «Երեխայի իրավունքների մասին» օրենքում (15-րդ հոդված):

3.5. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հանդեպ պետության պաշտպանության պարտականությունը

37-րդ հոդվածի 4-րդ մասը պետության վրա դնում է «առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին» պաշտպանելու և դրա համար համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարտականություն: Սահմանադրական նորմի պահանջները մանրամասն կարգավորվել են մի շարք օրենսդրական ակտերում՝ նախատեսելով դրանց իրականացման և հսկողության միջոցներ: Խոսքը, նախ և առաջ, Ընտանեկան օրենսգրքում խնամակալության և հոգաբարձության իրավական ինստիտուտները կարգավորող դրույթների (գլուխ 19, 134-136-րդ հոդվածներ)³⁴, խնամատարությանը վերաբերող դրույթների (գլուխ 20, 137-140-րդ հոդվածներ) և, երկրորդ, Քաղաքացիական օրենսգրքի այն հոդվածների մասին է, որոնք կարգավորում են խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու իրավական նախապայմանները, խնամակալի և հոգաբարձուի նշանակման ընթացակարգը, նրանց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նրանց գործունեության նկատմամբ պետական հսկողության իրականացումը (33-42-րդ հոդվածներ): Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավունքների պաշտպանությանը, խնամքին և մանկատներում դաստիա-

³³ Այս պարագայում երեխաների շահերի վկայակոչումը համահունչ է նաև «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի մոտեցումներին: Տե՛ս, մասնավորապես, Կոնվենցիայի հոդվածներ 9, 20, 37 (գ):

³⁴ Ընդհանուր առմամբ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության ձևերի մասին տե՛ս Ընտանեկան օրենսգրքի բաժին 4:

րակությանը վերաբերող կարգավորումներ է պարունակում նաև «Երեխայի իրավունքների մասին» օրենքը (24-րդ և 25-րդ հոդվածներ):

Հարաբերակցությունը ՀՀ Սահմանադրության այլ դրույթների հետ

Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքը սերտ իրավական կապի մեջ է ինչպես Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքների գլխում գետեղված ընտանիքի պաշտպանության մասին (16-րդ հոդված) պետության օրյեկտիվ իրավական պարտականության, այնպես էլ ընտանիքին առնչվող մյուս երկու հիմնական իրավունքների հետ՝ ամուսնանալու ազատություն (35-րդ հոդված) և ծնողների կարգավիճակ (36-րդ հոդված): Երեխայի իրավունքներին անմիջականորեն առնչվում է նաև 38-րդ հոդվածով նախատեսված կրթության իրավունքը: Պարտադիր դպրոցական կրթության մասին դրույթը (38-րդ հոդվածի 1-ին մաս) ծառայում է այն նպատակին, որ երեխայի զարգացումը ընթանա սեփական պատասխանատվություն ունեցող և ինքնուրույն չափահաս անձնավորություն դառնալու ուղղությամբ: Խնդրո առարկա հիմնական իրավունքը ուղղակիորեն կապված է նաև սահմանադրական այն դրույթներին, որոնք ծառայում են երեխայի պաշտպանությանը՝ աշխատանքի ընդունվելու և աշխատելու առնչությամբ (57-րդ հոդվածի 4-րդ մաս): 37-րդ հոդվածում կարգավորված պաշտպանության նպատակի հետ առնվազն միջնորդված իրավական կապ ունի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը (31-րդ հոդված): Վերջապես, հիմնական իրավունքների ոլորտում երեխայի իրավական կարգավիճակի համար մեծ նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին դրույթները, որոնք երեխաները ձեռք են բերում, ամենից առաջ, առնվազն ծնողներից մեկի միջոցով (47-րդ հոդված):

37-րդ հոդվածով նախատեսված՝ երեխայի իրավունքները չեն կարող սահմանափակվել ո՛չ արտակարգ դրության և ո՛չ էլ ռազմական դրության ժամանակ (76-րդ հոդված):

Երեխայի իրավունքների իրականացման ու պաշտպանության համար իրավական առումով վերաբերելի են նաև պետության քաղաքականության մասին Սահմանադրության 3-րդ գլխի այն դրույթները, որոնք անդրադառնում են բազմազավակության օժանդակությանը և երեխաների զարգացման խթանմանը (86-րդ հոդվածի 5-րդ ու 6-րդ կետեր), ինչպես նաև այն հասարակական ոլորտներին, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն երեխաների ու պատանիների համար, ինչպիսիք են՝ ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը (86-րդ հոդվածի 11-րդ կետ) և երիտասարդության մասնակցությունը մշակութային և քաղաքական կյանքին (86-րդ հոդվածի 12-րդ կետ):

Բանալի բառեր - Մահմանադրություն, 37-րդ հոդված, անչափահաս, երեխայի իրավունքներ, տարիք, հասունություն, լսված լինելու իրավունք, երեխայի շահ, երեխային վերաբերող հարցեր, առաջնահերթ ուշադրություն, ծնողական խնամք, պետության հոգածություն և պաշտպանություն

ОТТО ЛЮХТЕРХАНДТ, НОРА САРГСЯН – Регулирование прав ребёнка в редакции 2015 г. Конституции Республики Армения. – В результате изменений 2015 года Конституция Армении впервые в отдельной статье излагает основные права ребёнка. Часть 1 статьи 37 основана на правовой концепции поощрения автономии ребёнка в зависимости от его возраста и закрепляет право выражать мнение по касающимся его вопросам. Статья 37 в § 2 предусматривает принцип «наилучших интересов ребёнка», закреплённый в статье 3 Конвенции о правах ребёнка. Этот принцип также отражён в части 3 статьи 37 в качестве критерия для оценки законности ограничения прав ребенка на поддержание регулярных личных отношений и на поддержание прямых контактов с родителями. В статье анализируются и интерпретируются положения статьи 37 конституции в контексте конституционного развития, международного опыта и законодательства РА.

Ключевые слова: статья 37, несовершеннолетний, права ребёнка, право быть выслушанным, родительский уход, опека и защита государства

OTTO LUCHTERHANDT, NORA SARGSYAN – Regulation of the Rights of the Child in the Constitution of the Republic of Armenia in the Version of 2015. – As a result of amendments of 2015, the Constitution of the Republic of Armenia for the first time provides for the basic rights of the child in a separate article. Paragraph 1 of article 37 of the Constitution is based on the legal concept of promoting the child's autonomy with his/her age and enshrines the right to express an opinion on matters concerning to him/her. Article 37 § 2 of the Constitution provides for the principle of 'the best interests of the child' established in the article 3 of the Convention on the Rights of the Child. This principle is also reflected in article 37 § 3 as a criterion to assess the legitimacy of limiting the child's right to maintain regular personal relationships and to maintain direct contacts with parents. The article analyzes and interprets the provisions of article 37 of the Constitution in the context of constitutional developments, international experience and the legislation of the Republic of Armenia.

Key words: Constitution, article 37, minor, rights of child, age, maturity, right to be heard, interests of child, matters concerning child, primary consideration, parental care, state care and protection

Ներկայացվել է՝ 10.06.2019,
գրախոսվել է՝ 12.06.2019,
ընդունվել է տպագրության՝ 25.07.2019

**ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

Իրավական պետությունը բնութագրող հատկանիշներից մեկը իրավական, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվության գործուն մեխանիզմների երաշխավորումն է: Պետության սահմանադրական պատասխանատվության մեխանիզմների բացակայությունը կամ անկատարությունը հանգեցնում է պետական իշխանության լիազորություն – պատասխանատվություն սահմանադրական շղթայի խաթարմանը և դրա հետևանքով պետական իշխանության լիազորությունների իրականացման կամ արդյունավետ իրականացման երաշխիքների թուլացմանը:

Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը մյուս սահմանադրական ինստիտուտների համեմատ, գիտական լայնածավալ հետազոտության առարկա չի եղել, ուստի այժմ է ընկնում սահմանադրական պատասխանատվության մեխանիզմների անկատարությամբ: Մասնավորապես՝ պետությունների մեծ մասում այդ մեխանիզմները հատվածական են ներդրված կամ սերտաճած են քաղաքական պատասխանատվության մեխանիզմների հետ¹, թեև որոշ պետություններում (Լեհաստան, Ավստրիա) առկա են սահմանադրական պատասխանատվության համեմատաբար գործուն մեխանիզմներ:

Պետությունների սահմանադրություններում սահմանադրական պատասխանատվության միջոցներ չնախատեսելը երբեմն հիմնավորվում է քաղաքական պատասխանատվության միջոցներ կիրառելու հնարավորությամբ²: Սակայն այդպիսի մոտեցումը խեղաթյուրում է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի էությունը, քանի որ քաղաքական պատասխանատվության մեխանիզմները, իրենց բնույթով պայմանավորված, չեն կարող փոխարինել կամ լրացնել

* Աշխատանքը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի **18T-5E130** գիտական հետազոտական թեմայի շրջանակներում:

¹ Տե՛ս Օպոնիրующий доклад профессора Г. Арутюняна на тему «Закон и государство» на 4-м конгрессе всемирной конференции конституционных судов. Вильнюс, 13 сентября 2017, հասանելի էր՝ <http://concourt.am/armenian/structure/president/articles/vilnyus2017-ru.pdf>

² Տե՛ս **Хугаева Р.** Конституционная ответственность высших органов государственной власти Российской Федерации. Диссертация на соиск, учен, степени д. ю. н. Краснодар, 2011, էջ 182:

սահմանադրական պատասխանատվության մեխանիզմներին: Ուստի *սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման գործում առանցքային է սահմանադրական մակարդակում «սահմանադրական» և «քաղաքական» պատասխանատվության տեսակների հստակ տարանջատումը:*

Տեսական գրականությունում ևս «սահմանադրական» և «քաղաքական» պատասխանատվության տեսակների տարանջատման հարցում միակարծություն չկա: Որոշ հեղինակներ գտնում են, որ «սահմանադրական» և «քաղաքական» պատասխանատվությունները միմյանցից դժվար է հստակ տարանջատել, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են³, իսկ ոմանք էլ պատասխանատվության քննարկվող տեսակները միմյանցից հստակ տարանջատում են՝ նշելով, որ քաղաքական պատասխանատվությունը իրավական պատասխանատվության տարրեր չի պարունակում, ուստի սահմանադրական պատասխանատվությունից դուրս է⁴:

Ընդհանուր առմամբ «սահմանադրական» և «քաղաքական» պատասխանատվությունները սոցիալական պատասխանատվության ինքնուրույն տեսակներ են և միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով՝ պատասխանատվության հիմք, պատասխանատվության ենթակա և ենթարկող սուբյեկտների շրջանակ, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգ և այլն:

1. Քաղաքական պատասխանատվության *հիմք* կարող են լինել քաղաքական գործունեությունը ոչ արդյունավետ իրականացնելը կամ քաղաքական բնույթ կրող այլ պատճառներ: Քաղաքական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար բնավ պարտադիր չէ սահմանադրության խախտման դեպքի առկայություն, թեպետ որոշ դեպքերում սահմանադրության խախտումը կարող է քաղաքական պատասխանատվության միջոցներ կիրառելու առիթ լինել: Մինչդեռ սահմանադրական պատասխանատվության հիմքը սահմանադրության նորմի խախտումն է, այն է՝ սահմանադրությամբ սահմանված գործառույթները և լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սահմանադրությամբ սահմանված պահանջները և պայմանները խախտելը⁵:

2. Քաղաքական պատասխանատվության կիրառումը *հայեցողական բնույթ* ունի, որի պարագայում քաղաքական պատասխանա-

³ Տե՛ս **Страшун Б. А.** К понятию конституционной ответственности // Конституционно-правовая ответственность, проблемы России, опыт зарубежных стран / Под ред. С. А. Авакьяна. М., 2001, էջ 73:

⁴ Տե՛ս **Колосова Н. М.** Конституционная ответственность в Российской Федерации. Ответственность органов государственной власти и иных субъектов права за нарушение конституционного законодательства в Российской Федерации. М., 2000, էջ 22:

⁵ Տե՛ս **Виноградов В. А.** Ответственность в механизме охраны конституционного строя. М., 2005, էջ 58-69:

տվության ենթարկելու լիազորություն ունեցող սուբյեկտները կաշկանդված չեն քաղաքական պատասխանատվության միջոցների կիրառմամբ: Մինչդեռ սահմանադրական պատասխանատվության դեպքում սահմանադրության յուրաքանչյուր նորմի խախտումը անխուսափելիորեն հանգեցնում է կամ պետք է հանգեցնի սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման, հետևաբար՝ սահմանադրությամբ պետք է երաշխավորվի սահմանադրության յուրաքանչյուր նորմի խախտման համար սահմանադրական պատասխանատվության անխուսափելիությունը:

3. Քաղաքական պատասխանատվության *սուբյեկտ* են միայն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք՝ վարչապետը, նախարարները և այլն: Մինչդեռ սահմանադրական պատասխանատվության սուբյեկտների շրջանակը ավելի լայն է, այն ներառում է սահմանադրական կարգավիճակով օժտված բոլոր պետական մարմինները և պաշտոնատար անձանց, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող:

4. Քաղաքական պատասխանատվության միջոցները կիրառվում են քաղաքական պատասխանատվություն կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշումներով, որպես կանոն՝ առանց դատավարական գործընթացների, սակայն սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով: Մինչդեռ սահմանադրական պատասխանատվության միջոցները, որպես կանոն, կիրառվում են կա մ անմիջականորեն սահմանադրության ուժով, կա մ սահմանադրական արդարադատության մարմինների միջոցով⁶, կա մ այլ մասնագիտացված մարմինների միջոցով⁷:

Այժմ «սահմանադրական» և «քաղաքական» պատասխանատվության մեխանիզմները դիտարկենք 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) համատեքստում:

Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է *Հանրապետության նախագահը*: Սահմանադրությամբ նախատեսված է պաշտոնանկության միջոցով Հանրապետության նախագահին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմ, այն է՝ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել (...) Սահմանադրության կոպիտ խախտման համար: Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան: Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական

⁶ Տե՛ս Ավստրիայի Սահմանադրության 142-րդ հոդված:

⁷ Տե՛ս Լեհաստանի Սահմանադրության 198-199-րդ հոդվածներ:

դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով (Սահմանադրության 141-րդ հոդված)⁸:

Սահմանադրության 141-րդ հոդվածից կարող է տպավորություն ստեղծվել, թե Սահմանադրությամբ նախատեսված է Սահմանադրության կոպիտ խախտման դեպքում Հանրապետության նախագահին սահմանադրական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմ, սակայն իրականում Հանրապետության նախագահին պատասխանատվության ենթարկելու նախատեսված մեխանիզմը քաղաքական պատասխանատվության բնույթ ունի: Քանի որ Հանրապետության նախագահի պաշտոնանկության գործընթացը նախաձեռնելու և այդ հարցի վերաբերյալ որոշում ընդունելու լիազորությունը, վերջին հաշվով, վերապահված է Ազգային ժողովին, ուստի Հանրապետության նախագահի պաշտոնանկ անելու հարցը Ազգային ժողովի քաղաքական հայեցողության դաշտում է⁹: Այս պարագայում կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե ինչպես է հանգուցալուծվելու այն իրավիճակը, երբ, օրինակ, Հանրապետության նախագահը խախտում է Սահմանադրությունը¹⁰, իսկ Ազգային ժողովն էլ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում չի ընդունում:

Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է նաև *Ազգային ժողովը*, որի նկատմամբ կիրառվող սահմանադրական պատասխանատվության հիմնական միջոցը արձակումն է: Սահմանադրության վերլուծությունից պարզ է դառնում, որ Ազգային ժողովը արձակվում է միայն այն դեպքում, երբ չի կարողանում ընտրել վարչապետ և ձևավորել կառավարություն¹¹: Սահմանադրությամբ Ազգային ժողովի արձակման այլ հիմք նախատեսված չէ: Այդ պարագայում ևս կարևորություն է ձեռք բերում այն հարցի պատասխանը, թե ինչպես է հանգուցալուծվելու այն իրավիճակը, երբ, օրինակ՝ Ազգային ժողովը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները՝ այդ կերպ խախտելով Սահմանադրությունը¹²:

⁸ Մի շարք պետություններում ևս հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել սահմանադրության խախտման համար (Սլովենիայի Սահմանադրության 109-րդ հոդված, Սերբիայի Սահմանադրության 118-րդ հոդված):

⁹ Հարկ է նշել, որ Բուլղարիայի Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ եթե սահմանադրական դատարանը արձանագրում է հանրապետության նախագահի կողմից սահմանադրության խախտման փաստը, հանրապետության նախագահի լիազորությունները դադարեցվում են:

¹⁰ Օրինակ՝ Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք (124-րդ հոդվածի 4-րդ մաս), չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (124-րդ հոդվածի 5-րդ մաս):

¹¹ Տե՛ս Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր, 149-րդ և 151-րդ հոդվածների 3-րդ մասեր:

¹² Հատկանշական է, որ որոշ պետություններում առկա են արձակման միջոցով

Ազգային ժողովի նախագահը և սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է, որը սահմանադրական պատասխանատվության կարող է ենթարկվել Սահմանադրության խախտման համար¹³: Սակայն Սահմանադրությամբ առկա է միայն Ազգային ժողովի նախագահին քաղաքական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, այն է՝ Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները կարող են հետ կանչվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ¹⁴: Այս պարագայում ևս հարց է առաջանում, թե ինչպես է հանգուցալուծվելու այն իրավիճակը, երբ Ազգային ժողովի նախագահը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները՝ այդ կերպ խախտելով Սահմանադրությունը, իսկ Ազգային ժողովը Ազգային ժողովի նախագահի նկատմամբ քաղաքական պատասխանատվության միջոցներ չի կիրառում:

Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներ են նաև *կառավարությունը և վարչապետը*: Սահմանադրությամբ կառավարությանը և վարչապետին սահմանադրական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ ևս նախատեսված չեն, թեպետ առկա է քաղաքական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, այն է՝ Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել վարչապետին, ինչը հանգեցնում է կառավարության հրաժարականին (հոդվ. 115):

Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է նաև *գլխավոր դատախազը*: Սահմանադրությամբ նախատեսված է գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու հնարավորություն, այն է՝ *օրենքով սահմանված դեպքերում* Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-րդով *կարող է* պաշտոնանկ անել գլխավոր դատախազին (հոդվ. 177, մաս 3): Նշվածից բխում է, որ գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու գործընթացը ևս Ազգային ժողովի քաղաքական հայեցողության տիրույթում է, հետևաբար քաղաքական պատասխանատվության տարրեր է պարունակում:

պառլամենտին սահմանադրական պատասխանատվության ենթարկելու նաև այլ հիմքեր. օրինակ՝ պառլամենտը հաճախակի ընդունել է սահմանադրությանը հակասող օրենքներ (Ուզբեկստանի Սահմանադրության 95-րդ հոդված) կամ չի կատարել սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված լիազորությունները (Մոլդովայի Սահմանադրության 85-րդ հոդված):

¹³ Օրինակ՝ Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը (103-րդ հոդվածի 5-րդ մաս): Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը (104-րդ հոդվածի 2-րդ մաս): Հանրապետության նախագահի պաշտոնակության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը (144-րդ հոդված):

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սահմանադրական պատասխանատվության մեխանիզմների վերլուծությունից պարզ է դառնում, որ Սահմանադրությունում սահմանադրական պատասխանատվության մեխանիզմները հատվածական են ներդրված կամ սերտաձած են քաղաքական պատասխանատվության մեխանիզմների հետ, մասնավորապես՝ ա) մի շարք դեպքերում Սահմանադրության խախտման համար սահմանադրական պատասխանատվության մեխանիզմներ պարզապես նախատեսված չեն, մինչդեռ սահմանադրական պատասխանատվության գործուն մեխանիզմ ունենալու համար առանցքային է Սահմանադրության յուրաքանչյուր նորմի խախտման համար սահմանադրական պատասխանատվության անխուսափելիության երաշխավորումը, բ) որոշ դեպքերում Սահմանադրության խախտման համար սահմանադրական պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն, սակայն առկա է քաղաքական պատասխանատվության միջոցներ կիրառելու հնարավորությունը, մինչդեռ սահմանադրական պատասխանատվության գործուն մեխանիզմ ունենալու համար առանցքային է սահմանադրական և քաղաքական պատասխանատվության տեսակների հստակ տարանջատումը, գ) ընդհանուր առմամբ, սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման համար առանցքային է նաև սահմանադրական պատասխանատվության հիմքի, սահմանադրական պատասխանատվության ենթարկվող և ենթարկվելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի, ինչպես նաև սահմանադրական պատասխանատվության ենթարկվելու հետ կապված ընթացակարգի հստակ իրավակարգավորումը:

Բանալի բառեր – *քաղաքական պատասխանատվություն, սահմանադրական պատասխանատվություն, Հանրապետության նախագահ, պառլամենտ, կառավարություն, վարչապետ*

АЙК КЕСОЯН – Некоторые соображения по совершенствованию института конституционной ответственности. – В статье рассматриваются ключевые особенности, присущие конституционным и политическим обязанностям. Механизмы конституционной и политической ответственности рассмотрены по изменениям, внесённым в Конституцию РА в 2015 г. Отмечается, что в отдельных случаях просто не предусмотрены механизмы конституционной ответственности за нарушение конституции или меры конституционной ответственности, но указаны меры политической ответственности.

Ключевые слова: *политическая ответственность, конституционная ответственность, президент республики, парламент, правительство, премьер-министр*

HAYK KESOYAN – Some Considerations on the Improvement of the Institution of Constitutional Responsibility. – The article focuses on the main features inherent in the "constitutional" and "political" responsibilities. At the same time, the mechanisms of "constitutional" and "political" responsibilities were observed within the

context of the RA Constitution with amendments of 2015. As a result of the analysis, it is noted that in many cases, the Constitution of the Republic of Armenia of 2015 amendments do not provide constitutional responsibility mechanisms or the constitutional responsibility measures for violation of constitution, while possibility of applying political responsibility measures exists.

Key words: *Political responsibility, constitutional responsibility, the president of the Republic, the parliament, the government, the prime minister.*

Ներկայացվել է՝ 26.06.2019,
գրախոսվել է՝ 26.06.2019,
ընդունվել է տպագրության՝ 25.07.2019

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՏԱՐԻՔԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԴՐՅԱԼ*

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Քրեական օրենքով արգելված արարք կարող են կատարել տարիքային ցանկացած խմբի ներկայացուցիչները, սակայն նրանցից ոչ բոլորն են ենթակա քրեական պատասխանատվության: Անձին պատասխանատվության ենթարկելու հիմնարար սկզբունքներից մեկը՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը, ենթադրում է, որ հանցավոր վարքագիծ դրսևորող անձը պետք է ունակ լինի գիտակցելու իր արարքի բնույթը, սոցիալական նշանակությունը, ունենա սեփական վարքագիծը ղեկավարելու կարողություն: Մինչդեռ անձն իր վարքագծի բնույթը, նշանակությունը, հնարավոր հետևանքները հասկանալու, իր ցանկությունները և մղումները հասարակությունում ընդունելի արժեքային համակարգին ու բարոյական սկզբունքներին, օրենսդրությամբ սահմանված կանոններին համադրելու և դրանց իմաստը ընկալելու կարողություն ձեռք է բերում ոչ թե ծննդյան պահից, այլ ավելի ուշ՝ կենսաբանական և սոցիալ-հոգեբանական զարգացմանը զուգընթաց: Անձի մեջ իրավագիտակցության որոշակի մակարդակ ձևավորվելուց հետո միայն կարելի է քննարկել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, ինչն էլ ենթադրում է որոշակի տարիքի հասած լինելը: Հետևաբար, մանկահասակները, որոնք ընդունակ չեն գիտակցելու իրենց վարքագծի հակաիրավականությունը կամ ղեկավարելու այն, չեն կարող հանցագործության սուբյեկտ լինել և քրեական պատասխանատվության ենթարկվել:

Ասվածի ուղղակի վկայությունն է Գերմանիայի քրեական օրենսգրքի հոդված 19-ը, որը, 14 տարին դիտարկելով որպես քրեական պատասխանատվության նվազագույն տարիք, սահմանում է, որ հանցանքի կատարման պահին 14 տարին չլրացած անձինք պետք է դիտվեն որպես առանց մեղքի գործող¹:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիք սահմա-

* Հոդվածը պատրաստվել է «Անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում» ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի 18T-5E230 թեմատիկ հայտի ֆինանսավորման շրջանակում:

¹ Տե՛ս German Criminal Code, 13.11.1998, https://ec.europa.eu/anti-trafficking/sites/anti-trafficking/files/criminal_code_germany_en_1.pdf.

նելու անհրաժեշտության հարցին անդրադարձել են դեռևս հին և միջ-նադարյան քրեական իրավունքում:

Մասնավորապես, Մխիթար Գոշի Դատաստանագրքի գլուխ ԻԲ-ում սահմանվում էր. «Եթե մանկանց մեջ սպանություն լինի և տեսնեն, թե սպանողը տասներկու տարեկանից վեր է, ապա նրա համար արյան դատաստան լինի և սպանողն այդպես տուժի. իսկ եթե տասնմեկ տարեկան է կամ տասը և կես, ապա՝ կես չափով տուժի: Իսկ եթե տասը տարեկանից վար է, երեքից մեկ չափով լինի արյան դատաստանը: Եվ թեպետ այլ մեղքերի համար տասնհինգ տարեկանն է հիշատակվում, սակայն այստեղ հիշատակեցինք արյան դատաստանի մասին»²: Ակնհայտ է, որ այստեղ արդեն իսկ ըստ տարիքային խմբերի տարբերակված մոտեցում էր. եթե հանցագործությունների մեծ մասի համար պատասխանատվությունն առաջանում էր 15 տարեկանից, ապա կյանքի դեմ ուղղված ռոնձգության համար՝ ավելի ցածր տարիքից: Բնարկե, Դատաստանագրքում մատնանշված չէր այն նվազագույն շեմը, որից ցածր տարիքային խմբի ներկայացուցիչները ընդհանրապես քրեական պատասխանատվության չէին ենթարկվում: Գրեթե նույն սկզբունքները պահպանվել են նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում³:

Հռոմեական իրավունքը ևս անդրադարձել է քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի հիմնախնդրին՝ որպես այդպիսին սահմանելով 7 տարին: Նշված տարիքային շեմի սահմանումը պատահական չէր, այլ հիմնված էր մարդու զարգացման՝ Հիպոկրատի առաջ քաշած կլինակտերիկ փուլերի համակարգի տեսության վրա, համաձայն որի՝ յուրաքանչյուր 7 տարին մեկ մարդու մոտ տեղի է ունենում օրգանիզմի վերակառուցում ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական առումով⁴: Թերևս դրանով է պայմանավորված նաև այն, որ առանձին երկրներում քրեական պատասխանատվություն է սահմանվում 7 (օրինակ՝ Եգիպտոսում, Հնդկաստանում, Սինգապուրում) կամ 14 տարեկանից (օրինակ՝ Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում)⁵:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը սահմանելու չափանիշները բազմազան են. եթե եվրոպական երկրների մեծ մասում դրանք հիմնականում վերաբերում են անձի հոգեբանական զարգացման մակարդակին, ապա մուսուլմանական իրավունքում քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի որոշման

² «Մխիթար Գոշի Դատաստանագիրք», Գ խմբագրություն, Եր., 2001, էջ 56:

³ Տե՛ս **Зурначян А. С.** Судебник Смбата Спарапета как памятник армянского права // Юридические науки: проблемы и перспективы: материалы II Междунар. науч. конф., Пермь: Меркурий, 2014, էջ 7-9:

⁴ Տե՛ս **Спасенников Б. А.** О 7-летнем возрасте уголовной ответственности. No-vaInfo.Ru, 2015, № 36, էջ 125:

⁵ Տե՛ս **Таганцев Н. С.** Курс русского уголовного права // Н.С. Таганцев. СПб., 1874. Кн. 1. Часть общая, էջ 84-85:

հիմքում դրված է հոգևոր հասունացման չափանիշը (օրինակ՝ Իրանում աղջիկների համար քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ 9, տղաների համար՝ 15 տարեկանից, ինչը պայմանավորված է նաև նրանց սեռահասունացման գործոնով)⁶:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը սահմանելու ժամանակ հաշվի են առնվում նաև այլ գործոններ, օրինակ՝ տվյալ երկրում անչափահասների հանցավորության վիճակը, դրա միտումները, հանցագործությունների առանձին տեսակները երեխաների կողմից առավել հաճախ կատարելը, անչափահասների հանցավորության կանխարգելման՝ տվյալ երկրում առկա սոցիալական, կազմակերպական, տնտեսական հնարավորությունները, բնակչության իրավագիտակցության մակարդակը, իրավապահ մարմինների և դատական համակարգի հնարավորությունները, հասարակության բարոյա-հոգեբանական մթնոլորտը և այլն⁷: Ասվածի վկայությունն է ՌԴ քրեական օրենսգիրքը, որը մինչ հանցանք կատարելը 16 տարին լրացած լինելը սահմանելով որպես հանցագործության սուբյեկտին ներկայացվող պահանջ, 14 տարեկանից պատասխանատվություն է սահմանում այնպիսի հանցավոր արարքների համար, ինչպիսիք են, օրինակ՝ ահաբեկչական ակտը, ահաբեկչական գործունեություն իրականացնելու համար նախնական պատրաստվածություն անցնելը, ահաբեկչական համագործակցությանը անդամակցելը, զանգվածային անկարգություններին մասնակցելը, վանդալիզմը և այլն:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիք սահմանելու հարցը բարձրացվել է նաև միջազգային իրավական մակարդակում, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 40-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետը սահմանում է. «...Մասնակից պետությունները պետք է նպաստեն այնպիսի օրենքների, ընթացակարգերի, մարմինների և կառույցների ձևավորմանը, որոնք հատուկ կիրառելի կլինեն օրենքը խախտած կամ դրա խախտման մեջ կասկածվող երեխաների նկատմամբ, մասնավորապես, (ա) այն նվազագույն տարիքի սահմանմանը, որից ցածր տարիքային խմբի երեխաները կդիտվեն որպես քրեական օրենսդրությունը խախտելու ունակություն չունեցող...»:

Այնուհանդերձ, ոչ մի միջազգային իրավական ակտ չի սահմանել այն միասնական տարիքը, որը յուրաքանչյուր պետությունում պետք է դիտվի որպես քրեական պատասխանատվության նվազագույն տարիք:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի

⁶ Տե՛ս **Mohammad Rasool Ahangaran, Zahra Abbasi**. The Age of Criminal Responsibility in Children: Some of Islamic Views. *International Journal of Pediatrics*, Vol.3, N.4-1, Serial № 19, 2015, էջ 778; **Будзинский С.** Начала уголовного права. Варшава, 1870, էջ 80:

⁷ Տե՛ս **Уголовное право. Общая часть. Томск, 2016, էջ 107–109; Зыков Д. А., Шеслер А. В., Шеслер С. С.** Уголовно-правовые вопросы возраста уголовной ответственности // "Вестник Владимирского юридического института". 2017, № 4 (45), էջ 63-67:

40/33 բանաձևով հաստատված «Պեկինյան կանոնների» (ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ) 4-րդ կետում նույնպես սահմանված է քրեական պատասխանատվության տարիքը կանոնակարգելու անհրաժեշտությունը: Այդ դրույթով սահմանվում է. «Այն իրավական համակարգերում, որոնցում առկա է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդ տարիքի նվազագույն շեմը չպետք է սահմանվի շատ ցածր հաշվի առնելով անչափահասների հուզական, հոգեկան և մտավոր հասունության գործոնները»:

«Պեկինյան կանոնները» նաև պարունակում են ներկայացված կետի մեկնաբանություն, որը սահմանում է. «Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը ըստ երկրների տարբեր է՝ պայմանավորված պատմական և մշակութային առանձնահատկություններով: Ժամանակակից մոտեցումը պետք է ուշադրություն դարձնի հետևյալին՝ կարող է արդյոք երեխան ընկալել քրեական պատասխանատվության բարոյական և հոգեբանական բաղադրիչները, այսինքն՝ ընկալման և գիտակցման իր անհատական կարողություններով պայմանավորված՝ կարող է արդյոք պատասխան տալ իր հակահասարակական վարքագծի համար: Եթե քրեական պատասխանատվության նվազագույն տարիքային սահման նախատեսված չէ կամ այն սահմանված է շատ ցածր, պատասխանատվության գաղափարը դառնում է իմաստագուրկ: Ընդհանուր առմամբ, իրավախախտման կամ հանցավոր վարքագծի համար պատասխանատվության և այլ սոցիալական իրավունքների ու պարտականությունների սահմանման առումով սերտ հարաբերակցություն է առկա (օրինակ՝ ամուսնական կարգավիճակի, քաղաքացիական գործունակության և այլն): Հետևաբար, պետք է ջանքեր գործադրել՝ տարիքային նվազագույն ողջամիտ շեմը որոշելու առումով, ինչը հնարավոր կլինի կիրառել միջազգային մակարդակով»:

Չնայած «Պեկինյան կանոնների» այս դրույթին՝ պետությունների սահմանած քրեական պատասխանատվության նվազագույն տարիքային սահմանները դեռևս հեռու են համադրելի լինելուց, մասնավորապես՝ ԱՄՆ տարբեր նահանգներում երեխան քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել սկսած 6, Եգիպտոսում, Սինգապուրում, Հնդկաստանում՝ 7, Շոտլանդիայում՝ 8, Շվեյցարիայում 10 (ընդ որում, մինչ 2006 թ. այս երկրում նույնպես երեխաները ենթակա էին քրեական պատասխանատվության 7 տարեկանից), Անգլիայում, Հյուսիսային Իռլանդիայում, Ավստրալիայում՝ 10, Իռլանդիայում, Պորտուգալիայում, Հունաստանում, Հոլանդիայում, Հունգարիայում, Թուրքիայում՝ 12, Ֆրանսիայում՝ 13, Գերմանիայում⁸, Ավստրիայում, Իտալիա-

⁸ Տե՛ս German Criminal Code, 13.11.1998; https://ec.europa.eu/anti-trafficking/sites/anti-trafficking/files/criminal_code_germany_en_1.pdf

յում, Իսպանիայում՝ 14, Դանիայում, Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում՝ 15, Բելգիայում, Լյուքսեմբուրգում՝ 18 տարեկանից⁹: Ընդ որում, նշված երկրներում, որպես կանոն, սահմանվում է քրեական պատասխանատվության միասնական նվազագույն տարիք՝ առանց հանցագործության տեսակների միջև տարբերակում դնելու:

Մինչդեռ մի շարք երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, ՌԴ-ում, Չինաստանում, Լեհաստանում, պատասխանատվության շեմերը տարբերակված են: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 24-ի համաձայն՝

«1. Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը:

2. Այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112-116-րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), գողության (177-րդ հոդված), կողոպուտի (176-րդ հոդված), շորթման (182-րդ հոդված), առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու (183-րդ հոդված), ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու (185-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր), զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու (238-րդ հոդված), թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու (269-րդ հոդված), տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու (246-րդ հոդված), խուլիգանության (258-րդ հոդված) համար...»¹⁰:

Ներկայացված դրույթը գրեթե նույնությամբ կրկնում է ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 20-ում արտացոլված կարգավորումները, այն տարբերությամբ, որ ՌԴ-ում 14 տարեկանից քրեական պատասխանատվություն է սահմանված նաև՝ ահաբեկչական ակտի, ահաբեկչական գործունեություն իրականացնելու համար նախնական պատրաստվածություն անցնելու, ահաբեկչական համագործակցությանը անդամակցելու, ահաբեկչական կազմակերպության գործունեությանը մասնակցելու, հանցագործության մասին իմանալ չհայտնելու, պատանդ վերցնելու, ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալու, օրենքով արգելված զինված խմբավորմանը անդամակցելու, օդային

⁹ Տե՛ս **Muncie J.** The ‘Punitive Turn’ in Juvenile Justice: Cultures of Control and Rights Compliance in Western Europe and the USA. *Jouth Justice* 2008, Volume 8, Issue 2, էջ 107-121; **Dünkel F.** Juvenile Justice Systems in Europe – Reform Developments between Justice, Welfare and ‘New Punitiveness’. *Kriminologijos studijos* 2014/1, էջ 43-44:

¹⁰ ՀՀ քրեական օրենսգրք, ընդունվել է 18.04.2003:

կամ ջրային տրանսպորտային միջոցին ապօրինի տիրանալու, զանգվածային անկարգություններին մասնակցելու, վանդալիզմի, պայթուցիկ նյութեր կամ սարքեր ապօրինի ձեռք բերելու, փոխադրելու, իրացնելու, պահելու, տեղափոխելու կամ կրելու, դրանք պատրաստելու, պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգություն կատարելու, միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց կամ կազմակերպությունների վրա հարձակվելու, միջազգային ահաբեկչության համար¹¹:

Լեհաստանի քրեական օրենսգրքի հոդված 10-ի համաձայն՝ քրեական պատասխանատվություն սահմանվում է 17 տարեկանից: 15 տարեկանից քրեական պատասխանատվություն է առաջանում սպանության, Լեհաստանի նախագահի կյանքի հանդեպ ոտնձգության, անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու, մարդու կյանքի, առողջության կամ սեփականության համար վտանգ ստեղծող հրկիզման կամ պայթեցման, ջրային կամ օդային նավի զավթման, պատանդ վերցնելու, ավազակության, բռնաբարության համար¹²: Սակայն քրեական օրենսգրքով նաև ամրագրվում է, որ այս տարիքի անչափահասը քրեական պատասխանատվության ենթարկվում է միայն այն դեպքում, երբ դա բխում է կոնկրետ գործի հանգամանքներից, այսինքն՝ հանցանք գործած անձի անձնային հատկանիշները, հոգեկանի զարգացման մակարդակը, կյանքի պայմանները նման անհրաժեշտություն են թելադրում, և հատկապես այն դեպքում, եթե մինչ այդ կիրառված դատարարական կամ ուղղիչ միջոցները օգուտ չեն տվել:

ՀՀ, ՌԴ և Լեհաստանի քրեական օրենսդրությունների համեմատախրավական վերլուծությունը վկայում է, որ անչափահասների համար տարիքային տարբերակված շեմերի սահմանման սկզբունքով քրեական պատասխանատվություն նախատեսելիս ոչ միշտ է պահպանվում հանցավոր վարքագիծ դրսևորող անձի կողմից իր արարքի սոցիալական նշանակությունն ու բնույթը գիտակցելու և այն ղեկավարելու կարողության կանխավարկածը: Մասնավորապես, հստակ չէ այն չափանիշը, որի հիման վրա էլ առանձին արարքների համար քրեական պատասխանատվությունը պետք է առաջանա 16, իսկ մյուսների համար՝ 14 տարեկանից¹³: Օրինակ՝ ՌԴ-ում 14 տարեկանից պատասխանատվություն է սահմանվում հանցագործության մասին իմանալ չհայտնելու համար, մինչդեռ ՀՀ-ում այդ նույն արարքի համար պատասխանատվությունը սահմանվում է 16, Լեհաստանում՝ 17 տարեկանից:

¹¹ Տե՛ս «Уголовный кодекс РФ», 13.06.1996:

¹² Տե՛ս «Criminal Code of Poland», 06.06.1997:

¹³ Տե՛ս **Прокументов Л. М.** Проблемы определения возраста привлечения к ответственности несовершеннолетних в уголовном законодательстве Российской Федерации // "Вестник Томского государственного университета", 2017, № 419, էջ 202-206:

Խնդրահարույց է նաև այն, որ ըստ հանցագործության տեսակների տարբերակված տարիքային շեմերի քրեական պատասխանատվություն սահմանելու պարագայում օրենսդիրը նույն հանցակազմի հիմնական տեսակի համար պատասխանատվությունը նախատեսում է ավելի բարձր, իսկ դրա ծանրացնող հանգամանքներով տեսակի համար ավելի ցածր տարիքից¹⁴: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքը գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար քրեական պատասխանատվություն է սահմանում 16 տարեկանից, իսկ նույն արարքը խմբի կազմում կատարելու համար՝ 14 տարեկանից: Դժվար է ընդունել, որ 15 տարեկան անձը, որը միայնակ գործելիս չի գիտակցում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու հակաիրավականությունը, այն կպատկերացնի խմբի կազմում գործելու պարագայում:

Կարծում ենք՝ նշված խնդիրներից խուսափելու լավագույն տարբերակը քրեական պատասխանատվության միասնական տարիքային շեմ սահմանելն է:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև անձի տարիքը լրացած լինելու հանգամանքի պարզաբանումը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 23-ը սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու *պահին* հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի»: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 24-ի 1-ին մասը սահմանում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, որի տասնվեց տարին լրացել է *նախքան* հանցանք կատարելը:

Օրենսդրի կողմից օգտագործվող այս երկու հասկացությունները՝ «հանցանք կատարելու պահին» և «նախքան հանցանք կատարելը», որոշակի թյուրըմբռնման տեղիք են տալիս, և հարց է ծագում, թե ինչպես վարվել այն դեպքերում, երբ մինչ հանցանքը սկսելը անձի տարիքը դեռ չէր լրացել, սակայն հանցանքը կատարելու ընթացքում (օրինակ՝ տևող, շարունակվող կամ օբյեկտիվ կողմից երկար ընթացք ունեցող արարքների պարագայում) տարիքը լրանում է: Մասնավորապես նման իրավիճակներ կարող են ծագել տևող հանցագործությունների պարագայում, օրինակ՝ երբ 15 տարեկան անձը հրազեն է գտնում, տանում իր բնակության վայր և այնտեղ թաքցնում: Հետագայում՝ չափա-հասության տարիքը հատելուց հետո, նրա բնակության վայրի խուզարկության ժամանակ այդ զենքը հայտնաբերվում է:

Ելնելով տևող հանցագործության բովանդակությունից, այն է՝ միննույն հանցանքի տևական իրականացում, որն ավարտված է համարվում անձի բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքը դադարելու պահից, կարելի է ենթադրել,

¹⁴ См. у **Мифтахов А. М.** Возраст, с которого наступает уголовная ответственность по уголовному кодексу Российской Федерации // "Юридическая мысль", 2016, № 6 (98), էջ 121-123:

որ նշված դեպքում անձը չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, քանի որ մինչ հանցանքը կատարելը նրա՝ օրենքով սահմանված տարիքը լրացած չի եղել: Հարցի նման լուծումը, սակայն, թերևս արդարացված չէ:

Համանման իրավիճակներ կարող են ծագել նաև շարունակվող հանցագործությունների դեպքում, երբ, օրինակ, 15 տարեկան երեխան որոշում է խարդախության եղանակով տիրանալ առանձնապես խոշոր չափի գումարի և իր հանցավոր մտադրությունն իրականացնում է 4 տարում:

Առավել տրամաբանական է հարցի հետևյալ լուծումը. անձին դիտարկել որպես հանցագործության սուբյեկտ տևող, շարունակվող հանցագործության բաղկացուցիչ այն էպիզոդների համար, որոնք կատարվել են քրեական օրենսգրքով սահմանված տարիքային շեմը հատելուց հետո: Օրինակ, եթե կատարվել է շարունակվող հանցագործություն, անձը ենթակա է պատասխանատվության միայն այն էպիզոդների համար, որոնք կատարվել են տարիքը լրանալուց հետո, տևող հանցագործության կամ օբյեկտիվ կողմից երկար ընթացք ունեցող հանցագործության դեպքում անձը ենթակա է պատասխանատվության այն պահից, երբ լրանում է քրեական օրենքով սահմանված նրա տարիքը:

Կարծում ենք՝ քննարկվող հարցի վերաբերյալ հնարավոր թյուրըմբռնումներից խուսափելու համար անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և հոդված 24-ի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ. «Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացած է եղել հանցանք կատարելու պահին»:

Տարիքի հետ կապված խնդիրներից մեկն էլ վերաբերում է նաև այն լրացած լինելու հանգամանքը փաստելուն: Երբ հանցավոր վարքագիծ դրսևորած անձի տարիքը հնարավոր է լինում պարզել փաստաթղթերով, անձի տարիքը լրացած լինելու հանգամանքը փաստելը մեծ դժվարություն չի ներկայացնում. դոկտորինալ մեկնաբանության համաձայն՝ անձի տարիքը համարվում է լրացած նրա ծննդյան օրվան հաջորդող օրվա առաջին իսկ վայրկյաններից:

Այլ է վիճակը, երբ անձի ծննդյան օրը հավաստող փաստաթղթերը բացակայում են: Նման դեպքերում նշանակվում է դատաբժշկական և դատահոգեբանական փորձաքննություն, և քրեական պատասխանատվության հարցը լուծելիս հիմք է ընդունվում փորձագետի կողմից սահմանված տարիքային նվազագույն շեմը (կամ տարեթիվը): Ընդ որում, ելնելով մարդասիրության, ինչպես նաև չփարատված կասկածները հոգուտ կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի մեկնաբանելու սկզբունքներից, անձի ծննդյան օրն է համարվում փորձագետի կողմից նշված տարվա վերջին ամսվա վերջին օրը:

Թվում է, թե լուծումը առավել քան հաջողված է, քանի որ առավելագույնս բխում է հանցավոր վարքագիծ դրսևորած անձի շահերից, սակայն հնարավոր են իրավիճակներ, երբ դոկտրինալ մակարդակով նման մեկնաբանությունը հանգեցնի հակառակ արդյունքի: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 54-ի 4-րդ մասի համաձայն՝ «Հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ»: Եթե արդեն իսկ մատնանշված դոկտրինալ մեկնաբանությունը դիտենք որպես անբեկանելի մոտեցում, ապա հնարավոր են իրավիճակներ, որ փաստաթուղթ չունեցող, սակայն դատաբժշկական փորձաքննության արդյունքներով 15-16 տարեկան դիտարկվող երեխայի նկատմամբ հնարավոր չլինի կիրառել հանրային աշխատանքներ, և նա դատապարտվի ազատագրկման ելնելով զուտ այն հանգամանքից, որ դոկտրինալ մեկնաբանության համաձայն՝ նրա ծննդյան օր է համարվում ոչ թե փորձաքննությամբ նշված տարեթվի առաջին, այլ վերջին օրը:

Կարծում ենք, նշված դեպքերում անհրաժեշտ է դրսևորել տարբերակված մոտեցում և երեխային վերաբերող հարցերը լուծելիս առավելապես առաջնորդվել նրա լավագույն շահերով, և նման վիճահարույց իրավիճակներում նրա ծննդյան օր դիտարկել փորձաքննությամբ նշված տարվա ոչ թե վերջին, այլ առաջին օրը:

Քանայի բառեր – *տարիք, քրեական պատասխանատվություն, հանցագործություն, երեխա, քրեական օրենսդրություն, «Պեկինյան կանոններ», երեխայի իրավունքներ*

АННА МАРГАРЯН – Возраст как необходимая предпосылка уголовной ответственности. – Лицо подлежит уголовной ответственности, если к моменту совершения преступления оно достигло минимального возраста, установленного законом. В разных странах установлены различные минимальные возрастные границы уголовной ответственности – от шести до восемнадцати лет. Законодательство РА устанавливает 16 лет в качестве общего и 14 лет в качестве исключительного минимального возраста уголовной ответственности. Однако такой двойственный подход создаёт проблемы, когда обосновывается группирование преступлений по возрасту уголовной ответственности, которая наступает или с 16-ти, или с 14-ти лет. В статье ставятся этот и ряд других вопросов, касающихся возраста уголовной ответственности. Предлагается установить единый возрастной предел уголовной ответственности для всех видов преступлений.

Ключевые слова: *возраст, уголовная ответственность, преступление, уголовное законодательство, Пекинские правила, права ребёнка*

ANNA MARGARYAN – The Age as a Precondition of Criminal Responsibility. – The person can be held responsible for an offence committed if he/she has reached the minimum age of criminal liability. The age of criminal responsibility varies through

states having 6 as a minimum and going up to 18. RA legislation sets 16 as a general and 14 as an exceptional minimum age of criminal responsibility. However such a dualistic approach creates problems when trying to justify for which crimes the age of criminal responsibility should be set to 16 and for which – to 14. The author tries to respond to this and other issues concerning the age of criminal responsibility. As a conclusion, the author suggests to set a unified age of criminal responsibility for the committal of all types of crime.

Key words: *age, criminal responsibility, crime, child, criminal legislation, Beijing rules, Child rights*

Ներկայացվել է՝ 22.05.2019,
գրախոսվել է՝ 25.06.2019,
ընդունվել է տպագրության՝ 26.07.2019

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵԼԼԻ ԱՇՐԱՖՅԱՆ

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը հաճախ դիտվում է որպես հաշտարարության ձև¹: Իրոք, այստեղ առկա են առանձին հատկանիշներ, որոնք հատուկ են վեճերն ու կոնֆլիկտները հարթելու տվյալ տեխնոլոգիային: Այստեղ առկա է կամավորությունը, քանի որ համապատասխան հանցանք գործելու մեջ մեղավորն ինքը առանց հարկադրանքի լուծում է իր գործած հանցանքից տուժածի հետ հաշտվելու անհրաժեշտության հարցը: Նա նախաձեռնում է մի շարք գործողություններ, որպեսզի տուժողը ցանկանա հաշտվել իր հետ: Նման գործողություններից կարող է լինել մեղքը հարթելը: Հաշտեցումը հնարավոր է միայն համապատասխան վեճի կողմերի փոխադարձ հարգանքի պայմաններում: Թեև միանգամայն պարզ է, որ գործած հանցանքից հետո դրանում մեղավոր անձը պետք է շատ ջանք թափի, որ ներվի տուժողի կողմից, բայց միայն փոխադարձ հարգանքի դեպքում կողմերը կարող են գտնել այն փոխզիջումը, որը կարող է դրվել համապատասխան դատավարական որոշման հիմքում: Հենց դա էլ նման որոշման արդարացիության երաշխիքն է: Երկու կողմին բավարարող լուծում փնտրելիս կարևոր են փոխվստահելի հարաբերությունները, ինչը կհանգեցնի գաղտնիության անհրաժեշտությանը փոխընդունելի լուծում գտնելու որոնումներում: Դրանով հանդերձ գաղտնիությունն այստեղ չի ժխտում թափանցիկությունը, որը ենթադրում է գործող օրենսդրությանը և բարոյականության նորմերին գործողությունների համապատասխանությունը ստուգելու հնարավորություն: Ընդ որում, կարևոր է ժամանակակից արդարադատության հիմնական սկզբունքներից մեկին՝ կողմերի իրավահավասարության (մրցակցության) սկզբունքին, հավատարիմ մնալը, որը անթույլատրելի է համարում որևէ կողմի թելադրանքը, անգամ այն դեպքում, երբ այդ կողմը տուժել է կատարված հանցագործությունից: Այդ ամենը բնորոշ է տուժողի հետ հաշտեցմանը և հաշտարարությանը, որոնք թույլ են տալիս խոսել այդ ընթացակարգերի մոտ լինելու մասին: Սակայն մոտ լինելն ու անգամ համընկնումները պատճառ չեն պնդե-

¹ Ст' у Каменков В. С., Коваль А. В. Медиация и примирение – законные альтернативы уголовному преследованию // "Предварительное расследование", 2017, № 2 (2), էջ 41-48:

լու դրանց նույնությունը: Չի կարելի ասել, որ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատվելը նույնն է, ինչ հաշտարարությունը: Այստեղ առկա են նաև որոշ տարբերություններ: Այսպես, հաշտարարության ընթացակարգեր իրականացնելու համար հարկավոր է չեզոք ու անաչառ հաշտարար²: Քրեական օրենսդրությունում բացառվում է որևէ պահանջ հաշտարարի առկայության վերաբերյալ, ինչը ենթադրում է, որ առանց նրա էլ կարելի է փոխզիջումներ փնտրել:

Քրեական օրենսդրության համար կարևոր է արդյունքի հասնել տուժողի հետ հաշտվելու հարցում: Այսպես, ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում միայն հիշատակվում է տուժողի հետ հաշտվելը որպես քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմք: Ոչ մի պարզաբանում չկա դրան հասնելու ընթացակարգի մասին: Սրանից հետևում է, որ օրենսդրության համար կարևոր է ինքնին հաշտության հասնելու փաստը, այլ ոչ թե ընթացակարգը, որի օգնությամբ ձեռք է բերվել այդ արդյունքը:

Այնուամենայնիվ, եթե քրեական օրենսդրությունում չի հիշատակվում հաշտարարի գործոնը տուժողի հետ հաշտվելիս, դա բնավ չի նշանակում, որ հաշտության կարելի է հասնել առանց նրա: Պարզապես օրենսդիրը հնարավորություն է ընձեռում կողմերին, որ իրենք որոշեն, թե ինչպես հասնեն հաշտության, ինչ տեխնոլոգիաներ ու ընթացակարգեր ընտրեն: Առավել ևս, որ այդ ընթացակարգերը չնշելը քրեական օրենքում ընդգծում է դրանց արտադատական բնույթը: Կողմերն իրենք պետք է լուծեն այն հարցը, թե ինչպես կարող են հասնել հաշտության՝ կա՛մ ներգրավված հաշտարարի օգնությամբ, կա՛մ ինքնուրույն, առանց որևէ օգնության: Մանավանդ որ հաշտության հասնելու ձևի ընտրությունը հաճախ պայմանավորված է կոնկրետ հանգամանքներով, որոնք հարկավոր է անպայման հաշվի առնել: Բացի այդ, պետք է նաև հաշվի առնել այն, որ քաղաքացիական իրավահարաբերություններում առաջացող վեճը տարբերվում է կոնֆլիկտի հետևանքով առաջացած վեճից, որի հիմքում ընկած է կատարված հանցագործությունը: Տարբերությունը դրանց լուծման նկատմամբ հասարակության շահագրգռվածության աստիճանն է: Քաղաքացիական իրավահարաբերություններում առաջացող վեճը չի ազդում հասարակական կարգի վրա, ուստի վտանգ չի ներկայացնում անորոշ թվով քաղաքացիների համար, որոնք դրա մասնակիցները չեն: Իրավիճակը միանգամայն այլ է, երբ գործ ունենք կատարված հանցագործության հետևանքով առաջացած քրեաիրավական վեճի հետ: Հանցագործությունն ինքնին հասարակական մեծ վտանգ է ներկայացնում, ուստի այն խախտում է ոչ միայն կոնկրետ անձի իրավունքները, այլև հասարակության և պետության շահերը, որոնք շահագրգռված են պահպանելու իրավա-

² Сте́ у Худойкина Т. В., Сайфетдинова А. Ф. Требования, предъявляемые к медиаторам в России и за рубежом // "Бюллетень науки и практики", 2018, т. 4, № 6, էջ 324-327:

կարգը, որը կայունության երաշխիքներից է: Այս առումով կատարված հանցագործության հետևանքով առաջացած քրեական վեճի լուծումը ևս բխում է ոչ միայն հանցագործությունից տուժած անձի, այլև պետության ու հասարակության շահերից: Պետությունն ու հասարակությունը շահագրգիռ են խախտված իրավակարգը վերականգնելու հարցում: Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ արդարադատությունը կարող է լինել արդար ոչ թե երկու, այլ երեք կողմի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը պահպանելու դեպքում, որտեղ երրորդ կողմը պետությունն է: Ուստի կատարված հանցագործությամբ տուժողի խախտված իրավունքների վերականգնման հարացույցը (պարադիգմը) նկատի ունի ոչ միայն տուժողի շահերը, այլև պետության շահերը (և ի դեմս նրա՝ հասարակության), որը շահագրգիռ է իրավակարգի վերականգնման հարցում: Հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը այս առումով ևս պետք է հաշվի առնի ոչ միայն տվյալ տուժողի, այլև հասարակության շահերը: Հետևաբար ճիշտ կլինի, որ համապատասխան նորմում ներառվեն երաշխիքներ ոչ միայն տուժողի, այլև հասարակության և պետության համար: Նման կերպ կերաշխավորվի, որ տվյալ անձը հետագայում նույն հանցանքը չի գործի: Հենց դրանով էլ առաջնորդվում է քրեական օրենքը, երբ ազատում է քրեական պատասխանատվությունից տուժողի հետ հաշտված անձին: Չէ՞ որ այսպիսի հաշտությունը ենթադրում է հանցանք գործած կոնկրետ անձի միանգամայն որոշակի, հաճախ չափազանց մեծ ջանքեր ինքն իր նկատմամբ, որպեսզի նախ գիտակցի իր արարքի հանցավորությունը, ընդունի իր պատճառած վնասը, հասկանա նմանատիպ գործողությունների անթույլատրելիությունը ապագայում և հետո ներողություն խնդրի իր հանցավոր արարքից տուժողից՝ դրանով իսկ ճանաչելով իրավունքները վերականգնելու տուժողի պահանջների հիմնավորված լինելը: Այդ պարագայում պետության ու հասարակության շահերը համընկնում են տուժողի շահերին: Ընդ որում, պետությունն ու հասարակությունը շահագրգռված են այն բանում, որ հաշտեցումը լինի իրական, այլ ոչ թե թվացյալ, քանի որ միայն այդ դեպքում կարելի է խոսել իրավակարգի վերականգնումը երաշխավորելու մասին: Այս առումով ճիշտ կլինի, որ պետությունը սահմանի հաշտեցման ընթացակարգերը, որոնք կապահովեն կատարված հանցագործության մեջ մեղավոր անձի և այդ հանցագործությունից տուժած անձի միջև հաշտության անկեղծությունը:

Հաշտությունը միջոց է, որի օգնությամբ ոչ միայն բավարարվում են կատարված հանցագործությունից տուժած համապատասխան անձի մասնավոր շահերը, այլև միջոց է, որի օգնությամբ ապահովվում են պետության ու հասարակության հանրային շահերը³: Պետության ու

³ С'у Смахтин Е. В., Ларионова А. А. К вопросу о примирении сторон в уголовном процессе // "Вестник Пермского университета". Юридические науки, 2013, № 1 (19), էջ 204-216:

հասարակության շահերը պահանջում են, որ լուծվի կատարված հանցագործության հետևանքով առաջացած կոնֆլիկտը՝ դրանով իսկ թոթափելով հուզական լարվածությունը, որպեսզի այն չվերածվի նոր, ոչ իրավաչափ գործողությունների⁴: Այս առումով տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը նորմատիվորեն սահմանելու փաստն ինքնին պետության ու հասարակության շահերի, հանրային շահերի արտացոլումն է⁵: Հնարավորություն ընձեռելով հանցանք գործած անձին հաշտվելու տուժողի հետ՝ պետությունը դրսևորում է իր հանրային շահագրգռվածությունը այդ հաշտությունը ձեռք բերելու հարցում: Հաշտության հասնելը նշանակում է վերականգնել իրավակարգը, ինչի համար շահագրգռ են պետությունն ու հասարակությունը: Հաշտության փնտրտուքը ենթադրում է ն՝ հանցանք գործած անձի, ն՝ հանցագործությունից տուժած անձի, ն՝ պետության (և ի դեմս նրա՝ հասարակության) շահերի համընկնում: Մակայն բնավ ոչ միշտ է հնարավոր հասնել դրան, քանի որ հաշտության վերաբերյալ հանցանք գործած անձի և հանցագործությունից տուժած անձի պատկերացումները կարող են չհամընկնել: Օրինակ՝ տուժողը կարող է չտեսնել անկեղծություն հանցագործության մեջ մեղավոր անձի հաշտության ձգտման մեջ: Այդ պատճառով տուժողը կարող է չհամաձայնել հաշտվելու, ինչը բխում է նաև պետության շահերից, քանի որ անկեղծության բացակայությունը թույլ է տալիս եզրակացնել ապագայում ևս նմանատիպ հանցագործություն կատարելու հնարավորության մասին: Պետությունը, հնարավորություն ընձեռելով տուժողին՝ ինքնուրույն որոշելու հաշտության հարցը, ապավինում է նրան: Պետությունը վստահում է նրան լուծելու հաշտության հարցն այնպես, որ դա հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի հնարավոր նոր հանցավոր վարքագիծը կանխելու երաշխիք դառնա: Տուժողը պետք է գնահատի համապատասխան իրավիճակը, որում տեղի է ունենում հաշտեցումը, պարզի այն հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, որոնք խոչընդոտում են հաշտեցումը: Տուժողի նշյալ գործունեությունն ուղղված է ոչ միայն իր իրավունքները վերականգնելուն, այլև նոր հանցագործությունները կանխելուն, ինչպես նաև կանխարգելիչ բնույթ ունի հենց հանցանք գործած անձի առումով: Տուժողը թեև գործում է իր շահերից ելնելով, այդուհանդերձ իր գործունեությամբ միաժամանակ ապահովում է հանրային շահը:

⁴ Տե՛ս **Мицкая Е. В.** К вопросу о примирении по уголовным делам посредством медиации // "Теория государства и права", 2018, № 4, էջ 149-156:

⁵ Տե՛ս **Бурмагин С. В.** Соблюдение баланса частных и публичных интересов при освобождении от уголовной ответственности в связи с примирением // "Труды Академии управления МВД России", 2016, № 1 (37), էջ 13-17:

Հաշտեցման հանրային բնույթը պայմանավորված է նաև այն բանով, որ օրենսդիրը, տվյալ ինստիտուտը ներդնելով, ձգտում է հասնել հանրային շահը բավարարելուն՝ ջանալով խրախուսել հանցանք գործած անձանց՝ կատարել գործողություններ, որոնք նվազեցնում են նրանց հասարակական վտանգավորությունը և կանխում նոր հանցագործությունները: Այս ինստիտուտի հանրային բնույթը դրսևորվում է այն բանում, որ այն դառնում է պետության քրեական քաղաքականության բաղադրատարրը՝ ուղղված հանցավորության մակարդակը նվազեցնելուն: Քրեական քաղաքականությունը առաջին հերթին հանրային շահերի իրացումն է այն սոցիալ-քաղաքական պայմաններում, որոնք ձևավորվել են պետության և հասարակության զարգացման որոշակի պահի⁶: Հետևաբար տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը նույնպես հանրային շահը իրացնելու միջոցներից է: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը ուղղորդում է հանցանք գործած անձանց միանգամայն որոշակի գործողություններ կատարելու, որոնք պետության ու հասարակության տեսանկյունից իրենց համար օգտակար են: Այս առումով պետք է ընդգծել քրեական օրենսդրության նշյալ նորմի կանխարգելիչ նշանակությունը: Տվյալ տեսանկյունից ակներև է դառնում տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հանրային բնույթը: Օրենսդիրը ձգտում է կառուցել տվյալ ինստիտուտը՝ առաջնորդվելով նոր հանցագործությունները կանխելու հասարակության պահանջմունքով⁷: Այսինքն՝ գործ ունենք հանրային շահի հետ, որն ուղղված է ապագային, քանի որ պետությունը ջանում է նշյալ նորմի ու նշյալ ինստիտուտի միջոցով մողելավորել իրավակարգը, որը պետք է ապագայում հաստատվի երկրում: Դրա մեջ ևս նշմարվում է հանրային շահը: Ուստի քրեական իրավունքում չի կարելի հաշտեցման ինստիտուտը հանգեցնել միայն մասնավոր շահին, միայն տուժողի շահին: Ավելին, այդ շահը չի կարելի հանգեցնել նաև երկու անձանց՝ հանցագործությունից տուժած անձի և այն կատարելու մեջ մեղավոր անձի շահերին: Այստեղ պակաս կարևոր չէ հանրային շահը՝ պետության, հասարակության և անորոշ թվով մարդկանց շահը, որոնք շահագրգռված են իրավակարգը վերականգնելու և պահպանելու հարցում: Առավել ևս, որ պետությունը միշտ շահագրգիռ է, որ հանցանք գործած անձը մտորի այն բանի մասին, թե ինչ է արել ինքը և հետևություն անի հետագայում նման արարքների անթույլատրելիության մա-

⁶ Տե՛ս **Сидоренко Э. Л.** Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: в поисках уголовно-политического начала // "Мировой судья", 2015, № 11, էջ 26-31:

⁷ Տե՛ս **Гарбатович Д. А.** Освобождение лица от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // "Уголовное право", 2014, № 2, էջ 31-36:

սին՝ համապատասխան գործողություններ ձեռնարկելով տուժողի հետ հաշտվելու ուղղությամբ: Ուստի տուժողի հետ հաշտվելը հանցանք գործած անձի մտադրությունների լրջության ցուցանիշ է առ այն, թե ինչ է արել ինքը, և որքան անընդունելի է դա հասարակության համար: Հենց կատարվածի անընդունելի լինելը հասարակության կողմից դառնում է մեղավորի՝ հաշտեցմանն ուղղված գործողությունների հիմքը: Այստեղ ևս, թեկուզ ոչ ակնհայտորեն, առկա է հանրային շահ, որի հետ մեղավոր անձը համադրում է իր գործողությունները: Այս առումով տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը չի կարելի դիտարկել որպես բացառապես մասնավոր շահը արտացոլող և պաշտպանող ինստիտուտ: Այն արտացոլում և պաշտպանում է նաև հանրային շահը, որի էությունը իրավակարգը վերականգնելն ու պահպանելն է: Առավել ևս, որ այստեղ մասնավոր և հանրային շահերը բավականին սերտորեն կապված են միմյանց հետ: Բացի այդ, հանրային շահը ներառում է քաղաքացիների ոչ որոշակի շրջանակի շահը այն իմաստով, որ չստեղծվեն իրավիճակներ, որոնցում նրանց իրավունքներն ու ազատությունները հայտնվեն ոտնահարվելու սպառնալիքի ներքո:

Հաշտեցման ինստիտուտը միջճյուղային ինստիտուտ է, քանի որ հիշատակվում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածը նախատեսում է դադարեցնել քրեական հետապնդումը, եթե տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ, կամ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: Այսինքն՝ հաշտեցումը ընթացակարգ է, որը նույնպես նախատեսված է քրեական դատավարությունում: Ընդ որում, այստեղ ևս, ինչպես և տուժողի հետ հաշտվելիս, քրեական պատասխանատվությունից ազատվելու դեպքում (ՀՀ ՔՕ-ի 73 հոդված) հաշտեցման գործընթացը հիշատակվում է, սակայն չի կարգավորվում օրենսդրությամբ: Դրանից հետևում է, որ հաշտեցման գործընթացը դատական ընթացակարգ չէ, ուստի և պետությունը հարկադրանքի իր միջոցներով ու մեթոդներով պետք է մնա այդ գործընթացի շրջանակից դուրս: Հաշտեցումը պետք է լինի բացառապես կամավոր ընթացակարգ՝ զերծ որևէ հարկադրանքից: Հանցանք կատարելու մեջ մեղավոր անձը և տուժողն իրենք պետք է ընտրեն այդ ընթացակարգը և որոշեն, թե որքանով է այն արդարացի և իրենց շահերին համապատասխանող: Պետությունն անգամ չպետք է միջամտի այդ ընթացակարգին, որպեսզի կասկածներ չծագեն տվյալ ընթացակարգի կամավորության և հաշտեցման անկեղծության վերաբերյալ, ո-

րը ձեռք կբերեն վերոնշյալ անձինք: Ելնելով դրանից՝ կարելի է ասել, որ հաշտեցման ինստիտուտն ինքնին մեկնաբանվում է միանման և՛ քրեական իրավունքում, և՛ քրեական դատավարությունում: Մեկնաբանության համաձայնեցվածությունն անհրաժեշտ է հաշտեցման ինստիտուտի ներքին միասնությունը, ամբողջականությունը ապահովելու համար: Քրեական օրենքի և քրեադատավարական օրենքի նորմերի համաձայնեցվածությունը հաստատում է, որ հաշտեցումը միջճյուղային ինստիտուտ է: Ըստ այդմ, այն պետք է քննվի միաժամանակ և՛ քրեաիրավական, և՛ քրեադատավարական դիտանկյունից: Միայն այդ դեպքում կարելի է խոսել դրա բացահայտման լրիվության մասին: Քրեադատավարական օրենսդրությունում հաշտեցումը քննարկելը պայմանավորված է նրանով, որ այս ինստիտուտը թեև գտնվում է քրեական դատավարության սահմաններից դուրս, բայց դրա հետևվանքները (այսինքն՝ ինքնին հաշտեցումը) առնվում են դատավարական որոշումներ ընդունելու գործունեության մեջ: Հաշտեցումը՝ որպես ձեռք բերված փոխզիջում, պետք է դիտարկել որպես համապատասխան որոշումներ կայացնելու հիմք՝ մասնավորապես մեղադրյալի և տուժողի հաշտվելու կապակցությամբ քրեական գործը կարճելու վերաբերյալ որոշում ընդունելու համար⁸: Հենց դա է բխում ՀՀ ՔՕ-ի 36 հոդվածի մեկնաբանությունից, որը նախատեսում է դադարեցնել քրեական հետապնդումը նշված հիմքով:

ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածը մեկնաբանելիս առանցքային է «հաշտեցում» հասկացությունը: Հաշտեցումը հիմք է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար: Այն նաև քրեական հետապնդումից հրաժարվելու հիմք է: Այդ հասկացության այս երկու տեսանկյունները թույլ են տալիս տեսնել, որ հաշտեցումը ոչ միայն ձեռք բերված փոխզիջում է հանցանք կատարած անձի և այդ հանցագործությունից տուժողի միջև, այլև փոխզիջման հասնելու գործընթաց: Ցավոք, գործող օրենսդրությունում նշված չէ, թե ինչպես պետք է ամրագրել այդ փոխզիջումը, ինչ փաստաթղթով: Գործող օրենսդրության բովանդակությունից հետևում է, որ դա որևէ նշանակություն չունի: Հետևաբար հաշտեցումը կարող է արձանագրվել ցանկացած գրավոր փաստաթղթով, կարող է լինել նաև բանավոր և արտացոլվել հենց փոխզիջման հասած անձանց ցուցմունքներում, ինչպես նաև նրանց համաձայնությամբ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ: Օրենսդրությունը նաև չի սահմանում հաշտեցման հասնելու ընթացակարգերը՝ այդ ընտրությունը թողնելով հանցանք գործած անձին և տուժողին: Անվիճելի է, որ փոխզիջման ավելի հեշտ կարելի է հասնել այն ձևերով, որոնք առավել ընդունելի են նրանց համար,

⁸ Ст' у Сидоренко Э. Л. Институт освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: кризис целеполагания // "Библиотека уголовного права и криминологии", 2015, № 1 (9), էջ 50-60:

ովքեր ձգտում են հասնել դրան⁹: Սակայն թերևս ճիշտ է նաև այն, որ փոխզիջման հասնելու այդ ձևերի մի մասը կարող է լինել խտրական կողմերից մեկի համար, ինչը չի կարող համապատասխանել ինչպես սահմանափակված կողմի, այնպես էլ հասարակության՝ ի դեմս պետության շահերին: Անհրաժեշտ է, որ բացառվի կողմերից մեկին հարկադրելու հնարավորությունը՝ հաշտության համաձայնելու մյուս կողմին ձեռնտու պայմաններով: Ավելի վաղ արդեն ասվել է, որ, հրաժարվելով կարգավորել հաշտեցման գործընթացը, պետությունը ձգտում է ապահովել դրա կամավորությունը՝ խուսափելով հաշտեցման գործընթացին մասնակցող կողմերից մեկի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորությունից¹⁰: Պետությունը ձգտում է ամեն ինչ անել, որ կողմերից մեկը չհայտնվի ավելի արտոնյալ վիճակում, քան մյուսը, և ոչ մեկի իրավունքները չսահմանափակվեն: Նման տրամաբանությունը միանգամայն հասկանալի է և լիովին համապատասխանում է ինչպես քրեական, այնպես էլ քրեադատավարական օրենսդրության բարեփոխման գործընթացներին: Դրա հետ մեկտեղ՝ միանգամայն ակնհայտ է և այն, որ պետության չմիջամտելը կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ¹¹: Մասնավորապես, օգտվելով այն բանից, որ հաշտեցման գործընթացը օրենսդրական կարգավորում չունի, հանցանք գործած անձը կարող է բռնությամբ, սպառնալիքներով և այլ միջոցներով ու ձևերով, որոնք չեն համապատասխանում քրեական արդարադատության հիմնական սկզբունքներին, հաշտեցման հարկադրել տուժողին: Ուստի կարծում ենք՝ ճիշտ կլինի ընդունել նորմեր, որոնցով սահմանվեն հանցանք գործած անձի և տուժողի միջև հաշտության հասնելու սկզբունքները: Արդարադատության մարմինները հաշտեցման ընթացքում պետք է սահմանեն վերահսկողություն այնպիսի սկզբունքների պահպանման նկատմամբ, ինչպիսիք են կամավորությունը, կողմերի հավասարությունը, կողմերի՝ միմյանց իրավունքները փոխադարձաբար հարգելը, հարկադրանքի միջոցներ կիրառելուց հրաժարվելը և այլն: Նախքան քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում ընդունելը օրենքը պետք է պարտավորեցնի արդարադատության մարմիններին ստուգել, թե որքանով են պահպանվել այս սկզբունքները հաշտության հասնելու ընթացքում:

Եթե հաշտեցման ինստիտուտը միջձյուղային է, որը ներառում է քրեական և քրեադատավարական օրենքը, ապա տուժողի հետ հաշտ-

⁹ Տե՛ս **Шнитенков А. В.** Примирение с потерпевшим как основание освобождения от уголовной ответственности: проблемы законодательства и судебной практики // "Российская юстиция", 2014, № 11, էջ 54-55:

¹⁰ Տե՛ս **Владимирова О. А.** Примирение с потерпевшим как основание освобождения от уголовной ответственности // "Полигематический сетевой электронный научный журнал Кубанского государственного аграрного университета", 2011, № 68, էջ 341-350:

¹¹ Տե՛ս **Матвеева Я. М.** Актуальные проблемы освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: по материалам судебной практики // "Российское правосудие", 2015, № 1 (105), էջ 92-98:

վելիս քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը պետք է համարել միայն քրեախրավական¹²: Այս նորմը նույնական չէ արդեն հիշատակված քրեադատավարական նորմին, որն ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածում, թեև դրան հպանցիկ ծանոթանալիս կարող է թվալ, որ երկու դեպքում էլ խոսքը միևնույն բանի մասին է: Այսպես, ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում խոսվում է տուժողի հետ հաշտվելիս քրեական պատասխանատվությունից ազատելու մասին ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում: ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածում խոսվում է քրեական հետապնդումից հրաժարվելու մասին այն գործերով, որոնք նախատեսված են ՀՀ քր. դատ. օր.-ի 33-րդ հոդվածի 2-րդ մասով (մասնավոր հետապնդման գործերով): Միանգամայն պարզ է, որ «ոչ մեծ ծանրության հանցագործություններ» հասկացությունն ընդգրկում է հանցագործությունների շատ ավելի մեծ ցանկ, քան «մասնավոր հետապնդման գործերով» հասկացությունը: ՀՀ ՔՕ-ի 19-րդ հոդվածի 2-րդ մասում ոչ մեծ ծանրության հանցագործությունները սահմանված են որպես դիտավորությամբ կատարված հանցագործություններ, որոնց համար առավելագույն պատիժը չի կարող գերազանցել երկու տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզուգույնությամբ կատարված հանցագործությունները, որոնց համար առավելագույն պատիժը չի կարող գերազանցել երեք տարի ժամկետով ազատազրկումը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, 114-րդ հոդվածի 1-ին մասով, 115-րդ հոդվածի 1-ին մասով, 116-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 121-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 124-րդ հոդվածի 1-ին մասով, 128-րդ հոդվածի 1-ին մասով, 137-րդ հոդվածի 1-ին մասով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 174-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 1-ին մասով, 181-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 184-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 197-րդ հոդվածով, 213-րդ հոդվածի 1-ին մասով, 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման»:

Այսինքն՝ միանգամայն ակնհայտ է, որ հանցագործությունների ցանկը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածը, շատ ավելի լայն է, քան այն հանցագործությունների ցանկը, որոնց

¹² Sէ՛u **Ларина Л. Ю.** Некоторые аспекты освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // "Актуальные вопросы борьбы с преступлениями", 2015, № 4, с. 10-13:

նկատմամբ կարող է կիրառվել ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածը: Այս առումով ակնհայտ է, որ նշյալ նորմերի կիրառման պայմանները տարբեր են, ընդ որում, երկու դեպքում էլ անհրաժեշտ պայման է տուժողի հետ հաշտվելը: Ըստ այդմ, ճիշտ կլինի խոսել ոչ թե քրեական իրավունքի և քրեական դատավարության համար միասնական քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կամ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական հետապնդումից հրաժարվելու ինստիտուտի մասին, այլ հաշտեցման ինստիտուտի միասնականության, որը ինչպես ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի, այնպես էլ ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածի նորմերը կիրառելու հիմքն է:

Հարկ է նշել, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածը սահմանում է տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատում (73-րդ հոդված), և նորմ, որը նախատեսում է քրեական գործի կարճում կամ քրեական հետապնդման դադարեցում տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդված): Պետք է նշել, որ, ի տարբերություն վերևում նշվածի, այս դեպքում կարելի է խոսել այդ նորմերի միասնականության մասին: Երկուսում էլ սահմանված է, որ դրանք կիրառվում են այն անձանց նկատմամբ, որոնք ոչ մեծ ծանրության հանցագործություն են կատարել, և առկա է տուժողի հետ հաշտեցում: Ընդ որում, ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի նորմի կառուցվածքը ուղղակիորեն հղում է անում ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածին: Այսինքն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածը ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի իրականացման նորմ է:

Քրեական պատասխանատվությունից ազատելը, ըստ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի, ենթադրում է պայմանների և երկու հիմքերի առկայություն. ոչ մեծ ծանրության հանցագործության կատարում, տուժողի հետ հաշտության առկայություն, վնասի հատուցում կամ այլ եղանակով նրան պատճառված վնասի հարթում: Օրենսդիրը առաջնորդվում է այն բանով, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունների հասարակական վտանգավորության աստիճանը կարող է թույլ տալ ազատել քրեական պատասխանատվությունից տուժողի հետ հաշտվելու դեպքում: Այս դեպքում կարևոր է ոչ միայն այն, որ կայացել է հաշտություն, այլև այն, որ կատարված հանցագործությունը չի ներկայացնում հասարակական մեծ վտանգավորություն, այսինքն՝ հաշվի է առնվում հանցագործության ոչ մեծ ծանրությունը:

Հենց հանցագործության ոչ մեծ ծանրությունից ելնելով է օրենսդիրը հնարավոր համարել ազատել քրեական պատասխանատվությունից տուժողի հետ դրանում մեղավոր անձանց հաշտվելու դեպքում: Պետությունը վտանգ չի տեսնում այն բանում, որ նման անձի նկատմամբ չի կիրառվի պատիժ, քանի որ հանցագործությունն աննշան է, իսկ ձեռք բերված հաշտությունը ցույց է տալիս, որ մեղավորը գիտակցել է իր արարքի հասարակական վտանգավորությունը և երաշխավոր-

րում է, որ ինքը հետագայում չի կատարի նոր հանցագործություն¹³: Միանգամայն ակնհայտ է, որ հասարակական մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործություններ կատարողի համար տուժողի հետ հաշտեցումը չի կարող դիտվել որպես նոր հանցագործություններ չկատարելու երաշխիք: Առավել ծանր հանցագործություններ կատարելու մեջ մեղավորը կարող է դիմել հաշտության (եթե դա նախատեսված լիներ օրենքով) լոկ այն բանի համար, որ խուսափի պատժից: Այդ դեպքում մեղավորի կողմից հաշտեցումն անկեղծ չի լինի, քանի որ դա կլինի ոչ այնքան զղջման արդյունք, որքան քրեական պատժից խուսափելու ցանկության: Այսինքն՝ հաշտեցումը չի ունենա կանխարգելիչ նշանակություն, այն չի կանխի նոր հանցագործությունները¹⁴: Ավելին, դժվար չէ ենթադրել, որ այդ դեպքում նշյալ պայմանի առկայությունը կարող է դրդել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձանց նոր հանցագործությունների այդ նույն տուժողի նկատմամբ՝ հաշտեցման համար նրա համաձայնությունը ստանալու նպատակով¹⁵: Ուստի և հաշտեցումը պետք է դիտարկվի այն հանցագործության հետ փոխկապվածության մեջ, որը կատարվել է (հանցագործությունը պետք է լինի ոչ մեծ ծանրության): Ընդ որում, պետք է նշել, որ անհրաժեշտ է քննարկել այն հանցագործությունների շրջանակն ընդլայնելու հարցը, որոնց վրա կարելի է տարածել ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի գործողությունը: Մասնավորապես, ճիշտ կլիներ այդ շրջանակ ներառել նաև միջին ծանրության հանցագործությունները:

«Հաշտեցում» հասկացությունը քրեական և քրեադատավարական իրավունքում որևէ կերպ չի պարզաբանվում: Այն օգտագործվում է որպես ինքնըստինքյան ակնհայտ մի բան: Ամենակարևորն այն է, որ հանցագործություն կատարած անձն ինքն է հանգում այն եզրակացության, որ կատարել է հանրորեն վտանգավոր արարք և զղջում է դրա համար¹⁶: Մեղքն ընդունելը միշտ հոգեկան բարդ աշխատանքի հետևանք է: Դա միշտ էլ ինքն իրեն, սեփական եսասիրական հատկություններն ու ձգտումները հաղթահարելու գործընթաց է: Ինքն իրեն մեղավոր ճանաչելը երբեմն նույնն է, ինչ ինքնասպանություն գործելը: Առավել ևս, որ սպանություն է տեղի ունենում, սպանվում են սեփա-

¹³ Տե՛ս **Рубинштейн Е. А.** Институт примирения жертвы и правонарушителя как основа современной концепции борьбы с преступностью // Виктимологические проблемы борьбы с преступностью. Материалы I Междисциплинарной конференции – "круглого стола" 6 декабря 2002 г. Ставрополь: изд-во Ставроп. ин-та им. В. Д. Чурсина, 2002, էջ 44-51:

¹⁴ Տե՛ս **Корнелюк О. В.** Институт примирения – как развитие частного начала в российском уголовном и уголовно-процессуальном законодательстве // "Следователь". Федеральное издание. М., 2004, № 2, էջ 19-22:

¹⁵ Տե՛ս **Кузнецов И. Г.** Институт примирения в уголовном праве // "Вестник Амурского государственного университета", Благовещенск, 2007, № 38, էջ 61-63:

¹⁶ Տե՛ս **Гаджиева А. А.** Институт примирения с потерпевшим как форма реализации восстановительного правосудия и проблемы его совершенствования // "Черные дыры" в российском законодательстве. М., 2011, № 2, էջ 91-93:

կան եսամոլությունը, եսասիրությունը, մեծամտությունը, այլ մարդկանց հանդեպ արհամարհանքը: Այսինքն՝ հաշտեցումն ունի սուբյեկտիվ կողմ, որի էությունը հանցանք գործած մարդու՝ ինքն իր վրա հոգեկան զգալի աշխատանք կատարելն է: Սովորական «ներողությունը», որն արտաբերում է նման մարդը, նրանից ահռելի ջանքեր են պահանջում, ուստի այն բանից հետո, երբ ասվում է այդ բառը, ծնվում է նոր մարդ, որը գիտակցել է իր սխալներն ու ձգտում է այլևս չկրկնել դրանք: Հենց այդ հոգեկան աշխատանքն է դառնում երաշխիք, որ մարդը խորապես գիտակցել է իր գործողությունների անթույլատրելիությունը և հետագայում չի կատարի նման որևէ բան: «Ներողություն». սա ոչ թե պարզապես բառ է, այլ դրսևորումն այն բանի, որ կոնկրետ մարդը վերածնվել է, դարձել է ուրիշ, ոչ ամբարտավան, այլոց չարհամարհող, նա գիտակցում է իր անտեղի գործողությունները, որոնք հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել բացասական հետևանքների: Դրանով հանդերձ, անշուշտ, միշտ ծառանում է այդ «ներողության» անկեղծության հարցը, քանի որ որոշ մարդկանց համար դա երեսպաշտության, կեղծիքի մի մասն է, այլ ոչ թե ինքնահաղթահարմանն ուղղված հոգեկան աշխատանքի արտահայտություն: Ուստի կարևոր է նաև այն, թե ինչպես է արտահայտվում այդ «ներողությունը», ինչն է դրան դրդում: Հետևաբար հաշտեցումը հաճախ ոչ միայն բառ է, այլև գործողությունների մի ամբողջ համակարգ, որով հանցագործություն կատարելու մեջ մեղավոր մարդը ձգտում է համոզել շրջապատին և տուժողին, որ ինքը գիտակցել է կատարածի անթույլատրելիությունը և այլևս նման բան թույլ չի տա: Ինչպես արդեն նշել ենք, օրենքում ոչինչ ասված չէ հաշտեցման ընթացակարգի մասին: Այն ընտրում են հաշտեցման կողմերը: Ընդ որում, առաջնային դերը պատկանում է տուժողին, քանի որ նա պետք է համոզվի հանցագործություն կատարած անձի հաշտության ձգտման անկեղծությանը: Տուժողն ընտրում է այն գործողությունները, որոնցից եզրակացնում է հաշտվելու հնարավորության մասին: Այսպես, հաշտվելու համար բնավ պարտադիր չէ, որ հատուցվի պատճառված վնասը: Բնավ պարտադիր չեն նաև այլ գործողություններ, որոնց կատարումից տուժողը կարող է եզրակացնել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի ուղղվելու մասին: Առանձին դեպքերում տուժողի համար կարող է բավարար լինել հենց միայն մեղավոր անձի շուրթերից ներողություն լսելը: Այս տրամաբանությամբ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում վնասի հատուցումը կամ այլ եղանակով նրան պատճառված վնասի հարթումը որպես հիմք հանված է:

Չի կարելի շփոթել հաշտեցումը գործուն գղջալու հետ, որը նույնպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է (ՀՀ ՔՕ-ի 72-րդ հոդված): Գործուն գղջալը ենթադրում է, որ հանցանք գործած անձն իր գործողություններով ձգտում է ապացուցել, որ ինքը գիտակցել է կատարած արարքի վտանգավորությունը և հետագայում կներդ-

նի բոլոր ջանքերը՝ նման բան թույլ չտալու համար¹⁷: Այստեղ պետք է իրականացվի գործողությունների մի ամբողջ համալիր, որոնցով մեղավորը պիտի ապացուցի, որ ինքը հասարակական վտանգավորություն չի ներկայացնում և այլևս հանցագործություններ չի կատարի: Օրինակ՝ գործուն գոջալը դրսևորվում է համապատասխան հանցագործության նախաքննության ժամանակ քննությանը օգնություն ցուցաբերելով¹⁸: ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար պարտադիր չէ հանցանք գործած անձի ակտիվ գործունեությունը: Թեև նման գործունեություն կարող է իրականացվել, եթե դա հարմար գտնի տուժողը կամ հանցանք գործած անձը: Գործնականում հաճախ են դեպքերը, երբ մեղավոր անձը հարթում է պատճառաւ վնասը, ինչպես նաև աջակցում է կատարված հանցագործության քննությանը: Հաշտեցումը հաճախ դիտարկվում է որպես գործած հանցանքի համար գոջման դրսևորում: Դա իրոք այդպես է, քանի որ հաշտեցման արժեքը կատարած հանցանքի համար մեղավոր անձի գոջալն է: Չգոջալը հետևանք է այն բանի, ինչն ընդունված է անվանել խղճի խայթ, դա ինքն իր վրա ներքին աշխատանք է, կատարված արարքների անթույլատրելիության գիտակցում: Ուստի հաշտության համար կարևոր են ոչ թե նյութական արդյունքը կամ գործողություններն օբյեկտիվ աշխարհում, այլ այն աշխատանքը, որ կատարում է մեղավոր անձը, որպեսզի հասկանա իր կատարած գործողությունների հասարակական վտանգավորությունը և հետագայում նման գործողությունների անթույլատրելիությունը: Հաշտեցումը հարկավոր է դիտել որպես եզրույթ, որը նշանակում է մեղավոր անձի վերամարմնավորում՝ օրինախախտ անձից օրինապաշտի, որը ձգտում է, որ մյուսներն էլ հարգեն օրենքները: Կարևոր է հաշտեցման սուբյեկտիվ կողմը՝ որպես այն բանի հիմք, որ արդեն իսկ հանցանք կատարած անձը չի կատարի նոր հանցագործություն: Դա նման անձի հետագա վարքագծի հիմքն է, ինչը չափազանց կարևոր է հասարակության ու պետության համար, քանի որ դա է երաշխիքը, որ այդ անձն այլևս հանցանք չի գործի: Այսպիսով, հաշտեցումն ունի սուբյեկտիվ կողմ, որի հիման վրա որոշվում է համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ հաշտեցումը հանցանք գործած անձի հատուկ դիրքորոշում է, որն ուղղված է սեփական մեղքը հարթելուն, ինչը կարող է արտահայտվել

¹⁷ См. у **Матвеев П. А.** Деятельное раскаяние в теории уголовного права как специальное основание для освобождения от уголовной ответственности // "Российский судья", 2016, № 5, էջ 34-37:

¹⁸ См. у **Зябликова М. В.** Виды освобождения от уголовной ответственности, содержащие, элементы деятельного раскаяния // "Российский юридический журнал". Екатеринбург, 2016, № 3, էջ 116-125:

ամենաբազմազան գործողությունների ձևով, որի նպատակը հանցագործության հետևանքով տուժողի խախտված իրավունքները վերականգնելու (թեկուզ մասնակիորեն) ու դրանով նրան բավարարելն է¹⁹: Հարկ է նշել, որ այստեղ կարևոր է տուժողին բավարարելը, քանի որ հենց դա է ազդում հանցանք գործած անձի հետ հաշտվելու նրա պատրաստակամության վրա: Ակնհայտ է, որ տուժողին բավարարելը տվյալ դեպքում նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է ինչպես իրավիճակին, որը ձևավորվել է կատարված հանցագործությունից հետո, այնպես էլ, առաջին հերթին, հանցանք գործած անձի հետքրեական վարքագծին: Տվյալ վերաբերմունքը սուբյեկտիվ է, ուստի բավականին դժվար է որոշել այն դրականի չափը, որը կարող է ազդել նշյալ վերաբերմունքի վրա, այսինքն՝ բավարարել տուժողին, ինչը կդրդի նրան հաշտվելու: Սակայն հենց դա է որոշիչը հանցանք գործած անձի և տուժողի միջև հաշտություն կնքելու համար: Ուստի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի կողմերն իրենք են որոշում գործողությունների ցանկը, որը կարող է բավարարել տուժողին: Այդ ցանկը կարող է լինել տարբեր՝ կախված կոնկրետ հանցագործությունը կատարելու հանգամանքներից և այն իրավիճակից, որը ձևավորվել է այն կատարելուց հետո: Այն կախված է նաև տուժողի անձի առանձնահատկություններից, նրա նախապատվություններից ու համոզմունքներից, ինչպես նաև այն բանից, թե ինչն է նա համարում արժեք²⁰: Այսպես, որոշ տուժողների համար բավարար է բանավոր ներողությունը, իսկ մյուսների համար անհրաժեշտ է դա ամրագրել համապատասխան գործողություններով: Հենց այդ պատճառով հաշտեցման կապակցությամբ ավելի ճիշտ կլինի խոսել ոչ թե պատճառված վնասը հարթելու, այլ մեղքը հարթելու մասին: Տուժողը հաճախ ավելի կարևորում է, որ մեղավոր անձը զոջա կատարած հանցանքի համար: Սակայն դա բնավ չի բացառում, որ տուժողը ցանկանա, որ հանցանք գործած անձը կատարի որոշ այլ գործողություններ: Այդ գործողությունները կատարվում են այն բանի համար, որ բավարարեն տուժողին և դրա հիման վրա հասնեն նրա ներողամտությանը:

Հաշտեցումը սահմանելու համար նաև կարևոր է այն, որ դա, ինչպես արդեն նշել ենք, միջձյուղային ինստիտուտ է, որն ունի նշանակություն քրեական և քրեադատավարական իրավունքների համար²¹:

¹⁹ St' u **Клочков В. Н., Ситковский А. Л.** К вопросу о соотношении институтов уголовного наказания и примирения как средств защиты прав и свобод человека и гражданина // "Преступность и общество": Сборник научных трудов, М.: ФГУ "ВНИИ МВД России", 2011, էջ 215-222:

²⁰ St' u **Еремеев С. С.** Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: Право на прощение или акт правосудия? // "Российское законодательство в современных условиях". Материалы VII ежегодной Всероссийской научно-практической конференции с международным участием, г. Брянск, 9 октября 2009 г. В 2-х т. Т. 2. Брянск, 2009, էջ 391-396:

²¹ St' u **Кибальник А. Г.** Примирение с потерпевшим и диспозитивные начала уголов-

Տվյալ ինստիտուտի շրջանակներում հաստատվում է առանձնահատուկ հարաբերությունների մի ամբողջ համակարգ: Ընդ որում, հաշտեցումը կարևոր է քրեական իրավունքի և քրեական դատավարության համար՝ որպես երկու հակամարտող կողմերի ձեռք բերած արդյունք, որը կարող է դրվել քրեական պատասխանատվությունից ազատելու մասին համապատասխան որոշում ընդունելու հիմքում: Ինչպես կողմերի միջև փոխզիջման հասնելը, հաշտեցումը ևս քրեական դատավարության սահմաններից դուրս է, բայց, որպես այդ գործընթացի հետևանք, այն հիմք է դառնում նշյալ դատավարական որոշումն ընդունելու համար: Հաշտեցումը կանխարգելիչ միջոց է, որն ապահովում է, որ հանցանք գործած համապատասխան անձը այլևս համանման հանցանք չգործի: Հարկ է նշել, որ դատական պրակտիկայում հաշտեցումը կիրառվում է ոչ միայն անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար: Դատարանները հաշվի են առնում հաշտեցումը նաև այնպիսի հանցագործություններ կատարելու համար պատիժ նշանակելիս, որոնք չեն դասվում ոչ մեծ ծանրության հանցանքներին՝ որպես մեղքը մեղմացնող հանգամանք: ՀՀ ՔՕ-ի 62-րդ հոդվածը թույլ է տալիս անել դա, որի համաձայն՝ դատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ կարող է համարել նաև նրանք, որոնք թվարկված չեն այդ հոդվածի 1-ին մասում: Այդ առումով կարելի է պնդել, որ հաշտեցումը որպես միջճյուղային ինստիտուտ, չի սահմանափակվում միայն ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից ազատելով: Տվյալ ինստիտուտը լիովին համապատասխանում է արդի պահանջներին, որոնք ներկայացնում է հասարակությունը քրեական արդարադատությանը: Այն համապատասխանում է այնպիսի սկզբունքների, ինչպիսիք են մարդասիրությունը, կողմերի հավասարությունը և այլն, որոնք կազմում են ժամանակակից քրեական արդարադատության բովանդակությունը: Այն նաև համապատասխանում է հաշտարարության գաղափարներին, որոնց իրականացումը արդարադատության համակարգի ապագան է: Այդ առումով թերևս անհրաժեշտ է հետազայում ևս զարգացնել հաշտեցման ինստիտուտը, որի համար հարկավոր է խորությամբ իմաստավորել այն, որոշել դրա տեղը քրեական իրավունքի այլ ինստիտուտների շարքում: Միանգամայն հավանական է, որ կարիք կա ընդլայնելու տվյալ ինստիտուտի գործողությունը:

Բանալի բառեր - *հանցավոր, տուժող, հաշտեցում, պատիժ, պատասխանատվություն*

НЕЛЛИ АШРАФЯН – Примирение с потерпевшим как средство разрешения уголовно-правовых споров. – В статье рассматривается примирение

ного права // "Уголовное право: стратегия развития в XXI веке". Материалы 4-й международной научно-практической конференции, 25-26 января 2007, М.: ТК Велби, 2007, էջ 267-270:

обвиняемого с потерпевшим, что имеет решающее значение для определения уголовной политики. Примирение – это особая позиция лица, совершившего преступление, направленная на заглаживание своей вины, что может проявляться в самых разнообразных действиях, цель которых – восстановить (хотя бы частично) нарушенные преступлением права и удовлетворить интересы потерпевшего.

Ключевые слова: *преступник, потерпевший, примирение, наказание, ответственность*

NELLI ASHRAFYAN – *Reconciliation with the Victim as a Means of Solving Criminal-law Disputes.* – The article discusses the reconciliation of the accused with the victim, which is crucial for determining criminal policy. Reconciliation is a special position of the person who committed the crime, which is aimed at smoothing out his own guilt, which can manifest itself in a system of various actions, the purpose of which is to restore the rights (at least partial) violated by the crime and satisfaction of the victim.

Key words: *criminal, victim, reconciliation, punishment, responsibility*

Ներկայացվել է՝ 16.06.2019,
գրախոսվել է՝ 18.06.2019,
ընդունվել է տպագրության՝ 25.07.2019

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԻՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻԳՈՐ ԶՈՐԱՆՅԱՆ

Պետությունների ինքնիշխանության սկզբունքը, հատկապես Աուգսբուրգի (1555 թ.) և Վեստֆալյան (1648 թ.) հաշտություններից ի վեր¹, միջազգային իրավունքի անկյունաքարերից է:

Միջազգային տնտեսական հարաբերությունների գլոբալացման ներկա պայմաններում առաջնային է դարձել հենց պետությունների տնտեսական ինքնիշխանության խնդիրը: Սրա վառ վկայությունն է 2016 թ. հունիսին Մեծ Բրիտանիայում անցկացված հանրաքվեն, որով այդ երկիրը որոշեց դուրս գալ Եվրոպական միությունից («Բրեքսիթ»): «Փաստարկը, որ Բրիտանիան կորցրել էր իր ինքնիշխանությունը և անգամ իր ժողովրդավարությունը՝ լինելով ԵՄ կազմում, «Բրեքսիթ» հիմքերից էր»²: ԵՄ-ից դուրս գալու կողմնակիցների կարգախոսն էր՝ «Վերցրեք վերահսկողությունը» («Take Control»)³:

Տնտեսական գլոբալացումը մնում է միջազգային, ինչպես նաև պետության տնտեսության խոցելիության պատճառներից մեկը⁴: Թեև բոլոր պետությունները ենթակա են գլոբալացման ազդեցությանը, սակայն փոքր երկրների համար ներկայիս մարտահրավերներն ավելի ազդեցիկ են: Չունենալով տնտեսական բավականաչափ ռեսուրսներ՝ ավելի թույլ տնտեսություններով պետությունները կախված են արտաքին գործոններից, ներմուծումներից⁵ և այլն: Միջազգային տնտեսական անկումները կամ արտահանման կարևորագույն շուկաների խաթարումը ճակատագրական հետևանքներ կարող են ունենալ փոքր պետությունների համար⁶:

¹ Տե՛ս **Röling B. V. A.**, *International Law in an Expanded World*, Amsterdam: Djambatan N.V., 1960, Chapter III; **Falk R. A.** *The Interplay of Westphalia and Charier Conceptions of International Legal Order* in Falk R A & Black C I: (eds.) *The Future of international Legal Order* (1969) Vol. I., էջ 43–48):

² «The Economist», 2016, հասանելի է՝ <https://www.economist.com/britain/2016/06/15/the-economists-guide-to-britains-eu-referendum>

³ Vote Leave, 2016.

⁴ Տե՛ս **Хабибуллин А. Г., Чернобель Г. Т.** *Интересы государства и его охранно-защитная функция* // "Журнал российского права", 2008, № 5, էջ 18-27:

⁵ Տե՛ս, օրինակ՝ **Dahl R.A. and Tufte E. R.**, 1942, *Size and democracy*. Stanford University Press, Stanford, Calif, 1973:

⁶ Տե՛ս **Dermot McCann**, *Small States in Globalizing Markets: The End of National Economic Sovereignty*, 34, N.Y.U. J. Int'l L. & Pol. (2001), էջ 281:

Այսպիսով, պետությունների տնտեսական ինքնիշխանության իրացման խնդիրն ավելի ակներև է գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում: Իսկ ի՞նչ է տնտեսական ինքնիշխանությունը: Ինքնիշխանությունն առհասարակ ենթադրում է հնարավորություն՝ ինքնուրույն որոշելու պետության ներքին, ինչպես նաև արտաքին հարցերը՝ հետևելով միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին: Տնտեսական ինքնիշխանությունն իր հերթին իրավաքաղաքական հասկացություն է, որը սահմանում է պետության ինքնուրույնությունը՝ իրականացնելու տնտեսական բնույթի իրավասություններ այլ երկրների հետ փոխհարաբերություններում: Այն տարածքային և գործառույթային ինքնիշխան իրավունքների համադրություն է: Եթե տարածքային բնույթի ինքնիշխան իրավունքները պետությունն իրականացնում է իր սահմաններում, ապա գործառույթային ինքնիշխան իրավունքներից պետությունն օգտվում է տնտեսական գործունեության իրականացման ժամանակ⁷:

Տնտեսական ինքնիշխանության պատմական առանձնացումը՝ որպես ինքնուրույն սկզբունք, ուղղակիորեն կապվում է 1960-70-ականներին Ասիայում և Աֆրիկայում ձևավորված պետությունների միջազգային ասպարեզում ի հայտ գալու և նրանց՝ միջազգային գործընթացներից հետընթացը հաղթահարելու խնդիրների հետ:

1974 թ. «Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների խարտիայի» (CERDS) (այսուհետ՝ Խարտիա) ընդունումը նշանավորվում է միջազգային տնտեսական նոր կարգում տնտեսական ինքնիշխանությանն առնչվող սկզբունքների զարգացմամբ⁸: Խարտիան փորձում էր համառոտ թվարկել պետությունների տնտեսական իրավունքները և պարտականությունները⁹: Այս փաստաթղթի առաջին գլուխը, որը մասամբ ներկայացնում է ընդհանուր սկզբունքները, և երկրորդ ու չորրորդ գլուխները, որոնք ուղեկցվում են պետությունների որոշակի իրավունքների և պարտականությունների մեկնաբանություններով, ժամանակակից միջազգային իրավունքում կազմում են տնտեսական ինքնիշխանության հնարավորությունների և հեռանկարների իրավական հիմքը:

Հետագայում լրացուցիչ ջանքեր գործադրվեցին՝ հստակեցնելու և համակարգելու պետությունների տնտեսական իրավունքներն ու պարտականությունները: 1984 թ. «Միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի պրոգրեսիվ զարգացման մասին» ՄԱԿ-ի Վերապատ-

⁷ Տե՛ս **Малеев Ю. Н.** Международное воздушное право / Вопросы теории и практики. М., 1986, էջ 75:

⁸ 1975 թ. «Զարգացման և տնտեսական համագործակցության մասին» ՄԱԿ-ի ԳԱ No. 3362 (S-VII) բանաձևի նախաբանում նշվում է, որ Միջազգային տնտեսական նոր կարգի ծրագիրը և 1974 թ. Խարտիան «դնում են Միջազգային տնտեսական նոր կարգի հիմքերը»:

⁹ Տե՛ս Խարտիայի երկրորդ գլուխ:

րաստման և հետազոտությունների ինստիտուտի (UNITAR) (այսուհետ՝ ՄԱՎԳԻ) ուսումնասիրությունը և Միջազգային իրավունքի հանձնաժողովի 1986 թ. Սեուլի կոնֆերանսը (IL A Seoul Conference) առանձնացրին որոշակի սկզբունքներ և նորմեր՝ միջազգային տնտեսական նոր կարգի (New International Economic Order)¹⁰ վերաբերյալ, որոնք գետեղված են հետևյալ երկու համապարփակ սկզբունքներում: Դրանցից առաջինն **ինքնիշխան հավասարության սկզբունքն** է, որում կարելի է ներառել. 1) պետության իրավունքը որոշելու իր տնտեսական համակարգը, 2) բնական ռեսուրսների, տնտեսական գործունեության և հարստության նկատմամբ մշտական ինքնիշխանությունը, 3) այդ երկրների ամբողջական և արդյունավետ մասնակցությունը միջազգային տնտեսական հարաբերություններին, 4) հավասարությունը և խտրականության արգելման սկզբունքը: Երկրորդ սկզբունքը վերաբերում է պետությունների **համագործակցելու պարտականությանը**, որը ներառում է. 1) զարգացող պետությունների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքը, 2) զարգացող երկրների արտահանումներից եկամուտների կարգավորումը, 3) զարգացող երկրների զարգացմանը օժանդակելու թույլտվության սկզբունքը, 4) մարդկության ընդհանուր ժառանգության սկզբունքները, 5) յուրաքանչյուր պետության իրավունքը՝ օգտվելու գիտության և տեխնոլոգիաների հնարավորություններից, 6) *Pacta sunt servanda*, 7) վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը: Սկզբունքների այս բազմազանությունը վկայում է տնտեսական ինքնիշխանությանը վերաբերող հիմնախնդիրների խրթին լինելու մասին:

Պետության տնտեսական ինքնիշխանության հասկացության նորմատիվ-իրավական բովանդակությունն ընդհանուր առմամբ ենթադրում է երկու տարրեր.

1. պետության ինքնիշխան իրավունքը՝ ազատորեն տնօրինելու սեփական ռեսուրսները, հարստությունը և ամբողջ տնտեսական գործունեությունը,

2. պետության ինքնիշխան իրավունքը՝ իրավահավասար հիմունքներով մասնակցելու միջազգային տնտեսական հարաբերություններին:

Առաջինը ենթադրում է պետության գերակայությունը երկրի ներսում, երկրորդը՝ արտաքին հարաբերություններում¹¹:

Պետության ինքնիշխանությունը երկրի ներսում: Պրոֆեսոր Կաստանեդան գտնում է, որ տնտեսական ինքնիշխանության ներքո պետք է հասկանալ «միջոցների և դրույթների համակցությունը», որոնց միջոցով «պետությունները կարող են պահպանել իրենց տնտեսական ան-

¹⁰ Տե՛ս **Gebremariam F. M.**, *New International Economic Order (NIEO): Origin, Elements and Criticisms*, International Journal of Multicultural and Multireligious Understanding, Germany, 2017:

¹¹ Տե՛ս **Блищенко И. П., Дориа Ж.** *Экономический суверенитет государства. Учебное пособие.* М., 2000, էջ 51, 66:

կախությունը և ռեսուրսները»¹²: ՊորՖեստր Բետաստին գտնում է, որ պետությունների տնտեսական ինքնիշխանությունը հարգելու սկզբունքի նորմատիվային բովանդակության մեջ մտնում են միջազգային տնտեսական նոր կարգի հետևյալ ծրագրերը՝ սոցիալ-տնտեսական համակարգերի ընտրության ազատություն, ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանություն և այլն¹³:

Միջազգային կազմակերպությունների բազմաթիվ բանաձևեր¹⁴, կոնվենցիաներ¹⁵ և պետությունների իրավական պրակտիկան սահմանել են սեփական տարածքի սահմաններում պետության ինքնիշխան իրավունքը ռեսուրսների և տնտեսական գործունեության նկատմամբ, խտրականության անթույլատրելիությունը, պետությունների տնտեսական համագործակցության փոխշահավետության անհրաժեշտությունը, բոլոր պետություններին միջազգային տնտեսական խնդիրներին վերաբերող որոշումներին ներգրավելը և այլն:

Բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանության (այսուհետ՝ Մշտական ինքնիշխանություն) վերաբերյալ պահանջները ի սկզբանե մոտիվացվել են նորանկախ պետությունների և զարգացող այլ պետությունների ինքնիշխանությունը ուժեղացնելու ջանքերով¹⁶: Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների սեփական ռեսուրսները պաշտպանելու ցանկությունը հիմք հանդիսացավ, որ բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանության իրավունքն արտացոլվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքում: Այն նաև տեղ գտավ ՄԱԿ-ի ԳԱ 1314 (XIII) 1958 թ. դեկտեմբերի 12-ի բանաձևում, որտեղ դիտարկվում է որպես «ինքնորոշման իրավունքի հիմնական տարր», իսկ այսուհետ՝ 1962 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1803 (XVIII) բանաձևով նշվեց «բնական հարստության և ռեսուրսների նկատմամբ անօտարելի ինքնիշխանության» մասին, 1966 թ. դեկտեմբերի 25-ի 2158 (XXI) բանաձևում՝ «ժողովուրդների իրավունքը՝ ազատորեն տնօրինե-

¹² **Bedjaoui M.** Droit International: Bilan Et Perspectives. Paris: Pédone, 1991, p. 633.

¹³ Տե՛ս **Bettati M.** Le nouvel ordre economique international, Que sais - je?, 1986, էջ 16:

¹⁴ Տե՛ս, օրինակ՝ ՄԱԿ-ի ԳԱ 3201 (S-VI) 01.05.1974 թ. բանաձևը (Միջազգային տնտեսական նոր կարգի հաստատման մասին հռչակագիր) և 01.05.1974 թ. 3202 (S-VI) բանաձևը (Միջազգային տնտեսական նոր կարգի հաստատման գործողությունների ծրագիր), 12.12.1974 թ. 3281 (XXIX) բանաձևը:

¹⁵ 1966 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Ծովային իրավունքի մասին» 1982 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան (հոդվ.՝ 56, 77):

¹⁶ Տե՛ս 1952 թ. Ուրուգվայի և Լեհաստանի հայտարարությունները ՄԱԿ ԳԱ 523 և 626 բանաձևերի ընդունման շրջանակներում: Մշտական ինքնիշխանությունն առհասարակ չի ձևավորվել մեկուսի, այլ որպես գործիք օգտագործվել է միջազգային քաղաքական իրադարձություններին միջամտելու համար: Այս համատեքստում կարելի է առանձնացնել յուրացման (expropriation) այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են անգլո-իրանական նավթային ընկերության (1951 թ.), Սուեզի ջրանցքի ընկերության (1956 թ.), Ինդոնեզիայում հոլանդական սեփականության (1958 թ.), Չիլիի պղնձի արդյունաբերության (1972 թ.) և լիբիական նավթի արդյունաբերության (1976-77 թթ.) գավթման դեպքերը:***

լու իրենց բնական հարստությունները և ռեսուրսները» և այլն:

Մշտական ինքնիշխանության սկզբունքի ամրագրումը ինքնորոշման իրավունքի համատեքստում կարևորագույն նշանակություն ունեցավ նոր ձևավորվող պետությունների տնտեսական ինքնիշխանության պաշտպանության համար¹⁷: Անկասկած, 1970 և 80-ականների իրադարձությունները նպաստեցին Մշտական ինքնիշխանության սկզբունքի ամրապնդմանը¹⁸:

Մշտական ինքնիշխանության սկզբունքի ամրագրման նպատակները տեղ են գտել մասնավորապես ՄԱԿ-ի ԳԱ-ի «Բնական ռեսուրսների նկատմամբ անօտարելի ինքնիշխանության մասին» 1962 թ. դեկտեմբերի թիվ 14 բանաձևում, որտեղ նշվում է, որ մշտական ինքնիշխանությունը բնական հարստության և ռեսուրսների նկատմամբ «պետք է իրականացվի» «ազգային զարգացման և շահագրգռված ժողովրդի բարեկեցության» շահերով առաջնորդվելով¹⁹:

Այս սկզբունքը հետապնդում է նաև այլ նատակներ: Առաջին՝ ՄԱԿ-ի ԳԱ 1952 թ. բնական ռեսուրսների նկատմամբ Մշտական ինքնիշխանությանը վերաբերող թիվ 523 բանաձևը ներառում էր «համաշխարհային տնտեսության հետագա ընդլայնման» նպատակը: 1970 թ. DD-II բանաձևը ընդգծում է, որ «... քաղաքականությունը պետք է տարվի գլոբալ համատեքստում, որը միտված է հասնելու համաշխարհային ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը, որոնք օգտակար են զարգացած և զարգացող պետություններին»²⁰: Ինչ վերաբերում է գաղութային տիրապետության տակ գտնվող ժողովուրդների Մշտական ինքնիշխանության իրավունքին, առաջնային նպատակը, անկասկած, «նրանց բնական ռեսուրսների նկատմամբ վերահսկողության վերաստանձնումն էր»²¹:

Պայմանագրերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն սահմանում են Մշտական ինքնիշխանության իրավունքը, այդքան էլ չեն անդրադառնում դրա նպատակներին: 1981 թ. «Մարդու իրավունքների աֆրիկյան խարտիան» նշում է. «Այս իրավունքները պետք է իրականացվեն ժողովրդի բացառիկ շահերով»²²: «Ծովային իրավունքի մասին» 1982 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի 56-րդ հոդվածը նշում է, որ բնական ռեսուրսների նկատմամբ ինքնիշխան իրավունքը շնորհվել է պետություններին՝ «բնական ռեսուրսները հետազոտելու և շահագործելու, պահպանելու և կառավարելու նպատակով»:

Մշտական ինքնիշխանությանը վերաբերող դրույթների ամրագրման կարևոր փուլ եղավ 1966 թ. «Քաղաքացիական և քաղաքական

¹⁷ Տե՛ս *Блищенко И. П., Дориа Ж.*, նշվ. աշխ., էջ 52-55:

¹⁸ Տե՛ս, օրինակ՝ 1974 թ. Խարտիան, 1986 թ. Մեուլի հռչակագիրը և այլն:

¹⁹ Տե՛ս GA Res. 1803 (XVII), 14 December 1962, Para. 1:

²⁰ GA Res. 2626 (XXV), 24 October 1970, Para. 73.

²¹ 73 GA Res. 3171 (XXVIII), 17 December 1973.

²² «Մարդու իրավունքների աֆրիկյան խարտիա», հոդված 21, մաս 1:

իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որտեղ նշված է. «Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել իրեն պատկանող գոյության միջոցներից»²³, ինչպես նաև 1974 թ. Խարտիան, որում նշվում է հետևյալը. «Յուրաքանչյուր պետություն կարող է և պարտավոր է ազատորեն իրականացնել ամբողջական և անընդհատ ինքնիշխանություն իր հարստության, բնական ռեսուրսների և տնտեսական գործունեության նկատմամբ, ներառյալ՝ տիրապետելու, օգտագործելու և շահագործելու իրավունքը»²⁴:

Միջազգային իրավունքը դեռևս չի տվել բնական ռեսուրսների միասնական իրավական սահմանումը²⁵: Բնական ռեսուրսներին համակարգային սահմանում և որակում տալու ամենամանրամասն փորձը կատարել է արգենտինացի իրավաբան Կանոն՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը (ՊԳԿ) ուղղված զեկույցում: Նա սահմանում է բնական ռեսուրսները որպես «ֆիզիկական բնական իրեր՝ ի հակադրություն այն ամենի, որոնք ստեղծված են մարդու կողմից»²⁶: Այնուամենայնիվ, ավելի հստակ մոտեցման համաձայն՝ պետությունն իր ինքնիշխան իրավունքները բնական ռեսուրսների, հարստության և ամբողջ տնտեսական գործունեության նկատմամբ տարածում է հետևյալ օբյեկտների վրա. 1) բնական ռեսուրսների և հարստությունների²⁷, որոնք գտնվում են տվյալ պետության տարածքում, և տվյալ պետության տնտեսական ամբողջ գործունեության վրա, 2) բնական ռեսուրսների, հարստությունների և ամբողջ տնտեսական

²³ 1966 թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդվ. 1, 2-րդ մաս:

²⁴ Խարտիա, հոդվ. 2, կետ 1:

²⁵ ՄԱԿ-ի ԳԱ այն բանաձևերը, որոնք վերաբերում են Իսրայելի կողմից օկուպացված տարածքի ինքնիշխանությանը, օգտագործում են «ազգային հարստություն և ռեսուրսներ», «ազգային ռեսուրսներ» և «բոլոր ռեսուրսներ և հարստություն» եզրույթները: Այս առումով ՄԱԿ-ի ԳԱ-ն նախընտրել է ընդլայնել Մշտական ինքնիշխանության շրջանակը բնական ռեսուրսներից անդին, որպեսզի ներառի «մարդկային ռեսուրսների» շահագործումը, մշակութային, կրոնական և ազգային ժառանգության այլ ասպեկտների օգտագործումն ու սեփականությունը: Այս համատեքստում Մշտական ինքնիշխանությունը բնական ազգային հարստության և ռեսուրսների նկատմամբ օգտագործվում է որպես համապարփակ կոնցեպտ, որը վերաբերում է Պաղեստինի ժողովրդի ինքնորոշման իրավունքի և արաբական պետությունների «մշտական» ինքնիշխանությանը:

²⁶ **Cano G. J.**, *A Legal and Institutional Framework for Natural Resources Management*, FAO Legislative Studies № 9, FAO: Rome, 1975, p. 1, 30–33.

²⁷ Տե՛ս **Heilbroner**, “Wealth,” in Eatwell et al. (eds), *The New Palgrave. A Dictionary of Economics*, Macmillan: London, Vol. 4, 1987, էջ 880–882: «Բնական հարստություն» եզրույթը հաճախ է օգտագործվել ՄԱԿ-ի ԳԱ բանաձևերում և այլ իրավական գործիքներում, բայց ոչ հաճախ՝ իրավական դոկտրինայում: Միանշանակ չի ընկալվում, թե արդյոք Մշտական ինքնիշխանությունը կարող է տարածվել «հարստության» վրա ընդհանրապես, ինչպես նշվել է Խարտիայում, որոշ պայմանագրերում և 1986 թ. Սեուլի հռչակագրում: Միննույն ժամանակ, պետք է ընդգծել, որ հարստությանն անդրադարձել են տնտեսագիտության տարբեր դասական աշխատություններում, օրինակ՝ Ադամ Սմիթի «Ազգերի հարստությունը» (1776 թ.) և Ջոն Բեյթս Կլարկի «Հարստության բաժանումը» (1908 թ.):

գործունեության²⁸ վրա՝ բացառիկ տնտեսական գոտում և մայրցամաքային ելուստում, 3) կենսաբանական ռեսուրսների վրա²⁹, որոնք գտնվում են իր տարածքում՝ բացառիկ տնտեսական գոտում և մայրցամաքային ելուստում, 4) սեփական բնական ռեսուրսների և հարստության վերաբերյալ տվյալների և տեղեկատվության, որոնք ստացվել են ինչպես պետության, այնպես էլ այլ պետությունների, նրանց իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից:

Հարց է առաջանում, թե որոնք են ռեսուրսների նկատմամբ ինքնիշխանության իրավունքի իրացման դրսևորման ձևերը: Ընդհանուր առմամբ դրանք հետևյալն են. ա) պետության իրավունքը՝ ազատորեն տնօրինելու իր հարստությունը և բնական ռեսուրսները, ներառյալ հնարավորությունը՝ որոշելու դրա հետազոտության, շահագործման և օգտագործման կարգը՝ ազգային օրենսդրության համաձայն, բ) իրավունքը՝ կարգավորելու օտարերկրյա ներդրողներին սեփական ռեսուրսների շահագործումը թույլատրելու պայմանները, գ) իրավունքը՝ ազգայնացնելու ցանկացած տեսակի սեփականություն, որը գտնվում է իր տարածքում, երբ ազգային անվտանգության շահերը պահանջում են դա, դ) իրավունքը՝ կարգավորելու ամբողջ տնտեսական գործունեությունն իր տարածքում, ներառյալ ինչպես օտարերկրյա ներդրումների ռեժիմների սահմանումը, այնպես էլ օտարերկրյա պետությունների հետ արտաքին տնտեսական կապերի հաստատումը, ներառյալ՝ մաքսային կարգավորումները, լիցենզիոն գործունեությունը, սեփական ռեսուրսների գների սահմանումը և այլն, ե) ազգայնացման դեպքում փոխհատուցում վճարելու իրավունքը: Այս իրավունքներին համապատասխանում են այլ պետությունների համապատասխան պարտականությունները. ա) պարտականությունը՝ ձեռնպահ մնալու հարկադրանքից, միջամտությունից և այլ գործողություններից, որոնց նպատակն է խոչընդոտել այս կամ այն պետության ինքնիշխան իրավունքների և ազատությունների իրականացումը իրենց բնական ռեսուրսների, հարստության և տնտեսական գործունեության նկատմամբ, բ) հակաիրավական գործողություններով պետության ռեսուրսներին պատճառված վնասի հատուցման պարտականությունը, գ) պե-

²⁸ Տե՛ս GA Res. 2626 (XXV), 24 October 1974, Paragraph 73: Paragraph 4 (e) of GA Res. 3201 (S-VI), 1 May 1974 (NIEO հռչակագիրը օգտագործում է «բնական ռեսուրսներ և բոլոր տնտեսական գործունեություններ» արտահայտությունը): Art. 1.5 of the European Energy Charter Treaty, Lisbon, 17 December 1994 (1994 թ. «Եվրոպական էներգետիկ խարտիան» այն եզակի միջազգային-իրավական գործիքներից է, որը պարունակում է «տնտեսական գործունեություն» հասկացությունը):

²⁹ Կենսաբանական ռեսուրսների նկատմամբ ինքնիշխանությունը մասնավորապես ամրագրված է Ռիո դե Ժանեյրոյում 1992 թ. հունիսի 5-ին ստորագրված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայում, որն ընդունում է, որ պետությունը, ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն, ունի ինքնիշխան իրավունք՝ մշակելու սեփական ազատ ռեսուրսները, ներառյալ կենսաբանական և գենետիկական: Տե՛ս «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա, հոդվ. 3:

տությունների պարտականությունը՝ բարեխղճորեն համագործակցելու ռեսուրսների համատեղ օգտագործման շրջանակներում՝ առանց այլ պետություններին վնաս պատճառելու:

Ինչպես տեսնում ենք, օտարերկրյա ներդրումների ոլորտում միջամտություն իրականացնելու հնարավորությունը պետությունների տնտեսական ինքնիշխանության իրացման կարևորագույն դրսևորումներից է: Ուղղակի կամ պորտֆելային ներդրումների տեսքով օտարերկրյա կապիտալը պետության տնտեսության համար երբեմն վտանգ է ներկայացնում: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, օտարերկրյա ներդրողները, օգտագործելով իրենց ճկունությունը, ի վիճակի են օպերատիվ կերպով համախմբել իրենց ֆինանսական հնարավորությունները տնտեսության այս կամ այն ոլորտում՝ առավելագույն շահույթ ստանալու նպատակով, ինչպես նաև արագորեն դուրս բերել իրենց կապիտալը տվյալ երկրից հաշվի չառնելով նրա պետական շահերը: Այս պայմաններում պետությունը պարտավոր է վարել օտարերկրյա ներդրումների թույլատրման հավասարակշռված քաղաքականություն, ինչն անհնար է առանց տնտեսական ինքնիշխանության ամրապնդման: Հավասարակշռված պետական ներդրումային քաղաքականությունը պահանջում է, որ դրանում ողջամտորեն արտացոլվեն ներդրողների հանրային և մասնավոր շահերը³⁰:

Ըստ էության, պետության՝ օտարերկրյա ներդրումների թողությունների իրավունքն անսահմանափակ է, քանզի այն բխում է հենց պետական ինքնիշխանության գաղափարից³¹: Պետությունը պետությունների ինքնիշխան իրավահավասարության ուժով սահմանում է ներքին ներդրումային իր քաղաքականությունը՝ որոշելով գործող ազգային օրենսդրության կանոնները և սեփական տարածքում օտարերկրյա ներդրումների հասանելիությունը:

Պետությունը ինքնիշխան հավասարության ուժով նաև իրավունք ունի առանձնակի անհրաժեշտության դեպքում և սեփական շահերից ելնելով յուրացնել (*expropriate*) օտարերկրյա սեփականությունը՝ սահմանադրության և միջազգային իրավունքի համաձայն³²:

Կարելի է ընդգծել երեք պատճառ, որոնց ուժով պետությունն իրա-

³⁰ Տե՛ս **Boguslavsky M., Trunk A.** Legal issues of foreign investment in transition countries, *Osteuroforshung*, 2007, Bd., էջ 29:

³¹ Տե՛ս **Каппо Д., Жоар П.** Международное экономическое право. М., 2002, էջ 349-352:

³² Առաջին անգամ պետության կողմից ոչ խտրական միջոցների կիրառմամբ սեփական տնտեսության տարբեր ասպեկտների պաշտպանության իրավունքի մասին նշել է Մ. Սորնարաջը, տե՛ս **Sornarajah M.**, *The international law on foreign investment*. L., 1994. P. 283: Նրան հաջորդեց Բրունոլին, որը նշեց, որ օտարերկրյա սեփականությունը, ներառյալ նրա օգտագործման իրավունքը, կարող է ենթարկվել լրացուցիչ հարկման, առևտրային սահմանափակման, որը ներառում է լիցենզիոն կարգի և քվոտաների սահմանումը և այլն: Նա գտնում է, որ պետության սահմանափակման միջոցները որոշ դեպքերում այնուամենայնիվ չեն կարող համարվել իրավաչափ: Տե՛ս **Brownlie J.**, *Public international law*, 6th Ed., 2003, էջ 509:

վունք ունի և անգամ պարտավոր է առանց որևէ սահմանափակման միջամտել մասնավոր ոլորտին: Առաջինը հանրային անվտանգության մասին մտահոգությունն է և բնակչության առողջությունը, երկրորդը՝ ազգային բարօրության մասին մտահոգությունն է և երրորդը՝ տնտեսության որոշ ճյուղերի զարգացումը օտարերկրյա ներդրումների մուտքն արգելելու միջոցով³³: Այս համատեքստում հարկ է ընդգծել «Ազատ առևտրի հյուսիսատլանտյան ասոցիացիայի» (NAFTA) շրջանակներում «Մեթանեքսն ընդդեմ ԱՄՆ-ի» գործը, որտեղ տրիբունալը որոշեց, որ արգելքն իրականացվել է հանրային նպատակներով, սահմանված օրինական կարգով և իր բնույթով խտրական չէ, այլ խոսքերով՝ «միջազգային իրավունքի տեսանկյունից պետության (ԱՄՆ) կողմից արգելքն իրավաչափ էր և չէր համարվում յուրացում»³⁴:

Կարևոր է, որ պետությունը պարտավորություն է կրում ապացուցելու, որ այս կամ այն իրավունքը պետք է անհրաժեշտության դեպքում սահմանափակվի՝ պետության առջև ծառայած խնդրի լուծման նպատակներին հասնելու համար:

Պետության ինքնիշխանությունը միջազգային տնտեսական հարաբերություններում (արտաքին կողմը): Իրավական հավասարությունը՝ որպես պետությունների ինքնիշխան իրավահավասարության կարևորագույն տարր, անհրաժեշտ է պետությունների միջպետական տնտեսական հարաբերություններին իրավահավասար մասնակցության համար: Ակնհայտ է, որ իրավաբանական հավասարությունը ենթադրում է պետությունների միջև փոխշահավետ համագործակցություն, ինչի մասին խոսվում է ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովում (United Nations Conference on Trade and Development) (UNCTAD), 1975 թ. Հելսինկիի եզրափակիչ ակտում և այլն:

Խոսելով տնտեսական փոխհարաբերություններում պետությունների իրավահավասարության մասին՝ պետք է հաշվի առնել հենց իրավաբանական հավասարությունը և ոչ թե փաստացի հավասարությունը: Ինչպես պրոֆ. Կոլոսովն է նշել, «փաստացի հավասարության բացակայության պայմաններում միակ այլընտրանքը իրավաբանական հավասարությունն է»³⁵:

Այսպիսով՝ տնտեսական ինքնիշխանության արտաքին ասպեկտի բովանդակությունը երկակի է: Մի կողմից՝ այն ենթադրում է պետության իրավունքը՝ ստանալու հավասար օգուտ միջազգային տնտեսական կյանքին մասնակցելու միջոցով, իսկ մյուս կողմից՝ պետության ի-

³³ Տե՛ս **Фархутдинов И. З.** Международное инвестиционное право. Теория и практика применения. М., 2005, էջ 238-239:

³⁴ Methanex Corporation v United States, Final Award on Jurisdiction and Merits, (2005) 44 ILM 1345, Inside US Trade, 19 August 2005, 12, IIC 167 (2005), 3rd August 2005, Ad Hoc Tribunal (UNCITRAL):

³⁵ **Колосов Ю. М.** К вопросу о примате международного права // Международное право в современном мире. М., 1991, с. 7.

րավունքը՝ հավասար մասնակցելու միջազգային տնտեսական խնդիրների լուծմանը:

Ա. Միջազգային տնտեսական կյանքին մասնակցությունից հավասար օգուտ քաղելու ասպեկտն ինքնին ունի երկակի բնույթ.

1. միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցությունից պետության արդար մասնաբաժինը,

2. պետության արդարացի մասնաբաժինը այն ռեսուրսների իրացումից, օգտագործումից և շահագործումից, որոնք բոլոր պետությունների մասնաբաժինն են:

Բեջաուին գտնում էր, որ ցանկացած պետություն իր ինքնիշխանության և այլ պետությունների հետ իրավահավասարության ուժով իրավունք ունի մնացածից պահանջելու, որ «չտանեն իրենից այն, ինչ պատկանում է իրեն, կամ չզրկեն նրանից, ինչ իրենն է կամ հասնում է իրեն միջազգային իրավունքի համաձայն»³⁶: Այնուհետև նա շարունակում է նշելով, որ զարգացող պետությունն իրավունք ունի պահանջելու «արդար գին» իր հումքային ռեսուրսների և այն ամենի համար, ինչն այդ պետությունը կարող է փոխանակման համար առաջարկել ավելի զարգացած երկրներին:

Իսկ Ի. Ս. Շաբանը գտնում է, որ միջազգային տնտեսական հարաբերություններում պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը մի կողմից իրավահավասարության սկզբունքն է, որի տնտեսական ասպեկտը նշանակում է «իրավական հավասարություն և տնտեսական շահերի պահպանում բոլոր պետությունների կողմից», իսկ մյուս կողմից՝ փոխշահավետության սկզբունքը, որի շնորհիվ «կողմերը հավասար օգուտներ են քաղում տնտեսական համագործակցությունից»³⁷: Այս հարցում Բեջաուին նշում է, որ զարգացող երկիրը, եթե անգամ չունի իր բոլոր պահանջները բավարարելու իրավունք, այնուամենայնիվ իրավունք ունի ստանալու արդար մասնաբաժին այն ամենից, ինչ պատկանում է բոլորին և իրեն³⁸:

Բ. Միջազգային տնտեսական կյանքին պետության իրավահավասար մասնակցությունը նաև պետության իրավունքն է՝ մասնակցելու միջազգային տնտեսական խնդիրների լուծմանը³⁹: Կ. Մանուկյանը կարծում է, որ այս սկզբունքը թերի է, քանզի չի պարունակում ամենակարևոր տարրերից մեկը. պետությանը պետք է իրավունք շնորհվի մասնակցելու այն միջազգային հարցերին, որոնք անուղղակիորեն շո-

³⁶ Bedjaoui M. նշվ. աշխ., էջ 1262:

³⁷ Шабан И. С. Принципы равноправия и взаимной выгоды в международных экономических отношениях государств. Международное право и международный порядок. М., 1981, с. 132.

³⁸ Տե՛ս Bedjaoui M., նշվ. աշխ., էջ 1263:

³⁹ Այս տեսակետը հաստատվում է այնպիսի միջազգային ակտերի դրույթներով, ինչպիսիք են 1964 թ. Ժնևյան սկզբունքները (իններորդ և տասներորդ ընդհանուր սկզբունքներ), 1974 թ. Խարտիան (Նախաբան, հոդվ. 5,6,10), «Միջազգային տնտեսական նոր կարգի հաստատման մասին» 1974 թ. հռչակագիրը և այլն:

շափում են իր շահերը⁴⁰:

Այս համատեքստում կարևոր խնդիր է միջազգային արժույթաֆինանսական ոլորտում զարգացող պետությունների նկատմամբ խտրականությունը: Արժույթի միջազգային հիմնդրամի և Համաշխարհային բանկի քվեարկության համակարգը հանգեցնում է թերի զարգացած պետությունների՝ տնտեսական առումով կախվածության: Դրա հետևանքով ֆինանսական ռեսուրսներն այս պետություններին հազվադեպ են տրվում այնպիսի ծավալներով, որոնք անհրաժեշտ են տնտեսական զարգացման համար, իսկ եթե դրանք տրամադրվում են, ապա ուղեկցվում են այնպիսի պահանջներով, որոնք իսկապես վտանգում են «երրորդ աշխարհի» պետությունների տնտեսական անվտանգությունը: Տպավորություն է ստեղծվում, որ ոմանք առանձնապես չեն էլ ցանկանում այս երկրները տեսնել զարգացած վիճակում:

Այս խնդրի առնչությամբ գործում են որոշակի նորմատիվ-իրավական կարգավորումներ, որոնք փորձում են ապահովել միջազգային տնտեսական խնդիրների լուծմանը մասնակցելու պետությունների իրավահավասարությունը: Մասնավորապես, 1974 թ. Խարտիայի 10-րդ հոդվածը սահմանում է պետության՝ միջազգային տնտեսական խնդիրների լուծմանը մասնակցելուն առնչվող երկու կարևոր ասպեկտներ: Դրանցից առաջինը միջազգային տնտեսական կազմակերպությունների որոշումների ընդունման արդարացի գործընթացն է: Երկրորդը պետության ինքնիշխան իրավունքն է՝ մասնակցելու միջազգային տնտեսական կազմակերպություններին և համաձայնություններին⁴¹:

Տնտեսական ինքնիշխանության սկզբունքի իրացմանը նպաստում են հետևյալ սկզբունքները՝ տնտեսական խտրանակության արգելքը, փոխշահավետությունը և թերզարգացած պետությունների համար առավել բարենպաստ ռեժիմը:

Ա) Տնտեսական խտրանակության արգելքի սկզբունքը իրավահավասար և փոխշահավետ տնտեսական հարաբերությունների կարևորագույն նախապայման է: Ինչպես արդարացիորեն նշել է ՄԱԿ-ի իրավունքի միջազգային հանձնաժողովը, խտրանակության արգելքի սկզբունքը «ընդհանուր կանոն է, որը բնորոշ է պետությունների ինքնիշխան հավասարությանը»⁴²:

Այս սկզբունքը արտացոլված է մի շարք միջազգային փաստաթղթերում, օրինակ՝ 1994 թ. Առևտրի համաշխարհային կազմակերպության Մարաքեշյան համաձայնագրի նախաբանում նշված է, որ ԱՀԿ-ն ստեղծվել է անդամ պետությունների միջև փոխադարձ և փոխշահա-

⁴⁰ Տե՛ս **Манукян К. Л.** Принцип равноправия государств в международном праве. М., էջ 103, 104:

⁴¹ Տե՛ս Խարտիայի 10-րդ հոդված:

⁴² Yearbook of International Law Commission, 1961, vol II, N.Y., p. 128.

վետ այնպիսի համաձայնագրեր կնքելը խթանելու նպատակով, որոնք ուղղված են գործող սակագների և առևտրում այլ խոչընդոտների նվազեցմանը և միջազգային առևտրում խտրական միջոցների վերացմանը: Նմանատիպ դրույթներ պարունակվում են նաև 1994 թ. ՄԱԳՀ-ում (GATT համաձայնագիր)⁴³:

Տնտեսական խտրականության արգելքի սկզբունքը կոնկրետ պայմանագրերում լրացվում է փոխշահավետության և թերի զարգացած պետությունների համար առավել բարենպաստ ռեժիմի սկզբունքներով, ինչի մասին վկայում է ՄԱԳՀ-ի չորրորդ մասը:

Բ) Փոխշահավետության սկզբունքն ուղղված է պետությունների միջև կայուն և իրավահավասար տնտեսական հարաբերությունների հաստատմանը: Այն պետության տնտեսական ինքնիշխանությունն ապահովող անկյունաքարային տարր է:

1974 թ. Խարտիայի համաձայն՝ պետությունների միջև տնտեսական հարաբերությունները պետք է կառուցվեն փոխադարձ և շահավետ օգուտի հիման վրա, որը չի թույլատրում այլ պետությունների տնտեսական շահին վնաս պատճառել: Սրա մասին խոսվում է նաև 1975 թ. Հելսինկյան եզրափակիչ ակտում:

Գ) Թերի զարգացած պետությունների համար առավել բարենպաստ ռեժիմի սկզբունքը դեռ կայացման փուլում է: Այն՝ որպես իրավական նորմ, զարգանում է երկկողմ և բազմակողմ գործող պայմանագրերի, միջազգային կազմակերպությունների գործունեության, պետությունների պրակտիկայի վրա⁴⁴:

Տնտեսական ինքնիշխանության արդյունավետ իրացման համար պետությունը անշուշտ պետք է օժտված լինի տնտեսական անկախությամբ: Ներկայումս ավելի տարածված են տնտեսական անկախության երկու նշանակություններ. 1) տնտեսական ինքնուրույնության՝ սոցիալ-տնտեսական զարգացման այնպիսի մակարդակ, որը հնարավորություն է տալիս պետությանն ամրանալու միջազգային տնտեսական հարաբերություններում, 2) տնտեսական ինքնիշխանության, այսինքն՝ որպես պետության սուբյեկտիվ իրավունք և որպես միջազգային իրավունքի օբյեկտիվ սկզբունք⁴⁵:

ՄԱԿ-ի ԳԱ-ի՝ Բնական ռեսուրսների նկատմամբ անօտարելի ինքնիշխանության մասին 1962 թ. դեկտեմբերի 14-ի բանաձևի նախաբանում նշված է, որ ՄԱԿ-ի ԳԱ-ն ընդունել է այդ բանաձևը, նկատի ունենալով, որ պետությունների միջև հարաբերությունները «պետք է հիմնված լինեն բոլոր պետությունների՝ սեփական հարստության և բ-

⁴³ Տե՛ս ՄԱԳՀ, հոդված I և XX:

⁴⁴ Տե՛ս GATT որոշում՝ 28 նոյեմբերի 1979 թ.՝ զարգացող պետությունների հատուկ կարգավիճակի մասին, որն այսօր ինկորպորացվել է 1994 թ. ԱՀԿ-ում: Տե՛ս նաև՝ 1964 թ. Ժնևյան սկզբունքներ և այլն:

⁴⁵ Տե՛ս, օրինակ՝ **Bedjaoui M.**, Towards a New International Economic Order, 1979:

նական ռեսուրսների ազատ տնօրինման իրավունքի վրա՝ սեփական ազգային շահերի և պետությունների տնտեսական անկախությանը համապատասխան», ինչպես նաև նշվում է, որ «պետությունների անօտարելի ինքնիշխանության իրականացումն ու ամրապնդումն իր բնական հարստությունների և ռեսուրսների վրա ամրապնդում են նրանց տնտեսական անկախությունը»⁴⁶:

Քանի որ միջազգային իրավունքի սկզբունքները փոխկապակցված են, այդ պատճառով տնտեսական ինքնիշխանության սկզբունքը երբեմն հստակեցվում է այլ սկզբունքների բովանդակությունում, ինչպիսիք են՝ պետության ինքնիշխանության, ներքին գործերին չմիջամտելու, համագործակցության, վեճերի խաղաղ լուծման, փոխադարձ և արդարացի շահի և այլ սկզբունքները, որոնց փոխգործակցությունը տնտեսական ինքնիշխանությունը հարգելու սկզբունքի հետ կազմում է պետության տնտեսական անվտանգության երաշխիքների նորմատիվ-իրավական հիմքը:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության հիման վրա կարող ենք հանգել հետևյալին.

- Ներկայիս գլոբալացման պայմաններում պետությունների տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրը ձեռք է բերում էլ ավելի մեծ նշանակություն: Խնդիրն առավել արդիական է դարձել հատկապես տնտեսապես թույլ պետությունների համար:

- Տնտեսական ինքնիշխանությունը (անկախությունը)՝ որպես իրավաբանական կատեգորիա, պայմանավորված չէ պետության սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանով: Տնտեսապես ինքնիշխան են բոլոր պետությունները:

- Պետության տնտեսական ինքնիշխանությունն ասելով նախևառաջ պետք է հասկանալ սեփական ռեսուրսները, հարստությունը և ամբողջ տնտեսական գործունեությունը ազատորեն տնօրինելու և իրավահավասար հիմունքներով միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցելու պետության իրավունքները:

- Թեպետ միջազգային իրավունքում դեռևս չկա բնական ռեսուրսների միասնական իրավական սահմանում, միասնական մոտեցման համաձայն՝ բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանությունը վերաբերում է պետության տարածքում ոչ մարդակերտ բոլոր ռեսուրսներին:

- Տնտեսական ինքնիշխանության իրացման կարևորագույն դրսևորումներից են օտարերկրյա ներդրումների ոլորտում պետական միջամտության լիազորությունները: Տնտեսական ինքնիշխանությունը պահպանելու նկատառումներից ելնելով՝ պետությունները ներդրումների ոլորտում պետք է վարեն հավասարակշռված քաղաքականություն:

⁴⁶ ՄՄԿ-ի ԳՄ 14.12.1964 թ., թիվ 1803 (XVII) բանաձև:

- Միջազգային տնտեսական կյանքին պետության իրավահավասար մասնակցության իրավունքը տնտեսական ինքնիշխանության սկզբունքի խնդրահարույց հարցերից է, քանզի տնտեսապես թույլ պետություններին հաճախ հնարավորություն չի տրվում մասնակցելու այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք առնչվում են իրենց շահերին:

Բանալի բառեր – ինքնիշխանություն, ինքնիշխան հավասարություն, տնտեսական ինքնիշխանություն, մշտական և բնական ռեսուրսներ, օտարերկրյա ներդրումների սահմանափակումներ

ГРИГОР ЧОБАНЯН – Экономический суверенитет государств. – Статья посвящена вопросам экономического суверенитета в рамках публичного международного права. В частности, рассматривается историческая эволюция концепции экономического суверенитета, представлены его основные элементы и раскрыты его внутренние и внешние аспекты. Среди прочих ставится вопрос о постоянном суверенитете государства над своими природными ресурсами и экономической деятельностью. Показано, что регулирование в сфере иностранных инвестиций чрезвычайно важно для экономического суверенитета. Также подчеркнуто, что все государства обладают равным экономическим суверенитетом независимо от уровня их развития и мощи.

Ключевые слова: *суверенитет, суверенное равенство, постоянные и природные ресурсы, ограничения на иностранные инвестиции*

GRIGOR CHOBANYAN – Economic Sovereignty of. – The article is devoted to the issues of economic sovereignty in the frameworks of public international law. Particularly, the article addresses the historical evolution of the concept of economic sovereignty, then it represents the main elements of the contemporary economic sovereignty. The article discusses the internal and external aspects of economic sovereignty. Particularly, the author tried to address the issues on permanent sovereignty of a state over its natural resources and economic activity. The author tried to show that the regulations of states in the field of foreign investments is one of the important issues in the realm of economic sovereignty of states. The author also underlines that all the states have equal economic sovereignty regardless of their economic strength.

Key words: *sovereignty, sovereign equality, economic sovereignty, permanent and natural resources, restrictions on foreign investments*

Ներկայացվել է՝ 07.05.2019,
գրախոսվել է՝ 16.05.2019,
ընդունվել է տպագրության՝ 25.07.2019

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Արթուր Վաղարշյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
Артур Вагаршян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
Arthur Vagharshyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
Էլ. փոստ՝ avagharshyan@ysu.am
2. **Ալեքսանդր Կոչուբայան** – ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ավագ իրավախորհրդատու, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վարչական իրավունքի ամբիոնի դասախոս, ոստիկանության ավագ լեյտենանտ
Александр Кочубаев – старший юрисконсульт управления Полиции РА по городу Еревану, преподаватель кафедры административного права образовательного комплекса Полиции РА, старший лейтенант полиции
Aleksandr Kochubaev – Senior Legal Advisor at Yerevan City Department of RA Police, Lecturer at the Administrative Law Department of the Educational Complex of the Police, Police Senior Lieutenant
3. **Օտտո Լուխթերհանդթ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, Համբուրգի համալսարանի պրոֆեսոր
Отто Люхтерхандт – доктор юридических наук, профессор Гамбургского университета
Otto Luchterhandt – Sc. D. in Legal Sciences, Professor, Hamburg University
4. **Նորա Սարգսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ
Нора Саргсян – кандидат юридических наук, доцент кафедры европейского и международного права ЕГУ
Nora Sargsyan – PhD, Associate Professor of the Chair of European and International Law, YSU
Էլ. փոստ՝ nora.sargsyan@ysu.am
5. **Հայկ Կեսոյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Айк Кесоян – кандидат юридических наук, главный специалист юридического департамента аппарата премьер-министра РА
Hayk Kesoyan – PhD, Chief Specialist at the Legal Department of the Office of RA Prime Minister
6. **Աննա Մարգարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
Анна Маргарян – доктор юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ
Anna Margaryan – Sc. D. in Legal Sciences, Associate Professor of the Chair of Criminal Law, YSU
Էլ. փոստ՝ annamargaryan@ysu.am

7. **Նելլի Աշրաֆյան** – ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և սնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ
Нелли Ашрафян – старший прокурор управления по делам о преступлениях коррупционной и экономической направленности Генеральной прокуратуры РА
Nelli Ashrafyan – Senior Prosecutor of Department for Combating Corruption and Economic Crimes of the Prosecutor General’s Office of the RA
8. **Գրիգոր Չոբանյան** – ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ
Григор Чобанян – аспирант кафедры европейского и международного права, ЕГУ
Grigor Chobanyan – PhD Student at the Chair of European and International Law, YSU
Էլ. փոստ՝ grigor.chobanyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Արթուր Վաղարշյան* – Ժողովրդի իշխանության դեմ հնարավոր ոսնձգությունները և ՀՀ իրավունքի համակարգում դրանց ամրագրման հիմնախնդիրները 3
- Артур Вагаршян* – Возможные посягательства на власть народа и проблема их закрепления в системе права Республики Армения
- Arthur Vagharshyan* — The Possible Encroachments on the People’s Power and the Fundamental Problems of their Regulation in the Law System of the Republic of Armenia
- Ալեքսանդր Կոչուբայն* – ՀՀ վարչական դատավարություն. ինստիտուտից՝ իրավունքի ճյուղ 17
- Александр Кочубаев* – Административное судопроизводство: от института до отрасли права
- Aleksandr Kochubaev* – Administrative Proceeding: From Institute to Branch of Law
- Օտտո Լուխտերհանդթ, Նորա Մարգարյան* – Երեխայի իրավունքների կարգավորումը ըստ ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության..... 23
- Отто Люхтерхандт, Нора Саргсян* – Регулирование прав ребенка в Конституции Республики Армения в редакции 2015 г.
- Otto Luchterhandt, Nora Sargsyan* – Regulation of the Rights of the Child in the Constitution of the Republic of Armenia in the Version of 2015
- Հայկ Կեսոյան* – Որոշ նկատառումներ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման վերաբերյալ 37
- Айк Кесоян* – Некоторые соображения по совершенствованию института конституционной ответственности
- Hayk Kesoyan* – Some Considerations on the Improvement of the Institution of Constitutional Responsibility

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ УГОЛОВНОЕ ПРАВО CRIMINAL LAW

- Աննա Մարգարյան* – Տարիքը որպես քրեական պատասխանատվության անհրաժեշտ նախադրյալ..... 44
- Анна Маргарян* – Возраст как необходимая предпосылка уголовной ответственности
- Anna Margaryan* – The Age as a Precondition of Criminal Responsibility

ՔՐԵԱՎԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС
CRIMINAL PROCEDURE

Նելլի Աշրաֆյան – Տուժողի հետ հաշտվելը որպես քրեաիրավական վեճերի լուծման եղանակ 54
Нелли Ашрафян – Примирение с потерпевшим как средство разрешения уголовно-правовых споров
Nelli Ashrafyan – Reconciliation with the Victim as a Means of Solving Criminal-law Disputes

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ
МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО
INTERNATIONAL LAW

Գրիգոր Չոբանյան – Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը..... 70
Григор Чобанян – Экономический суверенитет государств
Grigor Chobanyan – Economic Sovereignty

Տեղեկություններ հեղինակների մասին 84
Сведения об авторах
Information about the Authors

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 26. 07. 2019:
Տպարանակ՝ 100: Չափար՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: